



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material




Ltn

✓ 62.5



1999





ԸՆԹԵՐՑԱԲԱՆ



ԵՐԵՎԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

աշխատանքային

Մեր Վեճակաբանական Գլխից

Գ. Տ. Ա. ԵՒ Ա. Ե.

Գրքայալի Վեճակաբանական

Երրորդ տիպ:



1873

Թ Ի Յ Լ Ի Ս

ՅԳՐԱՆ ՀԱՄԱԸՆԹԵՐՑԱԲԱՆԻ ԵՐԵՎԱՆԵՐԻ ԳՆԻՍ

43781-4-2

Handwritten text, partially obscured by a white sticker.

Handwritten text, partially obscured by a white sticker.

Handwritten text, partially obscured by a white sticker.

Доволено цензурою. 5 Марта 1873 г. Тифлисъ.



28-625

28241-62

(625-60)

# Յ Ա Ն Կ:

Երկու

Պատմաբան	1
Երեխան դաշտումը	9
Խաղացող շներ	10
Օրինաւոր գործածած փողեր	11
հարեւիրտ երեխայ	12
Տխրութիւն	13
Ինչի համար են հարկաւոր փողերը	14
Կարեկից աղջիկ	16
Պապն ու թոռը	18
Անհնազանդ աղջիկ	20
Ճանապարհորդ	20
Քաղաքաւարութիւնը ամենի համար զարդ է	22
Երկու խնձորի ծառ	22
Մեխակներ	24
Տանձի ծառ	25
Կառ անունը հարստութենից առաւել է	26
Գիւղացին և նոսրատասակը	28
Ծաւերը և կաքաւը	29
Երկաթի կտոր	30
Ծերը և երեխաները	31
Ձին և էշը	32
Թանգաղին խոտ	33
Աղաւ	33
Էշը և սոխակը	34
Աղուէսը և կառնկը	35
Ծերն ու երեխաները	36
Մարմնի արատների վրայ չպէտք է ծիծաղել	37
Շներ	39
հաղեր	40
Ծիծեռնակներ	42
Երեխան և շերամը	43
Սեղուն և ճանձները	44
Տաք և սառն արիւն ունեցող կենդանիները	45
Ինչով են դանտաւանում բոյսերը կենդանիները	46
Ինչով են զանազանում բոյսերը հանքերից	47
Արեգակ	48
Ինչօք որդը	49
Տարասան եղանակները	52



## Ը Ն Ք Ե Ր Յ Ա Ր Ա Ն

### Ե Ր Ե Խ Ա Ն Ե Ր Ի Հ Ա Մ Ա Ր:


#### Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Ր Ա Ն:

Երկու շաբթի առաւօտը Գէորգն ու Աղէքսանդրը վաղ վերկացան, աղօթք արին ու քիչ հաց ու պանիր կերան: Վաղուց սպասում էին այդ երեխաները, թէ երբ պէտք է վերջապէս ուսումնարան զնան սովորելու: «Սյուպէս կացէք, ինչպէս որ կը վայելէ խելօք և լաւ երեխաներին, լսեցէք ձեր վարժապետին և լաւ ուշք ու մտքով սովորեցէք», ասաց մայրն իւր այդ երկու որդիերանց ճանապարհ գցելիս: Հայրը տարաւ Գէորգին ու Աղէքսանդրին մէկ մեծ տուն: Երբ որ ներս մտան, դրանց առաջն եկաւ մէկ մարդ, որին ասում են վարժապետ և քաղցրութենով ընդունեց նրանցը: Իմացաւ որ հայրը իւր որդիերանցը բերել է ուսումնարան զիր սովորելու ու խելօք մարդիկ շինելու և շատ հաւանեց, ձեռք քրտեց նրանց գլխին ու տարաւ մէկ սենեակում նստեցրուց երկուսին միասին: Սյուտեղ լիքն էին Գէորգի ու Աղէքսանդրի հասակի երեխաներով, որոնք ուրախացան իրանցն երկու նոր ընկերներ աւելանալու համար:

Դեռ վաղէր ու վարժապետը չէր դաս տալիս աշակերտներին: Երեխաները վարժապետի դուրս գնալուց յետոյ հաւաքուեցան Գէորդի ու Աղէքսանդրի գլխին և ամենքը սկսեցին հարցնել, թէ ո՞ւմ որդիքն են, քանի՞ տարեկան են, որտեղ են կենում, անուններն ի՞նչ և այսպիսի շատ բաներ: Գէորդն ու Աղէքսանդրն այս առաջին անգամն էին տեսնում այսքան երեխաներ միասին ժողովուած ու սովոր չէին այդքան հարցմունքներին միասին պատասխան տալու, այդ պատճառով էլ շփոթուեցան, կարմրեցան ու չէին խմանում, թէ ումը պատասխան տան, ումը չէ: Գլխներին ժողովուած աշակերտներէից մէկ քանիսը մինչև անգամ ծիծաղեցան այդ երկու եղբայրներէ վրայ:

Երբ որ Գէորդն ու Աղէքսանդրը փոքր ինչ սովորեցան աշակերտների հետ վարուիլը, սկսեցին նայել իրանց չորս կողմը. տեսան որ այն սենեակը, որի մէջ որ էին, բաւական մեծ սենեակ է, պատերը մաքուր ներկած. սենեակի մէկ անկիւնումը բարձր բազմեցրած է պատկեր. դրանից քիչ այս կողմը դրած են պատի տակը՝ մէկ սեղան և մէկ աթոռ. սեղանի վրայ կան թանաքաման, աւազաման ու զրիչներ: Գէորդի ու Աղէքսանդրի մօտ նստող աշակերտները հասկացրին սրանց, որ այդ վարժապետի նստելու տեղն է: Իրանք աշակերտները նստած էին երկար աթոռների վրայ ու առաջներին դրած էին հէնց այնչափ երկար սեղաններ, մինչև անգամ ամեն մէկ սեղանն ու աթոռը միմեանց կպած էին: Սեղանների վրայ կային շինած թաւաքամանների դնելու տեղեր, իսկ նրանց մէջը սնդուկների

նման բայ էր դրքերի ու գրասկի զննելու համար Մինչև վարժապետի դպրոց մէկ աշակերտ, որ միւսներինց աւելի մեծ և խելօք էր երևում, կանգնած էր ոտի վրայ ու խնդրում էր բարձր խօսող աշակերտներին ցածրացնել ձայնը, կամ թէ պատրաստել դատը, որ վարժապետի հարցնելիս զխոնան ու երեւները պարզ դուրս գան:



Յանկարծ լրանց գանգակի ձայն լսուեցաւ ու բոլոր երեխաները զնացին հանդարտ իրանց տեղերը նստեցան: Մէկ աշակերտ, որ շատ բարեկամացաւ Վեորդի հետ ու մօտն էր նստած, հասկացրուց նրան, թէ այդ գանգակի անձերը վարժապետի դպրոց նշանն է. այդ պատճառով էլ ամենքը, որ լսեն գանգակի ձայնը թէ չէ, պէտք է լրանց տեղը զնան, նստեն հանդարտ ու պատրաստուին դասատուի: Ֆոքը ժամանակից յետոյ սենեակի դռները բացուեցան ու ներս եկաւ գիրքը ձեռին վարժապետը. բարովից աշակերտներին. աշակերտներն էլ նրան տեսան թէ չէ, ամենքը տեղերիցը վերկացան, քաղաքապարի կերպով բարովեցին վարժապետին ու յետոյ միասին դարձան պատկերի կողմը և աշակերտներինց մէկը բարձր ձայնով և հանդարտ աղօթք ասաց ու խնդրեց մեր Յտեղծող Աստուծուց, որ իրանցը շնորհք տայ լաւ սովորելու և խելօք ու բարի մարդիկ դառնալու, որ կարողանան Աստուծու բոլոր հրամանները կատարել:

Աղօթքի ժամանակը Վեորդն ու Վղէքսանդրը միասնորի պէս ոտի վրայ կանգնեցան ու տաք սրտով խնդրեցին:

բում էին Աստուծուն, որ օրհնէ իրանց և շնորհք սայ  
լաւ սովորելու: Աղօթքից յետոյ ամենքը նստեցան ի-  
րանց տեղերը, իսկ վարժապետը դուրս կանչեց իրա մօտ  
այս նոր աշակերտներին: Նա հարցուց զրանց անուն-  
ները, թէ քանի տարեկան են, թէ դիտո՞ն կարդալ ու  
զրել, թէ ո՞վ են զրանց ծնողները և թէ նրանց են կե-  
նում: Յետոյ այդ երկուսին կարդալ տուեց մէկ գրքից,  
անգիր մէկ երկու աղօթք ասել տուեց և տախտա-  
կի վրայ էլ զրել տուեց մէկ երկու ատոյ: Չորրորդ դի-  
տեր կարդալ, լաւ խմանում էր աղօթքներ և բաւա-  
կան լաւ էլ զրում էր: Վարժապետն այդ բանին շատ ու-  
րախացաւ: Աղէքսանդրն իւր եղբօրից թոյլ էր թէ կար-  
դալուն ու թէ գրելումը: Վարժապետն այս երկու ա-  
շակերտի անուններն էլ զրեց մէկ գրքի մէջը, որտեղ  
գրուած էին միւս բոլոր աշակերտների անունները և որին  
ասում են ցուցակ:

---

Վարժապետը յետոյ ասաց Չորրորդին և Աղէքսանդ-  
րին, թէ ես շատ ուրախ եմ, որ դուք գոնեա կարդալ  
ու գրել դիտեք. փոքրիշատե, երևում է որ դուք ձեր  
տանը ժամանակը դուր չէք անցկացրել: Շարունակե-  
ցէք լաւ սովորել այստեղ եղած ժամանակը, ուշք ու  
մտքով լսեցէք միւս աշակերտների կարդացածը, լսե-  
ցէք նմանապէս, թէ ի՞նչ եմ ես հարցնում և ի՞նչպէս եմ  
հասկացնում, մտածեցէք ձեր կարդացածի վրայ և մէկ  
խտրով ամեն բան, ինչ որ լինում է այստեղ, մի՛ թող-  
նէք առանց ուշադրութեան:

Պարս սկսուեցաւ կարգալուց: Վարժապետը պահանջում էր, որ աշակերտներն ասին իրանց դասը բարձր և հանդարտ. երբ որ աշակերտներից մէկը սխալվում էր, վարժապետը ուրախութենով ուղղում էր նրա սխալը. բայց, ինչպէս երևում էր, վարժապետին միևնոյն բանի երրորդ և չորրորդ անգամ ուղղելը հաւանակ չէր: Ամեն դժուար բան վարժապետը խիցն մեկնում էր և շատ ուրախանում էր, որ իրանից հարցնում էին աշակերտները չըհասկացած բաները:

Երբ որ աշակերտներից մէկը կարգաց մէկ քանի տող, վարժապետը հարցրուց և պահանջեց, որ այդ կարգացածն ինքը յետ պատմէ: Այլ որ լսում էր և կարգում ուշադրութենով, նա լաւ էր պատասխան տալիս. բայց ո՞վ որ չէր լսում, նա չէր խմանում թէ ինչ ասէ: Գիտացողներին վարժապետը դովում էր, բայց չը գիտացողների վրայ բարկանում էր: Երբ որ կարգալը վերջացրին, աշակերտները հանեցին իրանց տետրակները և գրիչները: Վարժապետը գրեց մեծ սև տախտակի վրայ մէկ քանի հարցեր և հրամայեց աշակերտներին, որ պատասխանները գրեն իրանց տետրակներում: Գէորդը և Աղէքսանդրն իրանց հետ թուղթ և գրիչ չէին բերել. այդ պատճառով էլ նրանք չըկարողացան գրել: Աշակերտներից մէկը մեծ տախտակի վրայ էր գրում պատասխանները կախձով: Վարժապետն ուղղեց մէկ աշակերտի գրուածը և հրամայեց սր բոլորն էլ այնպէս ուղղեն: Գովեց այն աշակերտներին, որոնք որ մաքուր ունէին պահած տետրակները և գրքերը, բայց նեղացաւ

այն աշակերտներն վրայ, որոնք կամ տեղափոխուցր իւր  
լուծ չունէին կամ զըքելը կեղտոտել էին:

Երբ որ գրելու վերջացրին, վարժապետը հարցրուց  
նրանց այն օրուան դասը: Մէկ առակ էր այն օրուան  
դասը: Շատերը շատ լաւ պատասխան տուին անօխալ,  
սրարդ և բարձր և ամէն բառ մեկնում էին, ինչոր վար-  
ժապետը հարցնում էր: Նրեում էր, որ աշակերտները  
լաւ լսել էին վարժապետի ասածը և լաւ էլ սերտել  
էին անգիր առակը: Այդպէս լաւ դաս ասող աշակերտ-  
ներին վարժապետն ասում էր աշխատասէր: Բայց այն-  
պիսի ծոյրք էլ կային, որոնք որ ոչինչ չէին գիտի:  
Գէորգն ու Սդէքսանդրը նկատեցին, որ այն աշակերտ-  
ները չէին իմանում դասը, որոնք ուշադրութենով չէ-  
ին լսում վարժապետին:

Փոքր ժամանակից յետոյ զանգաղի ձայն եկաւ: Նոր  
աշակերտները չիմացան էլ, թէ այնպէս շուտ ինչպէս վեր-  
ջացաւ դասը: Շատ նոր բան իմացան նրանք և որով-  
հետեւ լաւ ուշք ու մտքով էին լսել վարժապետի ասա-  
ծը, այն պատճառով էլ շատ հեշտ էր երևում նրանց դա-  
սի պատրաստելը: «Ահա ի՞նչ է նշանակում դասատուն  
մէջ ուշադրութիւնը», ասացին Գէորգն ու Սդէքսանդրն  
իրանց մտքումը և ահա ինչի՞ համար է պահանջում մեր  
վարժապետը, որ մենք ուշադրութենով լսենք նրա  
ասածը:

Դասից յետոյ վարժապետը կանչեց իրա մօտ Գէորգին ու Աղէքսանդրին և հարցաւոց թէ ինչ նկատուցին նրանք դասի ժամանակը: Գէորգն ու Աղէքսանդրը պատմեցին իրանց տեսածն ու լցածը: Վարժապետը դովեց երեխաներին, որ ուշք ու մտքով են լսել ամեն բան և սասց նրանցը, թէ ամեն ժամանակ այնպէս ուշադրութեամբ կը լսեն իրա սասձը, շատ կարճ ժամանակուձր կարող են լաւ աշակերտ դառնալ:

Միւս դասին եկաւ քահանայ: Նա պատմեց երեխաներին մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի ծնունդը, թէ ինչպէս Աստուծու Հրեշտակն իմաց արաւ հովիւներին նրա ծնունդը, թէ ինչպէս այն հովիւները դնացին, տեսան ակառօի մէջ Սուրբ Կոյս Մարիամին, Յովսէփին և Երեխային: Գէորգն ու Աղէքսանդրը մեծ ուշադրութեամբ լսում էին քահանայի պատմածները: Սրբազան պատմութեան դասից յետոյ վայելչագրութեան դասն էր: Գէորգի և Աղէքսանդրի բնկերներից մէկը տուեց նրանց մէկ թերթ թուղթ և մէկ մէկ հաս գրիչ: Նրանք թէպէտ շատ լաւ էլ չէին գրում, բայց վարժապետը տեսնելով նրանց աշխատութիւնը, սասց որ շուտով կարող են լաւ գրել:

Աւերջին անգամ խօսեցին զանգակը և դասերն էլ աւարտուեցան: Աշակերտները շատագով վեր քաղեցին իրանց գրքերն ու տետրակները, դարսեցին հարգելի մէջը և դնացին իրանց տները: Գէորգն ու Աղէքսանդրն էլ ի-

բանց հարևան աշակերտներն հետ զնացին դէպի իրանց  
տունը: Տանը սպասուած էր նրանց մայրը ճաշի: Նստե-  
ցան հաց ուտելու և այն օրուան աշխատանքից յետոյ  
չատ դուր եկաւ նրանց հացը: Արեւիկեան մայրը հար-  
ցրուց նրանցը, թէ ի՞նչ շինեցին նրանք դաստան  
մէջը, ի՞նչ ատային վարժապետները և ի՞նչ դասեր  
տուին նրանցը միւս օրուան համար: Մայրը խոստացաւ  
հէնց միւսը օրը առնել նրանց համար բոլոր հարկա-  
ւոր պքերը, գրիչները և թուղթը: Մոմերը վառեցին  
թէ չէ, երեսանները նստեցան դասը պատրաստելու և  
կէս ժամուճը բոլորովին դիտէին դասը, որովհետեւ շատ  
լաւ լսել էին իրանց վարժապետի ասածը:

Գէորդն ու Աղէքսանդրը մէկ շաբաթ զնուած էին  
դասատուն և սովորուած էին վարժապետի սուտած դու-  
սերը: Այնպէս որ եկաւ, նրանք շատ ուրախ անցկացրին  
օրն այն մէկ շաբաթուան աշխատելուց յետոյ: Շատ  
ուրախ էին երեսանները դեռ շաբաթ երեկոյեան, երբ  
խմացան որ միւս օրը չըպէտք է զնան ուսումնարան  
այն պատճառով ուրախացան, որ ողջ օրը կարող էին  
տեսնել իրանց մօրը: Արեւու շաբաթէ առաւօտը, թէպէտ  
փոքր ինչ ծանր էր թվում նրանց ուսումնարան զնալը, բայց  
Գէորդն ու Աղէքսանդրը, որովհետեւ խելօք երեսաններ էին,  
շուտով զնացին իրանց դասի. նրանք սովորեցան շու-  
տով այն բանը, որ ամեն օրինաւոր մարդ պէտք է աշ-  
խատանքից առաջ հանդատանայ և հանստանալուց յե-  
տոյ նորից աշխատէ:

ԵՐԵՒԱՆ ԴԱՇՏՈՒՄԸ:

Մէկ փոքր երեխայ կար: Հայրն ու մայրն ուղարկեցին նրան ուսումնարան: Շատ սիրուն առաւօտ էր: Արեգակը նոր դուրս էր եկել ու աշխարհը լուսաւորում, թռչուններն ուրախ ուրախ երգում էին իրանց գեղեցիկ երգերը, երեխայի սիրտը փոխուեցաւ. այս բաները որ տեսաւ, կամեցաւ խաղալ ու չըզնալ ուսումնարան: Այս կողմն այն կողմը նայեց, տեսաւ որ մեղրաձանձը թռչոտում է ծաղիկների վրայ:— Մեղրաձանձ, ասաց երեխան, արի, խաղանք միասին:— Չէ, պատասխան տուեց մեղրաձանձը, խաղալու համար ժամանակ չունիմ, ես մեղր պէտք է ժողովեմ:

Անցկացաւ երեխան ու մէկ շուն տեսաւ:— Ա՛յ շուն, ասաց նրան երեխան, արի, փոքր ինչ խաղանք:— Չէ, պատասխան տուեց շունը, ես ժամանակ չունիմ, պէտք է գնամ իմ տիրոջ տունը պահեմ, որ գողերը ներս չքաննեն:

Փոքր ինչ որ հեռացաւ այն տեղից երեխան մէկ փոքր թռչուն տեսաւ, որ կաուցով խոտ էր տանում:— Ա՛յ թռչուն, ասաց նրան երեխան, թող այդ խոտերը, գընանք, խաղանք:— Չէ, պատասխան տուեց թռչունը, ես այժմ խաղալու գլուխ չունիմ. գեռ շատ խոտ, բուրդ ու ցեխ է հարկաւոր իմ բունը շինելու համար:

Երեխային պատահեցաւ յետոյ մէկ եզ:— Ա՛յ սիրուն եզ, ասաց երեխան, արի, փոքր ինչ խաղանք:— Չէ, պատասխան տուեց եզը, խաղալու ժամանակ չունիմ, ես պէտք է գետինը վարեմ, որ յետոյ մարդիկ ցորեան ցաննեն և ուտելու հաց շինեն իրանց համար:

— Արեմն, ոչոք չէ կամենում խաղալ ինձ հետ, ասաց ինքն իրան երեխան, երևի ինձ համար էլ լաւ չէ ժամանակ կորցնելը. այժմ ամենքը բան են շինում, ես ինչի՞ եմ ծուլանում, ասաց ու գնաց ուսումնարան:

---

ԱՌԱՅՆՐ:

Այս օրուան դործն եղուցուան մի թողնիլ:

Աշխատողը քաւցած չի մնալ:

Աշխատութիւնը լեռներ է հաւատարում:

Ժամանակն արծաթ է:

---

ԽԱՂԱՅՈՂ ՇՆՆՐ:

Տիղրանը կանդնած էր պատուհանի մօտ և նայում էր դուրսը բահումն իրանց մեծ շանը: Այս մեծ շան մօտ եկաւ մէկ փոքր շուն ու սկսեց հաջիւլ նրա վրայ, բռնում էր նրա օտները, ախանջը, պոչը ու մէկ խօսքով շատ անհանգիստ էր անում մեծ շանը: — Համբերէ փոքր ինչ, ասաց Տիղրանը, դա ցոյց կը տայ քեզ: Բայց փոքր շունն էլ իրանն էր անում և մեծ շունը հանդարտ հանդարտ նայում էր նրան:

— Տեսնում ես, ասաց հայրը Տիղրանին, որ մեր մեծ շունը քեզանից բարի է: Երբ որ քեզ հետ սխտում են խաղալ քո փոքր եղբայրներն ու քոյրերը, միշտ այնպէս է վերջանում բանը, որ դու նրանց վրայ բարկանում ես ու անպատիւ անում: Բայց մեր մեծ շունը զիտէ, որ մեծի և ուժեղի համար ամօթ է փոքրի ու թոյլի անպատիւ անելը:

---

ԱՌԱՅ:

Վատ ասողին լաւ լսող:

ՕՐԻՆԱԻՈՐ ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ՓՈՂՆԵՐ:

Մէկ աշխատասէր դարբին, թէպէտ շատ լաւ աշխատանքի մէջն էր, բայց չափաւոր էր սպարում: Թէ ինքը և թէ նրա որդիքն ու կինը հասարակ շորեր էին հագնում ու շատ հասարակ կերակուրներ ուտում:

— Ի՞նչ ես անում քո փողերը, հարցրուց այս դարբինն մէկ անգամ նրա հարեան վաճառականը:

— Ի՞նչ պէտք է անեմ, պատասխան տուեց դարբինը, փողերիս կէտը շահով եմ տալիս, կիսովն էլ պարտքերս եմ վճարում:

— Ի՞նչ ես ասում, կարապետ, խօսքը կտրեց վաճառականը, ես իմացել եմ, որ դու ոչ պարտքեր ունիս, ոչ էլ շահով տուած փողեր:

— Սխալվում ես, պատասխան տուեց դարբինը, ես երկուան էլ ունիմ: Ահա պատմեմ, դու լսէ: Այն փողերը, որ ես տալիս եմ իմ ծեր հօրն ու մօրը, իմ պարտքն է, որ վճարում եմ, և այն փողերը, որ մխտում եմ որդիքերանցս ուտում տալու համար, իմ շահով տուած փողն է: Երբ որ ես կը ծերանամ և որդիքս էլ հասակը կառնեն, այն ժամանակը կըստանամ ես ոչ թէ միայն նրանց վրայ մխտած փողերս, այլ շահն էլ հետք, որովհետեւ գիտեմ, որ որդիքս կը կարողանան իրանց պարտքը վճարել: Ինչպէս իմ ծնողները փող չըխնայեցին իմ ուսման համար, ես էլ նմանապէս չեմ խնայում որդիքերանցս համար: Եւ որովհետեւ ես իմ պարտականութիւն եմ համարում ծնողներիս մխտածը վճարել, այնպէս էլ, յոյս ունիմ, որդիքերանցիցս ստանալ իմ վարձըն այն ժամանակ, երբ որ նրանք կատարեալ մարդիկ կը դառնան և դործի կը կանգնեն:

ԱՌԱՆՆԵՐ.

Պարտքը տալով, մեղքը լալով :

Ապրի որդատերը, չապրի դրամատերը :

Ասել են՝ առ ու ասէր, ոչ թէ՛ առ ու կուլ :

Որդին որ բռնումը ձուածեղ շինէ, մօր պարտքե-

րիցն էլ չէ կարող դուրս դալ :

Ինչ որ բրդես այն կը դայ գրալը :

ԲԱՐԵՍԻՐՏ ԵՐԵՄԱՑ :

Ջրօրհնէքի օրը, ճաշի ժամանակին, մէկ հարուստ փաճառահանի որդի Պետրոսը խօսում էր դուրսն իրանց հարեան խեղճ գիւղացու որդու հետ: Ծառան դուրս եկաւ ու Պետրոսին ճաշի կանչեց:

— Գնաս բարով, ասաց Պետրոսին իւր աղքատ ընկերը, ես այստեղ կրագասեմ՝ քեզ :

“Բայց մի՞թէ դու չես գնալ հայ ուտելու, հարցրուց Պետրոսը:

— Ոչինչ չունենք ուտելու մեր տանը, ախ քաշելով պատասխան տուեց գիւղացու որդին:

Պետրոսը գնաց իրանց տուն, փաթաթուեցաւ հօրը և ասաց — սիրելի հայր իմ, խնդրում եմ ատէք ինձ, ի՛նչ արժ են այն շորերը, որ խոստացաք ինձ համար տունել: — Երեսուն մանէթ, պատասխան տուեց հայրը:

— Սիրելի հայր, ես խնդրում եմ, եթէ կարելի է շորերիս փոխանակ փողերը տաք ինձ, որովհետեւ շատ հարկաւոր է իսկ շորեր ես շատ ունիմ:

Հայրը, որդու բնութիւնը գիտենալով, համաձայնե-

ցաւ: Պետրոսը ստացաւ փողերը թէ չէ, ճաշը չը կերած  
դուրս վազեց, տարաւ այն փողերը և տուեց իւր խեղճ  
ընկերոջ ճնոգներին:

ԱՌԱՅՆԵՐ.

Տ՛ուր ոսկէ գոտկաւորին, մի՛ քննիր:  
Կուշար քաղցածին կամաց կը բրդէ:  
Ինչտեղ փորդ չի կշտանալ անօթութիւնդ մի՛ յայ-  
նիր:

ՏԵՐՈՒԹԻՒՆ:

ՍԱՐԳԻՍ: Ստեփան, ի՞նչ էիր շինում երեկ:  
ՍՏԵՓԱՆ: Ոչինչ, ես շատ ախուր էի:  
ՍԱՐԳԻՍ: Ինչի՞ էիր ախուր:  
ՍՏԵՓԱՆ: Միայն էի մնացել, այն պատճառով:  
ՍԱՐԳԻՍ: Ուրեմն դու ինքդ ես եղել քո ախրա-  
թեան պատճառը միայնութեան ժամանակը:  
ՍՏԵՓԱՆ: Ի՞նչ շինեմ ես միայն մնացած ժամա-  
նակս: Ի՞նչպէս անցկացնեմ ժամանակը:  
ՍԱՐԳԻՍ: Ժամանակի անցկացնելու հետ քո կեան-  
քըն էլ հետն է անցկիւնում: Ինչի՞ ես ուզում զուր  
տեղը անցկացնել ժամանակը, անբան, անդործ. չես գի-  
տի, որ մեր կեանքը շատ կարճ է:  
ՍՏԵՓԱՆ: Ի՞նչ անես, երբեմն ժամանակը շատ եր-  
կար է թվում:  
ՍԱՐԳԻՍ: Այդ բանի պատճառն այն է, որ մենք  
չենք իմանում ժամանակի օրինաւոր գործածելը:

ՍՏԵՓԱՆ: Ի՞նչ ես ասում, խնդրեմ ատն ինձ, տեսնեմ, ի՞նչ շինեմ ես այն ժամանակը, երբ որ միայն տանըս նստած եմ և սիրոս չէ տալիս բան շինելու:

ՍԱՐԳԻՍ: Վեր առ մէկ դործ և սրարապիր:

ՍՏԵՓԱՆ: Շատ բարի, եթէ սէր ունենամ բան շինելու:

ՍԱՐԳԻՍ: Բանը սկսելն է: Որքան կարող ես շուտով և սրտով սկսէ՛ բան շինելը. իհարկէ առաջ փոքր ինչ կրնեղանաս, բայց ոչինչ: Սիրող մի՛ կոտորիս: Գանձի երկար սրարապիս, այնքան կրթեթեանայ դործդ և այնքան լաւ կը շինես: Այդպէս դործով սրարապիլումն այնպէս կանցկենայ ժամանակը, որ դու էլ չես լմանալ: Բացի այն որ դործ շինեցիր, սիրող էլ կուրախանայ: Դու փորձէ՛ և կրտսնես, որ ճշմարիտ եմ ասում քեզ: Տխրութիւնը միայն աշխատանքով և դործ շինելով կարելի է փակցնել:

ԱՐԱՐ.

Պարապ մնալուցը դատարկ աշխատելը լաւ է:

ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ ԵՆ ՀԱՐԿԱԿՈՐ ՓՈՂՆԵՐԷ:

Մէկ ուսումնարանումը բաւական հասակով աշակերտ կար, որ շատ սատիկ փող էր սիրում: Ուսումնարանումը նա միշտ փողերի վրայ էր մտածում և խօսում: Շատ անգամ նա փողեր էր բերում ուսումնարանումն, իրա ընկերներին ցոյց տալիս: Վերջն այս փոքրիկ ժլատը զանազան բաներ էր ծախում: Ամեն բան նա սպարաստ էր վաճառելու. նրա խելքն ու միտքը փո-

դու մն էր: Այս աշակերտի փողատիրութիւնն իրա վարժապետին էլ յայտնի էր:

Մէկ տօն օր կանչեց վարժապետն այս աշակերտին և առաւօտը դուրս գնացին նրանք անտառների ու դաշանրի կողմն մանդարու: Ախօրին նրանք նստեցան ծառի տակը հանգստանալու: «Յս քաղցած եմ, ասաց աշակերտը:— Այստեղ ոչինչ չըկայ, պատասխան տուեց վարժապետը. գնանք մէկ ուրիշ կողմ»:

Դառաւ երևիոյետն հինգ ժամը: Ճանապարհին տեսան նրանք մէկ հին մօտոռու: Մատուռի դռանը նստած էր մէկ աղքատ և ողորմութիւն էր խնդրում: Աղքատը դրած ունէր իւր մօտ իրա պարկը, որի մէջ մէկ քանի կտոր հաց կար: Վարժապետը տուեց աղքատին մէկ քանի կուպէկ, նայեց աշակերտին և հարցրուց թէ. «դու ոչինչ չես տալ աղքատին?»:

— Ես իմ բոլոր փողերը զլանն կըտամ, ասաց աշակերտը, թէ դա ինձ մէկ կտոր հաց կըտայ: Այս խօսքերն որ լսեց աղքատը, վերառաւ իւր պարկը, տուեց երկսային և ասաց. «վեր առ, որդի, եթէ քաղցած ես: Ար, ինչքան էլ կամենաս, ես փող չեմ առնիլ քեզանից. ես դիտեմ, փորձելեմ թէ ի՞նչ դժուար բան է քաղցածութիւնը»: Երկսայի աչքերն արտասուքով լցուեցան. թէպէտ շատ քաղցած էր, բայց ամօթից չուզեց ուտել հացը:

Յետոյ վարժապետը վերառաւ, տարաւ աշակերտին դէպի տուն: Ճանապարհին վարժապետը հանդարտ հանդարտ ասաց իրա աշակերտին:— Այժմ տեսնում ես, որդի, թէ ինչն համար է հարկաւոր փողը: Ի՞նչ օղուտ, որ փողերդ պահած ունենաս սնդուկումդ. կամ ծոցու-

միտ: Քաղցած ժամանակդ դու իհարկէ չես կարող փողերդ ուտել: Ահա՛ դու փորձեցիր, որ քո բոլոր փողերը տալիս էիր մէկ կտոր հացի փոխարէն, բայց աղքատը չը վերառաւ փողերդ. նա քեզ խղճաց և առանց փողի տալիս էր քեզ հացը: Կարո՞ղես դու սրանից յետոյ անգուժ լինիլ աղքատների ու հացի կարօտների վրայ: Քաղցածութիւնը շատ դժուար է: Գու և՛ ժխատ չը լինես, կարող ես շատ անգամ նեղացածներին քաղցածութենից ազատել: Ժխատը նա է, ով որ իր ունեցածիցն օգուտ չէ քաղում, բայց անդադար աշխատում է շատացնել իրա հարստութիւնը: Ժխատներն ատելի են Աստուծուն և մարդկանց էլ...:

Երեւայի վրայ մեծ աղբեցութիւն ունեցան այս բառերը: Հանեց նա իւր բոլոր փողերը և տալիս էր վարժապետին, որ նա բարի գործերի վրայ գործածէ այն փողերը: Բայց վարժապետը չը վերառաւ և ասաց աշակերտին:— Գու ինքդ գործածա՛ քո փողերը բարի բաների վրայ և սրանից յետոյ փողերին մեծ նշանակութիւն մի՛ տար: Բանի շատ փող ունենաս, այնքան ատելի բարերարութիւն պէտք է անես:

---

ԱՅՍ.

Իւր դպրած ու իւր կերած:

ԿԱՐԵԿԻՅ ԱՂԶԻԿ:

ՄԱՅՐ: Ի՞նչ արիր փողերդ:

ՇՈՒՇԱՆ: Ես ուրիշին տուի, մայր իմ:

ՄԱՅՐ: Ո՞ւր է տուիր:

ՇՈՒՇԱՆ: Մէկ չար երեխային:

ՄԱՅՐ: Որ էլ չարութիւն չանէ:

ՇՈՒՇԱՆ: Հրամբերես, մայր իմ, որ էլ չարութիւն չանէ: Մայր իմ, թռչուններն էլ Աստուծունը չեն:

ՄԱՅՐ: Իհարկէ, որդի, թռչուններն էլ Աստուծու ստեղծած են, ուրեմն նրանք էլ Աստուծունն են:

ՇՈՒՇԱՆ: Բայց այն չար երեխան բռնել էր մէկ փոքր թռչուն և ուզում էր ծախել: Ինչ՞ թռչունը Լալիս էր, ծփում էր, բայց երեխան կտուցը հուպ էր տալիս և խեղդում: Երևի այն երեխան վախենում էր, որ Աստուած չիմանայ նրա ձայնն ու իրան չըպատժէ:

ՄԱՅՐ: Յետոյ դու ի՞նչ արիր:

ՇՈՒՇԱՆ: Ես երեխային փող բաշխեցի. վեր առայ թռչունն ու թողի: Աստուած իհարկէ կրհաւանէ իմ արածը:

ՄԱՅՐ: Իհարկէ կրհաւանէ քո կարեկցութիւնը:

ՇՈՒՇԱՆ: Շատ կարելի է, որ այն երեխան կարիք ունէր և այն պատճառով ծախեց թռչունը:

ՄԱՅՐ: Ես էլ այդպէս եմ կարծում:

ՇՈՒՇԱՆ: (Իւր քոյր Մարթային) Ուրեմն շատ լաւ եմ արել, որ իմ բոլոր փողերը տուի նրան:


ՄԱՐԹԱ: (Իւր մօրը) Գիտէ՞ք, մայր իմ, մենք վէճ ունենք: Շուշանն այն երեխային տուեց իւր բոլոր փողերը. մէկ չըհարցրեց, թէ ի՞նչ արժէ թռչունը: Ես ստամեմ, որ սա գինը պէտք է հարցրել էր անպատճառ:

ՇՈՒՇԱՆ: Սեզանից որի՞ վէճը ուղիղ է, մայր իմ:

ՄԱՅՐ: Դու բոլորովին ուղիղ չես, որդի: Եթէ այնտոյ մէկ ուրիշ այնպիսի երեխայ էլ էր պատուհան քեզ թռչունը ձեռին, ի՞նչ պէտք է անէիր. կուզէիր թրջունն ազատել, բայց փող չէիր ունենալ:

29-14-62

138



ՇՈՒՇԱՆ: Այն ժամանակ ես քեզանից կուզէի,  
մայր իմ:

ՄԱՅՐ: Ես էլ որ չէի ունեցել:

ՇՈՒՇԱՆ: Յետոյ չեմ գիտի:

ՄԱՅՐ: Պէտք է չարիաւոր լինիս, որ կարողանաս ա-  
ւելի բարերարութիւն անել: Պէտք է զինք հարցրել էիր  
ու այնպէս էիր առել թռչունը: Ի՞նչ տեսակ թռչուն  
էր այն թռչունը:

ՇՈՒՇԱՆ: Ես չը հարցրի, մայր իմ: Զէ՞ որ դուք ա-  
սացիք ինձ, որ հարկաւոր չէ հարցնել եւ խմանալ նրա  
անունը, ու մի որ բարերարութիւն եմք անում: Այն  
պէս չէ:

ՄԱՅՐ: (Ուրախանալով համբուրում է Շուշանին)  
Այդպէս է, իմ հոգեակ:

ՇՈՒՇԱՆ: Ար տեսել էիր թռչունին թողած ժամա-  
նակը. . . ինչո՞ւն ուրախութենից չէր կարողանում թըռ-  
չել: Ես այն չար երեխային խնդրեցի, որ էլ թռչուն  
չբռնէ, մեղք է:

ՄԱՅՐ: Միշտ, իմ սիրելի, այդպէս բարի եւ կարե-  
կից կացիր: Աստուած էլ քեզ չի մոռանալ, այլ մէ-  
կի փոխանակ տամսոյ կը վարձաարէ:

ԱՌՍԵՆԵՐ.

Պատիկ է ու չափիկ է:

Ինքը չկայ թիզ ու կես, արարմունքը զպ ու կես:

ՊԱՊՆ ՈՒ ԹՈՒՆ:

Մէկ ծեր մարդ կար մէկ քաղաքումը: Այնպէս

Տերացել էր, որ ոչ աչքն էր կտրում և ոչ ծնկներումն էր ոյժ մնացել. խեղճի ականջներն էլ ծանրացել էին: Ճաշին կերակուր ուտելիս Տերը չէր կարողանում զգալն օրինաւոր բերանը դնել և ամեն անգամ կեղտոտում էր սեղանը: Այս Տեր մարդու որդին ու հարսը (որդու կինը) միշտ զգուշով էին նայում նրան կերակուր ուտելիս: Վերջը նրանք չհամբերեցին և այն Տերին առանձին տեղ տուին անկիւնումը հաց ուտելու համար: Նա մէնակ անկիւնումը նստած հաց էր ուտում, իսկ միւսները սեղանի վրայ: Մէկ անգամ հաց ուտելիս Տերի ձեռիցը վէր ընկաւ կաւեայ ամանն ու կտրուեցաւ: Շատ անպատիւ խօսքեր ասաց հարսն այն Տերին, բայց նա համբերեց, պատասխան չըտուեց: Բետոյ կաւեայ ամանի փոխանակ փայտեայ աման առանձնի համար և նրանով էին կերակուր տալիս խեղճին:

Մէկ քանի օրից յետոյ այն Տերի ուխտը տարեկան թողը նստած էր դուրսը և փայտ էր տաշում:

Նրա ծնողները որ տեսան, հարցրեցին, թէ ի՞նչ ես շինում, որդի: Նա, թէ ես փայտեայ աման եմ շինում իմ հօր ու մօր համար, որ նրանցը Տերացած ժամանակը կերակուր ուտեցնեմ նրանով: Երեխայի հօրն ու մօր վրայ մեծ տպաւորութիւն արեցին այս բաները. նրանց լացն եկաւ և այն օրից յետոյ Տեր մարդուն միշտ իրանց հետ անբաժան ունէին թէ ճաշին և թէ ամեն ժամանակ և շատ պատուով էին պահում մինչև մահը:

ԱՌՄԵ.

Քանի փոքր էի՝ մեծիցն էի վախենում, երբ որ մեծացայ՝ փոքրից:

ԱՆՀՆԱԶԱՆԻ ԱՂՋԻԿ:

Մէկ տան մէջ կենում էր մէկ որբեայրի կին: Նա մէկ սիրուն աղջիկ ունէր, անունը Մարիամ: Մէկ առաւօտ մայրը պէտք է դուրս գնար տանիցը: Դուրս գնալիս նա ասաց իրա աղջկան, թէ «որդի, այս սնտուկին ձեռքը չտաս. բանալիքն այստեղ եմ թողնում, փորձելու քո հնազանդութիւնը, տեսնեմ կրկատարես խօսքս, թէ չէ»: Մարիամը, թէ «ի՛նչ էք հրամայում, մայր իմ, ի՛նչպէս չեմ կատարի ձեր հրամանը, միամիտ կացէք»: Մայրը որ դուրս գնաց թէ չէ, աղջկայ սիրտը սկսեց թռթռալ: Բանալիքն այնտեղ, սնտուկն էլ այնտեղ. սիրտը չհամբերեց և կամեցաւ տեսնել, թէ ի՛նչ կայ սնտուկումը:

Սնտուկը բաց արեց թէ չէ, մէկ թռչուն դուրս թռաւ. այն տեղից. այս կողմն այն կողմն ընկաւ, ինչ որ կար սեղանի վրայ, բոլորը վերածեց, կտորացեց, պատուհանը կտորեց ու դուրս թռաւ: Մարիամը մեաց տարակուսած, բայց էլ ի՛նչ կօգնէր:

ԱՌՍԵ.

Ստողին էլ լսող պիտի:

ՃԱՆՍԱՊԱՐՀՈՐԴ:

Մէկ հարուստ մարդ քաղաքիցը հեռու ճանապարհի վրայ շատ մեծ ու գեղեցիկ պալատի նման տուն ունէր. այդ շինութեան զարդարելու համար ոչինչ չէր խնայում, բայց աղքատներին ողորմութիւն չէր տալիս:

Մէկ անգամ մէկ խեղճ ծեր մարդ դադրած եկաւ այլ շինութեան մօտ և էլ ոյժ չունենալով իր ծանապարհը շարունակելու, խնդրեց այն հարստին, որ իրան իրաւունք տայ գիշերն այնտեղ քնելու: Հարուստը հնարաւորութենով աղքատին պատասխան տուեց, թէ իւր տունը ոչ իջեան է և ոչ էլ հիւրանոց: Ենին ասաց, որ կամենում է երեք բան հարցնել այն հարստին, խնդրելով, որ նա պատասխան տայ: մտադր զմայ իրաւ

Մեծատունը համաձայնեց:

Ծերը հարցրեց — Ո՞վ էր քեզանից անաչ այս տանը կենում:

«Իմ հայրը, պատասխան տուեց մեծատունը:

— Քո հօրից անաչ:

«Իմ պապը»:

— Իսկ քեզանից յետոյ ո՞վ պէտք է կենայ այս տանը:

«Յոյս ունիմ որ իմ որդիքը»:

— Ուրեմն, ասաց ծերը, եթէ դուք ամենքդ էլ այստեղ բնակուել էք և կրճնակուիք մէկգմէկուց յետոյ մէկ քանի տարի, սպա հիւրեր չէք դուք. ձեր տունն էլ խաւապէս հիւրանոց և իջեան չէ. մի՛ փշացնի իզուր այս տանը զարդարանքի համար ահագին փողեր, որ քեզ համար կարճ ժամանակուան բնակարան պէտք է լինի, այլ օգնութիւն տուր շունեցողներին ու աղքատներին և Աստուած քեզ կվարձատրէ այն կեանքումը»:

Մեծատունն ամաչեց, տեղ տուեց այն դիշերը ծերին քնելու և այնուհետև օգնութիւն էր տալիս չքաւորներին:

ԱՌԱՐՆԵՐ.

Աշխարհից ով ինչ է տարել:

Աշխարհի կայքը աշխարհում կը մնայ: Եւ զճարտար  
Ով որ չի մեռնի, թող նա պարծենայ: Եւ զճարտար

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՄԵՆԻ ՀԱՄԱՐ ՉԱՐԴԷ:

Մէկ իշխանի որդի պատահեցաւ մէկ ուրիշ իշխանի որդուն և երկուքս միասին խօսում էին: Ս. յս ժամանակ նրանց մօտով անց կացաւ մէկ խեղճ գիւղացի և շատ քաղաքավարի կերպով դուրս տուեց նրանց: Իշխաններից մէկը, ծանօթ լինելով նրան, պատասխան տուեց նրան, նմանապէս գլուխ տալով:

Միւս իշխանը նեղանալով ասաց իւր ընկերացի.

— Դուք, իշխան, այնքան տեղը ձեր պատիւը ցած ձգեցիք, որ պատասխան տուիք մէկ խեղճ ու ճշին գիւղացուն:

— Ինչի՞ պատասխան չըտամ, ասաց առաջինը. և չեմ կամենում, որ բոլորովին լուսաւորութիւն չունեցող և չսկսեմ անձ գիւղացին ինձանից աւելի քաղաքավարի լինի:

ԱՌԱՐ.

Ծառը քանի որ բար (պտուղ) շատ ունենայ, գլուխը կտնայ կը զգէ:

ՅՐԿՈՒ ԽՆՉՈՐԻ ԾԱՌ:

Մէկ այգեպան երկու որդի ունէր: Մայիս ամսին նա ընծայեց նրանց մէկ մէկ խնձորի ծառ: Երկու ծառ

որն էլ մէկ տեսակիցն էին և շատ նման էին միմեանց  
թէ բարձրութենով և թէ զեղեցիութենով : Միայն մի-  
մեանցից շատ հնուու էին տնկած այն ծառերը :

«Որդիք, ասաց այգեպանն իր որդիքերանցը, ձեզ լի-  
նին այս ծառերը բայց գիտացէք, որ շատ աշխատանք  
ու հոգացողութիւն պէտք է քաշէք այս ծառերի կար-  
գով պահելու համար» :

Մեծ որդին շատ աշխատասէր և խելօք տղայ էր :  
Ստացաւ ծառը թէ չէ, այն օրից սիսեց աշխատանքը :  
Ինչ որդեր որ կային ծառի վրայ, բոլորը ոչնչացրեց,  
ծառի տակի հողը փափկացրեց, օր աւելի լաւ անցկե-  
նայ ջուրը գէպի նրա արմատը և մէկ խօսքով ինչ որ  
գիտէր ու կարգացաւ, շինայեց իրա խնձորի ծառի  
լաւայնելու համար : Բայց փոքր որդին շատ ծոյլ էր :  
Նա բոլորովին մոռացաւ, թէ իրան խնձորի ծառ են պահ-  
տուել : Մայիսը, յունիսը, յուլիսն ու օգոստոսն անցկացան,  
սեպտեմբերին միայն միան եկաւ իրա ծառն և շտապով  
զնաց պտուղների քաղելու, որովհետև միւսներն էլ այդ  
ժամանակը պտուղներ էին ժողովում ծառերիցը : Բայց  
խեղձը տեսաւ որ մէկ հատ խնձոր էլ չկար իրա ծա-  
ռի վրայ, որը որդերն էին կերել և որն էլ քամին էր  
չորացրել ու վերածել : Տխրած զնաց նա իրա եղբոր  
ծառը տեսնելու տեսաւ և դարմացաւ : Ծառը բաւա-  
կան մեծացել էր և զեղեցիկ կարմիր խնձորներով դար-  
դարուել : Շատ նեղացաւ փոքր որդին, նրա նախանձը  
չարժուեց և զնաց հօրը դանդատուեց, թէ իմ «սիրե-  
լի հայր, ինչե՞ք էք իմ եղբորը սիրուն պտուղներով լի-  
քը ծառ տուել, իսկ ինձ անպիտան, անպտուղ ծառ» :

Ես, իմ մաշքիս լոյս, երկու սիղո էլ մէկ տեսակ ծառ  
 եմ գուել, պատասխանեց նրան հայրը. ո՞վ ինչ մեղ  
 ունի, որ դու ծուլացար, ծառիդ համար հող չը քաշե-  
 ցիր. բայց եղբայրդ այս չօրս հինգ ամուսն մէջ հան-  
 դարտութիւն չէ ունեցել. ամեն օր իւր ծառի համար  
 էր մտածում: Այդպէս է՝ «ինչ որ կցանես, այն էլ կը  
 հնձես»:

ԱՌԱՅ.

Մարդ մէկ ձեռք տան վրայ պէտք է ունենայ:

«Մայր իմ», պատգ Սննան իրա մօրը, խնդրեմ որ ինձ,  
 Գրիգորին ու Սարգսին մեր փոքրիկ պարտիպումն եղած  
 մեխակներից մէկ քանիսը բաշխէք. մենք ինքներս կաշ-  
 իատենք և կը հողանք այն ծաղիկների համար: Մայրը  
 կատարեց իւր փոքր աղջկայ խնդիլը և տուեց իրա  
 երեք որդեքերանցը բաւական մեխակներ: Շատ ուրախա-  
 ցան երեխաները և միմեանց ատում էին, թէ «տեսնե՞ք,  
 ինչպէս բաց կը լինին մեր մեխակները»:

Մեխակների կոկոմները դեռ նոր էին երևում:  
 Բայց Սարգիսը, շատ անհամբեր լինելով, կամեցաւ որ  
 իր մեխակներն ամենից առաջ բացուին: Անդադար գը-  
 նում էր ծաղիկների մօտ, բռնում էր կոկոմներն ու ճրդ-  
 քում, բաց էր անում, որ տեսնէ, թէ ի՞նչ կայ մէջը:  
 Մէկ երեկոյ էլ որ նա բաց արաւ կոկոմը, տեսաւ որ  
 ծաղիկի թերթերի ափերը կարմրել էին: Միւս օրը շուտով  
 վաղեց դէպի պարտէզ, տեսնելու թէ արդեօք բաց են  
 եղել մեխակները, թէ չէ: Տեսաւ որ շատ ծանր է բանն

առաջ գնում. անհամբերութենով վեր առաւ, բայց արեց ուժով կոկոմը և երևեցան թերթերը: Ուրախ ուրախ կանչեց յետոյ իրա եղբօրը և քրոջը, թէ «եկէք, եկէք, շուտով, իմ մեխակները բաց են եղել»:

Գնացին Աննան և Գէորգը և շատ զարմացան, որ այդպէս շուտ բացուել էր իրանց եղբօր մեխակը: Բայց արեւը բարձրացաւ թէ չէ, Սարգսի մեխակները գլխները քաշ զցեցին և թառամեցան:

ԱՅՍԵՆՆԵՐ.

Ուշ ու նուշ:

Ով որ տուն չէ շինել, սիւները բսնովի դիտէ:



Տ Ա Ն Ձ Ի Ծ Ա Ռ :

Մէկ ծեր մարդ նստած էր մեծ տանձի ծառի տակը, ստուերումը, իրա տան առաջ: Նրա թոռները քաղում էին տանձերը և ուտում: Շատ քաղցր և ջրալի էին տանձերը:

Պապն ասաց իրա թոռներին: — «Ես պէտք է պատմեմ ձեզ, թէ ինչպէս է առաջ եկել այս ծառն այստեղ:» Յիսուն տարի առաջ ես մէկ անգամ կանգնած էի այստեղ. այս ծառը չը կար այն ժամանակը: Տխրած «դէմքով դանգատվում էի հարեանիս իմ խեղճութեան մասին: Ես ասում էի այն ժամանակը, թէ, «ախ, երանի կը լինի ինձ, որ մէկ հարիւր մանէթ ձարեմ. այն ժամանակը բոլորովին հանգիստ կը լինիմ»:

«Հարեանս խելօք մարդ էր. այս խօսքերը որ լսեց, ասաց ինձ, — հարիւր մանէթի ձարելը շատ հեշտ է,

«Թէ միայն կարողանաս լաւ գործի կանգնել: Կանգ-  
«նած տեղդ հարիւր մանէթից աւելի կայ թաղած, աշ-  
«խատէ և հանէ:

«Ես այն ժամանակն անփորձ էի. այն պատճառով  
«էլ, կարծելով իբր թէ գեանի տակը գանձ կայ, մէկ  
«ողջ զիշեր սկսեցի փորել այն տեղը. փորիրեցի, բայց  
«մէկ մանէթ էլ չգտայ:

«Միւս օրը հարեանս տեսաւ իմ փորած տեղը:  
«Մեծ փոս էր, շատ խորը, և նստեաւ թէ չէ, ծիծա-  
«ղեց: Ես չէի կարծում, ասաց նա, թէ դու այդպէս  
«յիմար կը լինիս. բայց ոչինչ, մնաս չունի, կորած չէ  
«աշխատանքդ: Ես կը բաշխեմ քեզ մէկ տանձի ծառ,  
«տնկէ այն փոսումը և մէկ քանի տարուանից յետոյ  
«մանէթներն իրանց իրանց կը գան քեզ մօտ:

«Տանձի ծառը տնկեցի, մեծացաւ և այսպիսի գե-  
«ղեցիկ ծառ դառաւ: Այսքան տարուան մէջ ևս շատ  
պտուղներ եմ քաղել, ոչ թէ մէկ հարիւր մանէթի,  
«այլ մէկ քանի հարիւր մանէթի:

«Հարեանս միշտ ասում էր ինձ, թէ աշխատան-  
«քով և խելքով է ստացվում հաստատ արդիւնքը»:

ԱՅՍԾՆԵՐ.

Բանը շինելով, էջը քշելով:

Աշխատութիւնը լիռներ կը հաւասարէ:

ԼԱԻ ԱՆՈՒՆԸ ՀԱՐՍՏՈՒԹԵՆՆԻՑ ԱՌԱՒԵԼԷ:

Մէկ զիւղումը կենում էր մէկ խեղճ մարդ, ա-  
նու՛րը Մարկոս: Նրա կինը վաղուց մեռել էր և մէկ փո-

քը որդի էր թողել նրա համար: Գնում էր այս Բարեկոսն ամեն օր բանում էր, փող աշխատում և կառավարվում էր իրա որդու հետ միասին. բայց մէկ անգամ, բանելիս, խեղճ Մարկոսը մտեց ու մէկ շաբաթ պառկեց անկողնումը: Մէկ շաբաթից յետոյ Մարկոսի տանն էլ կերակուր չըկար և երեխան մնում էր քաղցած, ծարաւ: Մարկոսը ստիպուած էր զիւղումը ողորմութիւն խնդրելու, որ կառավարուէր, որովհետեւ դեռ բանել չէր կարող: Հիւանդ, տխրած Մարկոսը դուրս եկաւ իրա խրճից ողորմութիւն խոգովելու: Բայց շատ ամաչում էր և վախենում այս բանիցը:

— Ա՛խ, ի՞նչ դժուար է ողորմութիւն խնդրելը, ասում էր ինքն իրան Մարկոսը: Տուն յետ դառնալիս օտին մէկ բան գիտաւ և փողի ձայն հանեց: Կռացաւ և տեսաւ, որ փողով լիքը պարկ է ընկած գեանի վրայ: Ուրախ ուրախ վեր առաւ պարկը և շտապուած էր տուն: «Ս. յժմ, ասաց նա ինքն իրան, փառք Աստուծո, էլ քաղցածութենից ու ծարաւութենիցն ահ չեմ ունենալ. ամեն բան կառնեմ, կըլցնեմ տունս ու հանգիստ կապրեմ»: Բայց յետոյ խղճմտանքն իրան տանջեց, թէ «այ մարդ, այդ փողերը քո աշխատած են, որ ուզում ես տիրանալ դրանց. դու պէտք է յետ ասա այդ փողերն իրա տիրոջը»: Մարկոսը պարկը մինչև անգամ բաց չարած, միւս առաւօտը շուտով վաղեց գիւղի տանուտիրոջ մօտ և յայտնեց թէ փող է գտել: Հարց ու փորձ արին և փողերի տէրը գտնուեցաւ: Մէկ հարուստ փաճառակիւն էր, որ բերել էր այն փողերը ոչ խարնեք առնելու: Շատ ուրախացաւ. հարուստ մարդը


իւր կորուստի դտներով և Մարկոսի բարի մարդութեան  
համար բաւական փող բաշխեց նրան: Բոլոր զիւզն ի-  
մացաւ Մարկոսի արարմունքն ու ամենքն իրանց  
ձեռներից եկածը չէին խնայում Մարկոսին օգնելու  
համար:

ԱՌՍԵՆՆԸ.

Մարդու աչքը դուրս գայ լաւ է, քան թէ ա-  
նունը:

Գտաւ — չրկերաւ:

Արդար ապրանքը գայլը չի տանիլ:



ԳԻՒՂԱՅԻՆ ՈՒ ՆԱԹԱՍՏԱԿԸ:

Մէկ խեղճ՝ գիւղացի մէկ օր անց էր կենում  
դաշտի վրայ և տեսաւ այնտեղ մէկ թփի տակը նա-  
պաստակ: Ուրախացաւ և իւր մտքում այսպէս ասաց ին-  
քն իրան՝ «այս նապաստակը որ իրապանեմ, կրճախեմ  
երեք ապաստով, յետոյ այն փողերով մէկ խոզ կառ-  
նեմ: Խոզը տասներկու հաւ որդի կունենայ: Խոզի որ-  
դիքը կը մեծանան և յետոյ ամեն մէկը տասներկու որ-  
դի կը բերէ: Զմեռուան համար կըմորթուեմ խոզերս,  
կրճախեմ և այն փողերով մէկ տուն կառնեմ ինձ հա-  
մար: Քիչ ժամանակից յետոյ կը պատկուեմ. կինս եր-  
կու որդի կը բերէ, մէկի անունը կը դնեմ Տիգրան, միւ-  
սինն Արշակ: Որդիքս գետինը կը վարեն, կը հնձեն և ես  
իմ տան պատու հանից բարձր ձայնով կասեմ նրանց.  
«Տիգրան, Արշակ, որդիք, աշխատեցէք, նայեցէք մշակ-  
ներին»:

Այնպէս բարձրաձայն գոռաց գիւղացին վերջը, որ նապաստակը վախեցաւ և փախաւ: Գիւղացու տունն էլ գնաց և կինն ու որդիքն էլ հետը:

ԱՌԱՅՆՆԵՐ.

Դեռ չճնաճ երեխային շոր մի՛ կարի:

Զուրը չըտեսաճ մի՛ բորիկանալ:



ԾՏԵՐԸ ԵՒ ԿԱՔԱԻԸ:

Գիւղացին ցանցով ծտեր բռնեց իր դաշտի վըայ և ասաց նրանց. «անպիտաններ, եկել էք իմ դաշտը սիսեռս ուտելու, ես ցոյց կըսամ ձեզ: Երկար չեմ խօսի ձեզ հետ, կըմորթեմ ամենքիդ և կեփեմ: Բայց դու, կաքաւ, որ տեղից ընկար այստեղ»:

— Պարոն գիւղացի, պատասխան տուեց ցանցի տակից կաքաւը, ահա՛ ասեմ քեզ ճշմարիտը. ես թրաչում էի այս ծտերի հետ և հաւատացնում եմ քեզ, որ քո սիսեռին ձեռք չեմ տուել: Թող ինձ, ես քեզ վնաս տուող չեմ բոլորովին: Մի՛թէ ինձ էլ այս գող ծտերի պէս կըմորթես»:

— Իհարկէ քեզ էլ կըմորթեմ. մեղաւորը դու ինքրդ ես. ո՞վ ինչ անէ, ինչե՞ էիր այս գողերի հետ ընկերութիւն անում»:

ԱՌԱՅՆՆԵՐ.

Գողն և գողակիցն ՚ի միում պատժի են:

Ամեն փորձանքին մէկ մէկ խրատ:



ԵՐԿԱԹԻ ԿՏՈՐ:

Մէկ զիւգացի գնում էր զիւղիցը քաղաք իւր փոքրը որդի Ստեփանի հետ: «Ե՛հ, ասաց հայրը, ասհանապարհի վրայ բաւական մեծ երկաթի կտոր է ընկած, վեր առ, պահէ»:

— Է՛հ, հայր իմ, արժ է այդ անպէտք բանի համար կռանալը»:

Հայրը պատասխան չըտուեց և ինքը վերառաւ այն երկաթը: Ճանապարհին նա այն երկաթը ծախեց դարբնին մէկ քանի կոպէկով և այն փողերով բալն առաւ:

Գնացին առաջ: Ամառուան շոգը շատ նեղացրուց նրանց: Ճանապարհին ոչ տուն կար, ոչ անտառ և ոչ աղբիւր: Ստեփանը շատ ծարաւ էր և հազիւ կարողանում էր գնալ իր հօր հետ:

Հայրն այն բալերից մէկը վէր դցեց ճանապարհին Ստեփանն ուրախ ուրախ վեր թուցրուց զեանիցը և կերու: Փոքր ինչ զովացաւ նրա բերանը: Քիչ անցկացաւ, հայրն էլ մէկ բալն վէր դցեց: Ստեփանը նմանապէս վէր առաւ, կերաւ:

Այսպէս արեց հայրն երեսուն, քառասուն անգամ: Երբ որ բալին հատաւ, հայրն ասաց որդուն ծիծաղելով. թէ «տեսնո՞ւմ ես, որդի՛, եթէ այն երկաթի կտորի համար մէկ անգամ կ'ոացել էիր, այսքան անգամ չէիր կռանալ բարու համարս Այս քեզ խրատ, որ միւս անգամ չըծուլանաս»:

ԱՌՁԵՆԵՐ.

Հուտ աղքատը լաւ է, քան թէ կամաց արհեստաւորը:

Ով ալարի, ոչ դալարի:

ՅԵՐԸ ԵՒ ԵՐԵՒԱՆԵՐԸ:

Ծովի ափին մանգալիս ծերը և երեխաները տեսան մէկ փոքր նաւ ափի մօտ կապած: Երեխաները կամեցան նստել մէջը և ծովումը փոքր ինչ մանգալ: Խընդրեցին ծերին, որ նա էլ նրանց հետ նստի նաւակի մէջը: Ծերը չէ թէ միայն չըհամաձայնեց, այլ նրանց էլ սկսեց համոզել, որ թողնեն նաւակը, որովհետև մէկ փորձանք կարող է պատահել ծովումը: Երեխաները չըլսեցին նրան, ասելով թէ ինչ որ կը լինի կը լինի: Քանի ծերը խրատում էր նրանց, նրանք աւելի կատալում էին և անպատճառ կամեցան փորձել: «Հաւատացէ՛ք ինձ, ասաց վերջը ծերը նրանց, որ նաւակը ձեր գլխին լաւ բան չի բերիլ, ես ձեզ համար եմ ասում, մի՛ անէ՛ք, լաւ չէ:» — «Գատարկ բաներ է, ասացին միասին երիտասարդները. ի՞նչ էք լում սրան»: Ասացին ու նստեցան նաւակի մէջը: Նաւակը հեռացաւ ծովի ափիցը: Եղանակը առաջ շատ հանդարտ էր, բայց յետոյ փոխուեց, մեծ քամի վեր կացաւ և ամպերով ծածկուեց երկինքը: Ալիքները խաղացնում էին նաւակը փոքր տախտակի կտորի պէս: Երիտասարդները կամեցան յետ դառնալ, բայց քամին չթողեց: Յանկարծ մէկ սաստիկ քամի փչեց, նաւակը շուռեկաւ և երիտասարդները ջրի տակովն եղան:

ԱՌԱՅՆՆԵՐ.

Մեծի ասած, փոքրի լած :


Մտնելուց առաջ միտք արա՛, թէ ի՞նչպէս դուրս  
գաս :

Խելօքին մէկ, յիմարին քանի կուգես :

Սեւին սապոնը, խեւին խրատն ի՞նչ կանէ :

Հորթը որ կովի առաջն ընկնի, դայը կուտէ :

Ոչ կըխաղայ, նա կը կաղայ :



ՁԻՆ ՈՒ ԷՆԸ :

Մէկ անգամ ճանապարհին միասին գնում էին  
էջը և ձին, ձին անբեռը, բայց էջը մեծ ահագին բեռ-  
նով, այնպէս որ խեղճ էջը հազիւ կարողանում էր ոտ-  
ները փոխել : «Եւ չեմ կարող շարունակել, ասաց էջը  
ձիուն, վէր կրնկնեմ, չեմ կարող հասնել անդր» : Խեղ-  
ճը խնդրում էր, որ բեռնի մէկ մասը ձին շալակէ. բայց  
ձին ականջ չարեց նրան և կուլիտ պատասխանեց իշուն,  
թէ՛ ի՞նչպէս կարելի է իշու բեռը շալակեմ և իզուր  
տեղը նեղանամ » : Խեղճ էջն որ ուժիցն ընկաւ, վէր  
ընկաւ, մեռաւ : Վերառան յետոյ տէրերն իշու բեռն  
էլ և մեռած իշու կաշն էլ միասին բարձեցին հը-  
պարտ ձիու վրայ : Նոր իմացաւ ձին իւր վատ արար-  
մունքը, բայց էլ ուշէր, օգնել չէր կարելի :

ԱՌԱՅՆՆԵՐ.

Լաւ ձին իր պատիւը կաւելացնէ, վատ ձին մշտ-  
րակը :

էջը դադէ, ձին ուտէ



ԹԱՆԳԱԳԻՆ ԽՈՏ:

Երևու ջահիլ աղջկերք մէկ մէկ մրդով լեզը քը-  
թոց ուսերու վրայ դրած իրանց դիւղիցը բերում էին քա-  
ղաք ծախելու: Մէկ աղջկայ անունն էր Մարիամ, միւ-  
սինը Թագուհի: Մարիամը քիթ ու պռունգը վէր թո-  
ղած շուտ շուտ ան էր քաշում, բայց Թագուհին ու-  
րախ ուրախ ծիծաղում էր և հանաքներ անում:

«Չարմանում եմ, ասաց Մարիամը Թագուհուն, որ  
դու այդպէս ուրախ ես. քո բեռն էլ իմ քթոցի պէս  
ծանր է ու դու էլ ինձանից շատ ուժով չես. ասա՛,  
ինչդրեմ, ինչպէս ես դիմանում ու հետն էլ ուրախ  
ուրախ ծիծաղում:»


— Ես իմ քթոցումը մէկ այնպիսի խոտ ունիմ պա-  
հած, որ նա հեշտացնում է ամեն դժուար բան, պա-  
տասխան տուեց Թագուհին:»

— Այդ շատ թանգագին խոտ է, ասաց Մարիամը,  
ես էլ ուզում եմ թեթեւցնել բեռս, ինչդրեմ այդ խոտի  
անունն ինձ էլ սովորացրո՛ւ:

Թագուհին պատասխան տուեց. — այդ խոտի ա-  
նունը հ ա մ ք ե թ ու թ ի լ է ն է, որից, իմ սիրելի Մա-  
րիամ, դու զուրկ ես:»

ԱՌՍԵՆԵՐ.

Ով որ շտապի, նստի, հանգչի:  
Համբերութիւնը կեանք է:



Ա. Գ. Ռ. Ա. Ի:

Արծիւր, որ թռչունների թագաւորն է, բարձրի-

ցը թուաւ ոչխարների վրայ և մէկ գառը թուցրուց չանգերով: Այնտեղ մօտիկ ծառի վրայ նստած էր ագռաւը և տեսաւ այս բանը: Ագռաւը մտածեց ինքն իրան, «ինչե՞ր արծիւն այսպիսի փոքր գառը վեր առաւ, մեծն էր տարել, արծիւների մէջ էլ երևի յիմարներ են եղել. այժմ թող ինձ նայէ արծիւը և տեսնէ, թէ ինչպիսի գառն եմ թուցնում»:

Այս խօսքերն ասաց, բարձրացաւ երկինքը, նայեց գառներին և ամենից մեծն ու զեղեցիկն ընտրեց ու թուաւ վերելից նրա վրայ: Բայց այնպէս սաստիկ դիպաւ. այն գառին, որ ագռաւի ոտները և թևերը բուլրովին խճճուեցան գառնի բրթի մէջը. ոչ այս կողմը կարողացաւ շարժուիլ և ոչ այն կողմը: Մնաց մեղաց պատուհաս:

Եկան հովիւները, բրդից դուրս հանեցին ագռաւը, թևերը կտրեցին և տուին երեխաներին խաղալնելու:

ԱՌՆԵ.

Բանն արաւ. յետոյ պարծեցիր:

ԷՇՆ ՈՒ ԱՌԽԱԿԸ:

Մէկ անգամ էլը պատահեցաւ սոխակին և ասաց նրան, թէ «ես լսել եմ, պատուական բարեկամ, որ դու շատ լաւ ես երգում. խնդրեմ մէկ ինձ մօտ երգէ, տեսնեմ հաւատալով է ժողովուրդի գովասանքը, թէ չէ»:

Սոխակը սկսեց երգել իշու առաջ զեղեցիկի ձայ-

նով : Ծուաց ու շուեցրուց հազար տեօակ, երբեմն բարձր ձայնով և երբեմն հանկարտ Ամենքն սկսեցին լռսել նրա քաղցր երգը զարմանքով . քամին դադարեց, հովիւների ու շքը զնաց նրա ձայնից :

Ա երջացրեց երգը : Էջը բարձացրեց իրա յիմար գլուխը եւ ասաց . — « վաս չէ, սուտ չեն եղել ասում, որ չես ձանձրացնում լսողներիդ : Միայն մէկ բան կայ, սիրելի, որ եթէ դու մեր աքաղաղի հետ ծանօթանաս և նրանից էլ փոքր ինչ սովորես երգերի եղանակները, ես քեզ հաւատացնում եմ, որ քո հասն երգող էլ աշխարհի երեսին մէկը չի լինիլ : » Նեղացալ խեղճ սոխակը շուտով թռաւ ծառիցը, որ էլ շրտեսնէ իւր անխղճնուանք դատաւորին :

#### ԱՌՍԵՆԵՐ :

Էջն ի՞նչ գիտէ, նուշն ի՞նչ է :

Իշու քացուցը մի՛ նեղանալ :

#### ԱՂՈՒԷՍՆ ՈՒ ԿՌՈՒՆԿԸ :

Աղուէսն ու կռունկը բարեկամացան և շատ սիրում էին միմեանց : Աղուէսը կամեցաւ պատիւ տալ իւր բարեկամին և հրաւիրեց մէկ անգամ կռունկին իրանց տուն : Գնաց կռունկն աղուէսի մօտ : Աղուէսն եփել էր կերակուր և ածել էր մէկ տափակ ամանի մջ : Մօտ բերեց և ասաց կռունկին . « կեր, սիրելի բարեկամ . այնպէս լաւ եփել եմ, որ կը հաւանիս » : Կռունկը շատ չարչարուեց, բայց իհարկէ ի՞նչ կարող էր փեր առնել իւր մեծ և երկար կտուցով այն տափակ ամանից . խեղճը մնաց քաղցած : Բայց աղուէսը, գլուխը քաշ դրած,

կերաւ բոլորը: — Խնդրեմ ներեա, ասաց վերջն աղուէսը  
կռուենկին, սրանից աւելի ուրիշ կերակուր չունիմ:»  
— Շնորհակալ եմ, եղբայր, ինչի՞ ես ներդանում: Խընդ-  
րեմ եզուց ինձ մօտ համեցէք ճաշի:»

Միւս օրը գնաց աղուէսը կռուենկի մօտ ճաշ ու-  
տելու: Կռուէր նամնապէս խորամանկութիւն էր բա-  
նեցրել: Եփել էր կերակուր և ածել էր մէկ նեղ բեր-  
նանի ամանի մէջ: — Համեցէք, ասաց կռուենկն աղուէսին,  
կեր, բարեկամ, պատուական կերակուր է:» Շատ չար-  
չարունց աղուէսը, բայց ոչինչ չըկարողացաւ հանել այն  
խոր ամանից. իսկ կռուենկը գլուխը քաշ գցած, ու-  
տում էր կերակուրը: Երբ որ վերջացրուց ուտելը, ասաց  
աղուէսին: — Ներէ, եղբայր, սրանից աւելի ուրիշ կե-  
րակուր չունիմ:»

Մտաբան աղուէսը և բարկացած գնաց տուն: Նա  
երևի չէր խմացել, որ ասած է թէ, կարասին ինչ ձայն  
որ կտաս, նա էլ այն ձայնը կը հանէ:

ԱՌՄԵՆԵՐ.

Ինչ կասես, այն կը լսես:

Ինչ կը քանես, այն կը հնձես:

Հիւրը տանախրոջ էն է:

Հարևանիդ մէկ կով ուզէ, որ Աստուած քեզ  
երկուսը տայ:

ՇԵՐՆ ՈՒ ԵՐԵԹԱՆԵՐԸ:


Յովսէփն երկու որդի ունէր, մէկը տասներկու տա-  
րեկան էր, միւսը տասնուչորս տարեկան: Մէկ անգամ

Տարեաններն ասացին նրան, թէ որդիքդ ծիծաղում են մէկ պառաւ կնոջ վրայ: Հայրը բարկացաւ նրանց վրայ և հասկացրուց, որ լաւ չէ պառաւների ու ծերերի վրայ ծիծաղելը: Որդիքը խոստացան էլ չանկու: Քայց մէկ քանի ժամանակից յետոյ երեխաները մոռացան իրանց խոստումները և պատահելով մէկ ծերունուն ըսկսեցին նրան ծաղրել: Հայրն իմացաւ այս բանը և սկսեց հոգ տանել իր երեխաների թեթեամտութեան ուղղելու վրայ:

Շուտով հասաւ նոր տարին: Տարեմտի օրը որդիքըն եկան, շնորհատրեցին հօրը նոր տարին, խնդրելով Աստուծուց նրա համար բաղգաւորութիւն և երկար կեանք: — Որդիք, ասաց հայրը, ես չեմ ուզում երկար ապրիլ. լաւ է շուտով մեռնեմ, որ ծերացած ժամանակս ինձ էլ կըծաղրեն վատ երեխաներն այնպէս, ինչպէս մօտ ժամանակներումս ծաղրում էիք մէկ ծեր մարդուն: Երեխաները կարմրեցան ամօթից և չըզիտէին ինչ անել: Նրանք շատ սիրում էին իրանց հօրը, հասկացան իրանց յիմարութիւնը և այնուհետեւ ծաղրելու փոխանակ միշտ յարգում էին ծեր մարդկանցը:

ԱՌՍԾ.

Մերանաս, ծերի պատիւն իմանաս:



ՄԱՐՄՆԻ ԱՐԱՏՆԵՐԻ ՎԲԱՅ ԶԸՊԵՏՔ Է ՄԻՄԱՂԻԼ:

Գայանէն շատ հանդարտ և աշխատասէր աղջիկ էր, միայն խեղճի աչքերը շէլ էին և այն պատճառով էլ սրա վրայ շատ էին ծիծաղում ուրիշ աղջիկները,

մանաւանդ մէկը, որի անունն էր Մարթա: Մարթան իրան շատ գեղեցիկ էր կարծում և մէկ օր ծաղրելով հարցրուց Գայանէին. — Ինչե՞ր դու ինձ վրայ ուղիւ չես նայում, երևի չես սիրում ինձ:» Գայանէն հասկացաւ, որ իր վրայ ծիծաղում էր Մարթան և հանդարտ կերպով պատասխան ատեց նրան, թէ «ես չեմ կարող իմ մարմնի բնական պակասութիւններն ուղղել. ինձ մընում է միայն աշխատել ուղղել իմ միւս պակասութիւնները:»

Եւտով Մարթան ծաղիկ բնկաւ և սաստիկ հիւստեանդ էր: Բայց երբ որ աւուղջացաւ, խեղճին էլ չէր կարելի ձանաչել. նրա բոլոր երեսը ծաղկատար էր եղել:

Հիւանդութենից յետոյ, երբ որ Մարթան առաջին անգամ եկաւ ուսումնարան, չէր կարողանում ամօթից համարձակ այս կողմն այն կողմը նայել և անդադար ծածկում էր ձեռով երեսը:

Մէկ իր նման շար երեխայ մօտեցաւ նրան և ասաց. — Ինչե՞ր ես լայն ու երեսդ ծածկում:

Մարթան հասկացաւ, որ նա իր վրայ էր ծիծաղում և սկսեց սրտանց դառնապէս լալ, բայց ոչ թէ ծաղկատար լինելու պատճառով, այլ միտք բերեց, որ մէկ օր ինքն էլ այդպէս ծաղրում էր Գայանէին, շիւ աչք ունենայու համար:

ՍՈՍԵՆԵՐ.

Երկնքի պարտքը գետնին չի մնալ, գետնի պարտքը երկնքին:

Մինչև չըզայ յետինը չի յիշուիլ առաջինը:

Կորը ինչպէս նայում է Աստուծուն, այնպէս էլ  
Աստուած նայում է նրան:


Շ Ն Ե Ր:

Լօնգոնուամբ շները շատ պատիւ ունին, որովհետեւ  
այնտեղի շները մեծ օգուտ են բերում մարդուն  
հրդեհների ժամանակը: Որ տանը որ կրակ կպչի ու  
սկսի այրուիլ, մէկ էլ տեսնես զինուորներից առաջ  
ներս են վազում շներն ու սկսում են դուրս կրել այնտեղից  
ամեն կենդանի բան, ինչ որ պատահի նրանցը այրվող սե-  
նեակներումը: Գուրս են բերում՝ երեխաներին, փոքր շո-  
ներին, կատուներին, հաւերին, խոզերին և այլուերուց  
ազատում են: Մէկ անգամ պատահեցաւ, որ հրդեհի  
ժամանակը մէկ այգուխի ազատող շուն ներս մտաւ  
այրուող սենեակը, որի մէջ մէկ փոքր շուն, դուրս գա-  
լու ճանապարհը չգտնելով, շփուել էր ու ահից դող-  
դողում: Աեծ շունն իսկոյն բռնեց փոքր շան վիզն ու  
դուրս քաշեց, կրակիցն ազատեց, շնայելով որ փոքր  
շունն իր ահիցն անդադար կծում էր իր ազատողին:

Զվեցերիայումը Ան-Գոտարդ սարի վրայ էլ կան  
մէկ ուրիշ տեսակ շներ: Այն սարի վրայ համարեա թէ  
միշտ սառուցն ու ձիւնն անպակաս է լինում և մեծ  
ֆնասներ է տալիս այն սարի վրայ անցկենող ճանա-  
պարհորդներին: Այնտեղ մէկ հիւրանոց կայ շինած և  
նրա տէրը շատ շներ է պահում, ճանապարհորդներին  
օգնութիւն հասցնելու համար: Շների վզից կախ է  
արած զինով լեքը շեշ, և որովհետեւ շատ հեշտ ու  
արագ վազվզում են այս շներն այն սարի նեղ ու ծու-

ուր ճանապարհներովը, անդադար գտնում են ձևումը  
Թաղուած մարդկանց և տալիս են դիմին. ճանապարհորդ-  
ներն ուշքի են գալիս և ապաստվում են սառչելուցը:

Մէկ անգամ այն շներից մէկը նեղ ճանապար-  
հի վրայ տեսնում է ձուռն ընկած մէկ վեց տարեկան  
երեխայ: Խեղճը համարեա թէ սառել էր և քիչ էլ որ  
մնար, ցրտիցն ու քաղցածութենից անպատճառ պէտք  
է մեռել էր: Շունը մօտ է գնում երեխային և սկսում  
է լեզել նրա սառած ձեռները: Երեխան փոքր ինչ ուշ-  
քի է գալիս, ուզում է վերկենալ, բայց չէ կարողանում  
և ընկնում է շան մէջքի վրայ: Շունը կանգնում է և  
ապաստում է մինչև որ երեխան նստում է նրա մէջքի վը-  
րայ ու նրա մազերիցը բռնում է: Շունը մեծ զգուշու-  
թենով տանում է նրան հիւրանոցը և այնպէս ազա-  
տում է նրան մահիցը:



Բ Ա Դ Ե Ր:

Գէորգը նայում էր բարձր և տեսաւ որ բաւական  
վայրենի բաղեր են թռչում երկնքումը:

Գէորգն ասաց հօրը— հայր, մեր տանու բաղերը  
չե՞ն կարող սրանց պէս թռչիլ:

ՀԱՅՐ.— Չէ, չեն կարող:

ԳԷՈՐԳ.— Ո՞վ է տալիս այս վայրենի բաղերին կե-  
րակուր:

ՀԱՅՐ.— Իրանք են գտնում իրանց համար կե-  
րակուր:

ԳԷՈՐԳ.— Բայց ձմռան ի՞նչ են անում:

ՀԱՅՐ. — Զմեռը գալիս է թէ չէ, վայրենի բաղերը  
զնուամեն տաք երկիրներ և յետոյ դարնան ժամանակը  
յետ են գալիս մեզ մօտ:

ԳԷՈՐԳ. — Յետոյ մեր բաղերն էլ ինչի՞ չին կարո-  
ղանում դրանց պէս լաւ թռչիլ և ինչի՞ սրանք էլ չեն  
զնուամ ձմեռը տաք երկիրներ:

ՀԱՅՐ. — Այն պատճառով, որ տանու կենդանիներ-  
ըն իրանց ոյժը կորցրել են և կոպտացել:

ԳԷՈՐԳ. — Ինչի՞ են այդպէս դառել:

ՀԱՅՐ. — Ահա, ասեմ քեզ պատճառը, այս տանու  
բաղերը տեսնում են, որ մարդիկն են սրանց համար հո-  
գում և կերակուր ապիս, իրանք էլ չեն աշխատում  
իրանց համար, իրանց ոյժը չեն դործածում և սրանից  
է, որ դրանք այդպէս կոպտացել են: Սրանից դու տես-  
նում ես, որ մարդիկն էլ իրանց ձեռքով պէտք է շինեն  
իրանց դործերը: Ուրիշի ձեռով, ասած է, փուշ քաղէ:  
Եւ այն երեխաները, որոնք որ ուրիշի օգնութեանն են  
սպասում և իրանք չեն աշխատում իրանց ձեռքով շինել  
իրանց բանը, միշտ թոյլ կը լինին, ոչ ոյժ կունենան  
և ոչ մեծ խելք ու զիտութիւն:


ԳԷՈՐԳ. — Ձէ, հայր, այդ լաւ բան չէ: Ես կաշխա-  
տեմ ինքս իմ ձեռքով շինել իմ ամեն բաները, ինչ որ  
կարող եմ, թէ չէ ես էլ կը կորցնեմ իմ շնորհքներն  
այնպէս, ինչպէս որ այս տանու բաղերը կորցրել են թըռ-  
չելու շնորհքը:

ԱՌԱՅՆԵՐ.

Ուրիշի ձեռով փուշ քաղէ:

Ուրիշէ կերի վրայ մի նստիր:

Հաց ու պանիր, կեր ու բանիր:



ԾԻԾԵՌՆԱԿՆԵՐ:

Ա.Ն.ՆԱ: Սիրելի մայր իմ, մեր ծիծեռնակը, տես, էլի եկել է. հերու էլ սա չէր այտեղ:

ՄԱՅՐ: Դա էր: Բայց դու տեսա՞ր ինչքան մոծակներ էլ էին թռչում այտեղ:

Ա.Ն.ՆԱ: Տեսայ, ի՞նչպէս չէ. բայց ես ծիծեռնակների վրայ եմ խօսում, մայր իմ, դուք մոծակների վրայ ինչը փոխեցիք բանը:

ՄԱՅՐ: Այն պատճառով, որ եթէ մոծակները չը լինէին, ծիծեռնակներն էլ չէին գալ այտեղ:

Ա.Ն.ՆԱ: Ուրեմն թռչունները գալիս են մեզ մօտ այն ժամանակը, եւք որ նրանց համար այտեղ պատրաստ է կերակուրը:


ՄԱՅՐ: Այդպէս է. բայց ո՞վ սովորեցրեց թռչուններին ամառք գալ մեզ մօտ, ձմեռը գնալ տաք երկիրները: Ո՞վ տուեց ծիծեռնակին այնքան շնորհք, որ սակարողանում է ամեն տարի գանել իրա բունը:

Ա.Ն.ՆԱ: Իհարկէ, մայր իմ, այդ բաներն Աստուած է սովորեցրել դրանց:

ՄԱՅՐ: Աստուած ամեն անասունին շնորհք է տրուել: Երբ որ դու տեսնես, որ ծիծեռնակները գալիս են այտեղ. միտդ բեր, որ Աստուած մինչև նրանց գալը պատրաստում է նրանց համար կերակուր: Մարդկանց համար էլ նմանապէս Աստուած է հոգում: Մինչև քո աշխարհ գալը, Աստուած քեզ համար կաթը պատրաստ

տեց իմ ծծերի մէջ, որ դու անկերակուր չըմնաս: Ի՞նչ պէս ես կարծում, որ Դ՞նց պէտք է վճարես Աստուծուն քո պարտքը:

ԱՆՆԱ: Ես ոչինչ չունիմ, մայր իմ, ի՞նչ կարող եմ տալ նրան: Ես միայն կարող եմ այս բանն անել. կրտսիրեմ Աստուծուն և կաշխատեմ այն բաներն անել, որ նրան հաճելի է:



### ԵՐԵՒԱՆ ԵՒ ՇԵՐԱՄԸ:

Ի՞նչ անպիտան և տգեղ որդն է, գոչեց բարձր ձայնով Մարթան, առաջին անգամ շերամի տեսնելիս. քանի՞ սրա պէս անպիտան և զզուելի ձիճուներ կան, որոնք բանի պէտք չեն, ծառերին վնաս են տալիս և մեզ էլ վախեցնում: — Շատ մի խօսիր յիմարաբար, ասաց աղջկան շերամը: Դու գիտես, որ այս մետաքսեայ շորերն իմ շնորհքով է շինած. ես եմ տուել դրա համար մետաքս:

Աղջկայ հայրը պատահեց այս խօսակցութեանը և յանդիմանեց աղջկան այս կերպով: «Մի՛ նայիր միայն արտաքին ձևին, ամեն բան գովելու է ոչ թէ իրա արտաքին գեղեցիկութենով, այլ միայն ներքին արժանաւորութենով: Տեսա՞ր ինչպէս սաստիկ սխալուեցար այս որդնի մասին: Սրանից յետոյ, սիրելի Մարթայ, բողբոջովն մի խօսիր այն բանի վրայ, որ լաւ չըգիտես:»

ԱՌԱՅՆԵՐ.

Ոսկին փոքր է, բայց գինը մեծ:

Տասը չտիէ՛, մէկ կտրէ՛:

ՄԵՂՈՒՆ ՈՒ ՃԱՆՃԵՐԸ:

Երկու ճանձ՝ մտքումը դրել էին գնալ հեռու աշխարհներ ճանապարհորդութիւն սնելու: Գնացին մեղուի մօտ և նրան էլ ուզում էին իրանց ընկեր շինել: — Այստեղ, ասում էին ճանձերը, մենք բոլորովին պատիւ չունենք. ուր որ գնում ենք, ամեն տեղից դուրս են անում. թէ մեծի և թէ փոքրի աչքի փուշն ենք: Մեծ մեծ աներումը թաղցնում են քաղցր կերակուրները մեզանից, խրճիթներումն էլ աւելի սաստիկ թրշնամիներ ունենք, սարդերը, որ խճճում են մեր ոտները և մեզ սպանում: Գնանք, մեղրաճանձ, գնանք, այնտեղ ասում են ամենքն էլ բաղդաւոր են, մենք էլ բաղդաւոր կը լինինք:»

— Աստուած բարի ճանապարհ տայ ձեզ, պատասխան տուեց նրանց մեղուն. ևս այստեղ էլ բաղդաւոր եմ: Մեծ մարդիքն էլ ու փոքրերն էլ սիրում են ինձ և պատուում իմ տուած մեղրի և մմի համար: Գուք գնացէ՛ք ուր որ կամենաք, բայց ես կասեմ ձեզ, որ դուք ոչ մէկ տեղ պատիւ չէք ունենալ մարդկանցից, որովհետեւ ոչ մէկ բանի պիտանացու չէք. ամեն տեղ միայն սարդերը կուրախանան ձեզանով:»


ԱՌԱՅՆԵՐ.

Յուզոյն ինքը հոտած է, հենց զիտէ իրա բունն է հոտած:

Ինձ տես, քեզ լաց. որտեղ ես, զայլմ կաց:

Քարն իրա տեղը ծանր կը լինի:

Զանգալի ձայնը հեռուից լաւ է զայիս:



ՏԱՔ ՈՒ ՍԱՌՆ ԱՐԻՒՆ ՈՒՆՆՅՈՂ ԿԵՆԳԱՆԻՆԵՐԸ:

Ամեն կենդանի արիւն ունի, միայն մէկ քանիսի արիւնը կարմիր է, միւսներինը սպիտակ և կամ դեղնագոյն: Մարդու, անասունների, թռչունների և ձկների արիւնը կարմիր է, բայց եթէ կորես բզէզը կամ որդր, կըտեսնես որ սպիտակ ջրի պէս բան դուրս եկաւ. այդ սպիտակ ջուրը նրանց արիւնն է:

Մէկ քանի կենդանիների կարմիր արիւնը սաք է լինում, միւսներինը սառը: Մարդու, սլաօրի, ձիու, գալանների և թռչունների արիւնը սաք է: Գորտերի և ձկների արիւնը կարմիր է, բայց սառն է: Սպիտակ արիւնն էլ միշտ սառն է լինում:

Տաք արիւն ունեցող կենդանիները կարող են ցրտուամն էլ ապրել, միայն մէկ քանինն աւելի ցրտին չեն կարողանում զիմանալ: Գուք տեսնում էք, որ ձմեռը մեր երկիրներումը չեն մնում ծիծեռնակները, սոխակները և կռունկներն այն պատճառով, որ նրանք ցուրտ չեն սիրում, և դրա համար ձմեռը գնում են աւելի տաք երկիրները: Այնպիսի թռչուններ էլ կան, որոնք լաւ զիմանում են ցրտին, օրինակ՝ ազոուսները և կաքաւները:

Սառը և կարմիր արիւն ունեցող կենդանիները, օրինակ՝ օձերը և գորտերը չեն կարող ապրել ցրտումը:

Այս կենդանիները ցրտի սկսուելիս պառկում են հողում, քարի տակը, կամ իրանց բնի մէջը և սառչում են: Գարնան ժամանակը տաքանում են և էլի կենդանանում: Սպիտակ արիւն ունեցող կենդանիները ձմեռը բուրդն էլ մեռնում են: Միայն մեղուները կարողանում են դիմանալ ձմեռը, իհարկէ այն պատճառով, որ մարդիքըն աշխատում են նրանց տաք տեղ պահելու: Ցանձերը, մոծակները և բզեզները ձմեռը մեռնում են: Բայց դիտէ՛ք թէ ի՞նչ տեղից են առաջ գալիս յետոյ: Ահա լսեցէ՛ք: Այդ կենդանիներն իրանց մեռնելուց առաջ ձու են դնում լաւ ապահով տեղերումք. քարերի տակը, ծառերի արմատների մօտ, կամ թաղում են գետնի մէջը: Գարնան ժամանակն այդ ձուերից նոր կենդանիներ են առաջ գալիս:



**ԻՆՉՈՎ ԵՆ ՉԱՆԱՋԱՆՎՈՒՄ ԲՈՅՍԵՐԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՑ:**


Բոյսերն ինչտեղ որ ցանել ես կամ տնկել, այնտեղ էլ մնում են մինչև չորանալը և իրանց տեղը չեն կարող փոխել, մինչև մարդ չըվերաանէ և մէկ ուրիշ տեղ չըտանէ: Բայց կենդանիները կարող են իրանց կամքով փոխել իրանց տեղը. մարդիքն ու անասունները շրջում են, թռչունները թռչում, ձկները լողում են և որդիները սողում:

Չին շարժում է իրա ոտները, ականջները, պոչը, երբ որ կամենում է. նմանապէս միւս կենդանիները կարողանում են շարժել իրանց անդամները: Մտախ ճիւղերն ու տերևներն էլ շարժվում են, բայց միայն այն ժամանակը, երբ որ քամին փչում է, իսկ եթէ չէ, ան-

շարժ հասն իրանց համար: Իրա կամքով ծառը չի կարող  
շարժել ոչ իրա ճիւղերը, ոչ տերևները, ոչ ծաղիկները  
և ոչ արմատը:

Կենդանիները լուծվեն մարդու ձայնը, բայց ծա-  
ռը և խոտը չէ. կենդանիները տեսնում են աչքով, խի-  
բոյսերը, աչք չունենալու պատճառով, ոչինչ չեն տես-  
նում:

Բոյսերն էլ կենդանիների պէս չեն կարող անկե-  
րակուր ապրել, միայն նրանք իրանց կերակուրը ծծում  
են արմատով և տերևներով. կենդանիներն էլ կերա-  
կրով են ապրում, միայն կենդանիները ոչ արմատ ու-  
նին և ոչ տերևներ. նրանք կերակուրը բերանն են դը-  
նում, ծամում են ատամներով և յետոյ այն կերածը  
մարսում է ստամոքսը. բայց բոյսերը ոչ բերան ունին,  
ոչ ատամներ և ոչ ստամոքս:



ԻՆՉՈՎ ԵՆ ԶԱՆԱԶԱՆՎՈՒՄ ԲՈՅՍԵՐԸ ՀԱՆՔԵՐԻՑ:


Հանքերը սրանք են՝ հողը, քարը, երկաթը, ու-  
կին, արծաթը, պղինձը, աղը և այլն: Ի՞նչով են զանա-  
զանվում այս բաները բոյսերից: Վեր առնենք մէկ ծառ  
և մէկ էլ քարի կտոր:

Ծառը բուսնում է, մեծանում է. բայց քարը կայ-  
ինչպէս եղել է. չէ մեծանում: Ծառի վրայ ամառը տե-  
րևներ, ծաղիկներ և պտուղներ են երևում. բայց քա-  
րի վրայ այդպէս բան ոչ մէկ ժամանակ չէք տեսնիլ:  
Ամառ ձմեռ մէկ տեսակ է քարը:

Ծառի տերևը նման չէ ճիւղերին, արմատը նման

չէ ծաղիկներին և ծաղիկները նման չեն պտուղներին. բոլորն էլ զանազան են: Բայց որ վեր առնես, կոտորես քարը, կրտսնես, որ ամեն կտորն էլ քար է և նման է այն մեծ քարին, որից կտարուել է: Ծառը որ կտրես ամառը, միջից հիւթ է դուրս գալիս, քարը որ կտրես, ոչինչ չէ դուրս գալիս միջիցը: Ծառը որ կտրես, կամ արմատով հանես տեղիցը, կրակի չորանալ. յետոյ չորացած ծառը որ տնկես հողումը, էլ չի ծաղկի, կրփախ: Բայց որ քարը վերառնես իրա տեղիցը և ինչ-տեղ ուզենաս տանես, էլի այն քարը կը լինի, ամենևին չի փոխուիլ: Սրանից երևում է, որ ծառն ապրում է, բայց քարը չէ, և որովհետև չէ ապրում, կեանք չունի, մեռնել էլ չէ կարող. մեռնում են միայն ապրողները:

Քարի պէս են նմանապէս հողը, երկաթը, ոսկին, արծաթը, պղինձը և աղը:



Ա Ր Ե Գ Ա Կ:

Երկու երեխաներ՝ Տիգրանն ու Սահակը բարձրացան մէկ սարի դուլս և, խոտի վրայ պառկած, արեգակի վրայ դատողութիւն էին անում: Ս, յետեղ քահանայի որդին էլ, որ ուսումնարանումն աշակերտ էր, մօտ գնաց և լսում էր նրանց խօսակցութեանը: — Չէ, ես լաւ գիտեմ, ասաց Տիգրանը, որ այստեղից մինչև արեգակը քսան վերստ է: Սահակը չէր համաձայնում, ասելով թէ «՛հպէս կարելի է, որ այդքան հեռու լինի:»

Քահանայի որդին, որ այս բանը սովորել էր, ծի-

Ճաղելով ասաց— Ի՞նչ էք կարծում, արեգակը մեծ է թէ փոքր: Սահակը առանց մտածելու ասաց, թէ մէկ թխած հացի չափ է:— Չէ՛ մէկ տան չափ կը լինի, ասաց Տիգրանը:»

Թուք երկուսը էլ չըզիտէք, ասաց քահանայի որդին. արեգակը մեր երկրիցն էլ շատ ու շատ մեծ է և երկու երեխաներն էլ զարմացան:— Ուրեմն ինչի՞ պատճառով ասաց Տիգրանը:»

— Այն պատճառով, որ նա մեզանից շատ հեռու է ասաց քահանայի որդին: Եթէ թնդանօղի գետակը, որ ինչպէս շուտ է թռչում, թռչելով գնար այս մեր երկրիցը դէպի արեգակը, էլ կը քաշէր այդ ճանապարհորդութիւնը քսան տարի:»

Երկու երեխաներն էլ բերանները բաց մնացին:— Ապա լուսինն ի՞նչքան տեւի մեծ կը լինի, զուտը թափախելով ասաց Սահակը:

— Ինչի՞ ես այդպէս կարծում, ասաց քահանայի որդին. լուսինն այն պատճառով է մեզ մեծ երեւում, որ ուղհեաւ նա արեգակի պէս հեռու է մեզանից: Յետոյ քահանայի որդին սկսեց սրանցը պատմել ինչ որ գիտէր արեգակի և լուսնի վրայ:

Խ Ե Լ Օ Ք Ո Ր Դ Ը:

Մէկ սարդափումն օձոքից կախ էր արած մեծ կտոր բոլորակաձև պանիր, որ մկները չուտեն, բայց մրկանրի փոխանակ պանրի մէջ արդէն որդերն էին բուն

զրեւէ: Այդ որդներէից մէկը շատ խելօք էր: Մէկ օր  
 դառնալէն իմանալ թէ այն պանիրը, որի վրայ ինքը գր-  
 տնդում էր, ի՞նչ ձև ունէ: Սարգսիւմը կային էլ կախ-  
 արած մէկ քանի կտոր պանիրներ ու սրանք բոլորն էլ  
 բարբախտած էին, բայց որդներն այնպէս կարծեցին,  
 թէ իրանց պանիրը ապակի է: որովհետեւ երբ որ պան-  
 րն երեւն էին գուրս գալիս, նրանցն այրուէս էր թը-  
 վում: այդ պատճառով էլ խելօք սրբը ճանապարհ-  
 քնիւ, սկսեց գնալ ուղիւ մէկ կողմը և մէկ քանի օ-  
 րից յետոյ զխնացի կողմիցը եկաւ էլն այնտեղ, որտե-  
 ղեց որ ճանապարհ էր քնկել: — Այժմ ես գիտեմ, ա-  
 սաց որդը, որ մեր պանիրը բոլորակա՞ն է: Ես ճա-  
 նապարհին միշտ գնում էի ուղիղ և ուղղակի յետ ե-  
 կայ էլն այնտեղ, որտեղեց էլ որ գուրս էի եկել. թէ-  
 պէտ երբեմն տեղ անդ պատահեցան ինձ փոսեր, որ  
 մենք փորել ենք ու կերել, երբեմն պատահեցան ինձ  
 փոքրիկ սարեր, վեր գուրս կրած փշրանքից փոխացած,  
 բայց այդ փոսերն էլ ու սարերն էլ, համեմատելով պան-  
 րի մեծութեան հետ, ոչինչ են որ սրանից է, որ մեր  
 պանիրի ձևը է փոխում:»

Այն սարգսիւմը կախ էր արած մէկ կանթեղ,  
 որ գիշերները վառ էր լինում: Երբ որ մեր խելօք որդը  
 յայտնեց իրա գիւտը միւս որդներին, սրա ընկեր-  
 ներից մէկը նմանապէս ուզեց ճանապարհորդութիւն  
 անել, որ ինքն էլ խմանայ պանրի բոլորակա՞ն ու-  
 թիւնը: Այս իրա գիտաւորութիւնը յայտնեց խելօք  
 որդնին:

— Իպուր կըլնի այդ ճանապարհորդութիւնը, պա-

տասխանս տուեց նա. եթէ ուզում ես իմանալ մեր պանրի բոլորակաձևութիւնը, ահա, նայէ՛ այն ստուերին, որ պատի վրայ է. այդ մեր պանրի ստուերն է. տես ստուերը բոլորակաձև է, և երբ որ այս սարդափի տէրը դայ ու ճրագն այս կողմն այն կողմը տանէ, դու նայէ՛, որ կողմից էլ լինի ճրագի լոյսը, մեր պանրի ստուերը բոլորակաձև կը լինի. ուրեմն դրանից հետևում է, որ ինքը պանիրն էլ բոլորակաձև է: Ես շատ ժամանակ է, որ նկատում եմ այդ: Մէկ գիշեր սարդափի տէրը ներս եկաւ այստեղ ձեռին մէկ թեփշի. այդ թեփշու ստուերը երբեմն բոլորակաձև էր. և երբեմն օստիակ, երբեմն նման էր լինում մէկ բարակ խաղին, նայելով թէ ինչպէս ունէր նա բռնած ձեռին: Այս բանը թեփշու տասխանութենիցն է: Բայց մեր պանրի ստուերը միշտ մտում է բոլորակաձև. ուրեմն մեր պանիրն ինքն էլ բոլորակաձև է, ինչպէս ձմերուկը կամ ինչպէս մէկ գունտը: »

Այս բոլոր տեղեկութիւնները շուտով միւս սրդանրի հետաքրքրութիւնը շարժեցին. նրանք էլ ըսկեցին ուշք ու մտքով քննել և շուտով էլի նոր տեղեկութիւններ ստացան իրանց պանրի գնտաձև լինելու մասին: Թրինակ, նրանք նկատեցին, որ երբ իրանք մօտ են գնում թուկին, որից կախ էր արած պանիրը. թուկը երկարանում էր, իսկ եթէ հեռանում էին, թուկը կարճ էր թվում: Նմանապէս տեսան, որ սարդափումը վառած կանթեղը չէ թէ բոլոր պանիրն էր լուաւորում, այլ, միայն պանրի մէկ կողմը. իսկ երբ որ սարդափի տէրը ճրագը այս կողմն այն կողմն էր տանում, այն ժամանակ ճրագի լոյսը մէկ քանի որդներն առաջ էին

տեսնում, միւսները ուշ: Այս բոլոր տեղեկութիւններից նրանք հասկացան, որ իրանց բնակարանը պանիրը գնտաձև է:



### ՏԱՐՈՒԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ:

ՈՐԴՈՒ. Հայր իմ, ինչն ամառն արեգակն այրում է մեզ, իսկ ձմեռը՝ չէ. երևի ամառն աւելի մօտիկ է մեզանից արեգակը:

ՀԱՅՐ. Չէ, որդի', ձմեռն աւելի մօտիկ է մեզանից արեգակը քան թէ ամառը, բայց նրա հեռու և մօտիկ լինելուց չէ կախուած նրա ջերմութեան աստիճանը. քանը նրա դուրսիւնն է երկնքումը: Վեր առ ձմեռուան մէկ պարզ օր ու կէսօրին նայէ դէպի երկինքը. միւսնոյնն արա ամառուան մէկ պարզ կէսօրին. կրտսնես, որ ամառուան արեգակն աւելի բարձր է կանգնած երկնքումը, քան թէ ձմեռուանը. բայց քանի որ բարրը է արեգակը, այնքան նրա ճառագայթները մեզ վրայ ուղղակի են ցած գալիս և այդ պատճառով աւելի շոգ է լինում: Այս բանը դու կարող ես նկատել ամեն առաւօտ և երեկոյ. օրովհետև այդ ժամանակներն այնքան չեն այրում մեզ ճառագայթները, ինչքան ճաշի ժամանակ, երբ ուղղակի ցած է գալիս մեզ վրայ լոյսն ու աւելի շոգ է լինում: Բացի դրանից ամառը տեսնում ենք, որ արեգակն աւելի վաղ է ծագում և ուշ մայր մտնում, ուրեմն աւելի շատ ժամանակ ունի երկրի տաքացնելու: Այդպէս ահա ինչքան բարձր է արեգակը մեզ վրայ կանգնած, ինչքան աւելի ուղիղ են գա-

իս մեզ վրայ նրա ճառագայթները և ինչքան երկար է նա մեզ լուսաւորում իրա ծագելուց սկսած մինչև մայր մտները, այնքան աւելի տաքութիւն է տալիս նա ու այնքան աւելի շոգ է լինում:

Զմեռն արեգակն աւելի մօտ է դէպի մեզ, այս պատճառով էլ նրա ճառագայթները փափում են և ուղղակի չեն վեր գալիս մեզ վրայ ինչպէս ամառը և չեն կարողանում ամառուան պէս տաքացնել երկիրը: Բացի սրանից, ձմեռն արեգակն ուշ է ծագում և վաղ մայր մտնում. հազիւ թէ մէկ տեղ նոր սկսում է տաքացնել, որ ահա մայր է մտնում, այսինքն գնում է ուրիշ երկիրների տաքացնելու: Այս պատճառով էլ ձմեռը կարճ ու ցուրտ օրեր են լինում: Այդպէս ահա ինչքան կարճ ժամանակ է նա լուսաւորում երկիրը, այնքան աւելի ցուրտ է լինում մեր երկրումը:

Պու նկատած կը լինես, որ ամառուան տաքութիւնը յանկարծ չէ փոխվում ձմեռուան ցրտի: Այլ ձմեռուան ցրտից յետոյ կամաց կամաց օրերը տաքանում են և յետն ու յետը մօտկանում են ամառուան տաք օրերին: Ամառուան տաք օրերն էլ, յետն ու յետը սառչելով, զառնում են ձմեռուան օրեր: Զմեռուան ցուրտ օրերից դէպի ամառուան տաք օրերն անցկենալուն ասում ենք Գարուն, իսկ ամառուան շոգերից դէպի ձմեռուան ցուրտն անցկենալուն ասում ենք Աշուն: Չորս ժամանակները՝ Գարունը, Ամառը, Աշունը և Չմեռը կազմում են մէկ ամբողջ տարի և կոչվում են տարուան չորս եղանակներ:

ԱՄՍՈՌՈՒՅՆ ՇՈՂԵՐ:

Ամառուան շոգ օրերից մէկն էր: Երեխան քրր-  
տինքը սրբելով, լալով դանգաառուեց մօրը, որ շոգից  
դժուարանում է մինչև անգամ շունչ քաշել:

— Թէ ինչի՞ է այժմ այսպէս շոգ, ի՞նչ է սրա օգու-  
տը, ես քեզ մէկ ուրիշ ժամանակ կասեմ, պատասխան  
տուեց մայրը, բայց առ այժմ այսքանը գիտացիր, որ  
Նա, ով որ հրամայում է այսպէս շոգ լինիլ, կոչվում է  
Աստուած և այդ բարի Հայրն այնպիսի բան է անում,  
որ մեզ համար վատ լինի:»

Երեխան լռեց հաւատալով մօր ասածին, որով-  
հետեւ մայրը նրան միշտ ճշմարիտ բաներ էր սովորեց-  
րել: Երեխան միայն աշխատում էր առանց արօնջարու-  
համբերութենով տանել ամառուան շոգին:

Անցկացաւ Օգոստոս ամիսն ու շոգերն էլ վեր-  
ջացան: Աշնան հով օրերը կասես թէ հրաւիրում էին  
երեխային դէպի այգին: Այգումը մրգերը հասել էին  
ու խաղողե քաղելու ժամանակն էր:

Երեխան չափեցը դուրս ուրախութեան մէջն էր,  
երբ տեսաւ կարմրած խնձորները, սև ու սպիտակ խա-  
ղողի ձթերը, դեղնած ու կարմրած դեղձերը, սև թը-  
զերն ու հասած հիւթալի տանձերը:

— Մայր իմ, ի՞նչ գեղեցիկ մրգեր է տուել մեզ  
Աստուած: Ի՞նչպէս բարի է Նա, որ այսպէս սիրում է  
Նա մեզ:»

«Սիրելիդ իմ, միտդ բեր որ մէկ ամիս առաջ, շո-  
գերի ժամանակը, դու ինչպէս էիր նեղանում, թէ ին-  
չի՞ է շոգ. ահա այն քո նեղացնող շոգերն էին, որ այս

պտողներին տուին այս գեղեցիկ գոյնը և անոյշ համը :  
Ահա շագերի տուած օգուտը , որ առաջ գու չէիր հաս-  
կանում :

ԱՌԱՅ.

Մենք ենք շտապում , Աստուած չէ շտապում :

ԱՐԵՂԱԿԻ ՓԱՅԼՈՒՄՆ ՈՒ ԱՆՁՐԵԻԸ :

« Ա՛խ , երանի թէ միշտ փայլէր արեգակը , » ասում էին մէկ օր երեխաները , երբ որ դուրսն ամպած էր և անձրև էր գալիս : Երեխաների ցանկութիւնը շուտով կատարուեց . երկու ամիս շարունակ երկնքումն ամպ չեղևեց . շոգից դաշտերն ու այգիներն սկսեցին չորանալ , վերջապէս այն գիւղը փոքրիկ աղբիւրն էլ , որից որ ջուր էին խմում , նա էլ սկսեց ցամաքիլ : Երեխաներն իրարանց ծնողների հետ միասին յուսահատութեան մէջ ջրն էին :

« Տեսէ՛ք , ասաց մայրը , ահա անձրևն էլ այնքան օգտաւէտ է լինում , որքան և փայլուն արևը : »

ԱՌԱՅ.

Ամեն բանն իրա տեղն ունի :

ԾԻՏՆ ՈՒ ԵՐԵՆՍԱՆ :

Մէկ ցուրտ օր սաստիկ քամի էր դուրսը , երկնքումը մէկ թռչուն էլ չէր երևում , ամենքն իրանց բրններն էին մտել : Մէկ փոքրիկ ծիւս ցրախցն ու քամուցը նեղացած ու իր բոյնը կորցրած , եկաւ նստեց Ստեփաննեց տան պատուհանի առաջը : Ամեն մարդ , ով

որ տեսնէր, կը խղճար ու ողորմելի թռչունին ձեռից եկած օգնութիւնը կտար. բայց Ստեփանն ընդհակառակը, ոչ միայն չըզթաց թռչունի վրայ, այլ տեսնելով որ նեղ դրութեան մէջն է ու հեշտ բռնելու է, բռնեց ու սկսեց հեան այնպէս խաղալ, ինչպէս կատուն մկան հետ: Միտն սկսեց ծվծուալ, այս կողմն ընկնիլ, այն կողմն ընկնիլ. վերջը շունչը տուեց և փայտի պէս չորացաւ:

Մէկ քանի օրից յետոյ Ստեփանը մտաւ անտառ, որ իրանց տանից հեռու չէր. փոքր ինչ հեռացաւ անտառի մէջն ու երբ որ ուզեց յետ դառնալ, ճանապարհը կորցեց: Որքան աշխատում էր դուրս գալ մութն անտառից, այնքան ատելի խորն էր մտնում և իրանց տանից հեռանում: Կամաց կամաց սկսեց մութն ընկնիլ ու ցրտիլ: Ստեփանը լաց էր լինում, բարձր գոռում էր, բայց բոլորն անօգուտ անցկացաւ: Այս ժամանակ մտողը մէկ գիւղացի էր անցկենում. սա լսելով երեսայի ձայնը՝ եկաւ, վեր առաւ. համարեա թէ սառած Ստեփանին, փաթաթեց իրա շորերումը և տարաւ նրա հօր մօտ:

Լաւ կը լինէր եթէ Ստեփանի հետ էլ այնպէս վարուէր գիւղացին, ինչպէս Ստեփանը վարուեց ծախ հետ:

ԲԱՐԻ ՀԱՅՐ:

Մէկ բարի մարդ թողել էր իրա կինն ու որդիքը գիւղումը և ինքը գնացել էր մեծ քաղաքումն էր կե-

նում. այնտեղից ուղարկում էր նրանց համար ապրուստ  
ար: Մէկ անգամ հայրն ուղարկեց իրա ընտանիքի հա-  
մար մէկ հակը զանազան թանգազին բաներով: Լիբը,  
մէջն էլ մէկ նամակ էր գրել: Նամակումը գրած էր,  
թէ « սիրելի որդիք, միշտ խոնարհ և բարի եղէք և  
շուտով կրգաք ինձ մօտ: Աւրախացիք, որովհետև այն  
տունը, որ պատրաստում եմ ձեզ համար այստեղ, ա-  
ւելի մեծ և թանգազին պարգևներով լիքն է:»

Որդեբրանցը շատ ուրախացրեց այս նամակը և  
ստացած պարգևներն ու խօսք տուին միմեանց կատա-  
րել իրանց հօր կամքը: « Ի՞նչ ուրախութիւն կը լինի, ա-  
սացին երեխաները, մեր բարի հօր տեսնելը:»

Երեխաների մայրը լսում էր այս բաները: Նա ա-  
սաց իրա որդեբրանցը, թէ «իմ սիրելի զաւակներ, դուք  
գիտէ՞ք, որ մեր Երկնաւոր Հայրն էլ ձեր հօր պէս է  
վարվում մեզ հետ: Իհարկէ մենք, մարդիքս, զեռ չենք  
տեսնում Աստուծուն, բայց Նա տալիս է մեզ ամեն  
օր իրա պարգևները. արեգակը, լուսինը, աստղերը, ծա-  
ղիկները և պտուղներն ու սրանով ցոյց է տալիս Նա  
մեզ իրա սէրը: Աստուածաշունչն էլ մեր Ստեղծողի  
մեզ մօտ գրած նամակն է: Այդ նամակով Աստուած  
մեզ յայտնում է իրա կամքը և խոստանում է մեզ ար-  
քայութիւն:»

« Աւրեմն սիրենք Աստուծուն, կատարենք նրա հը-  
րամանները և միշտ արքայութիւնը միտներս բերելով  
ուրախանանք:»

ԱՌՍԵՆԵՐ.

Աջքէն հեռու, սրտէն էլ հեռու:

ինքն այստեղ չէ, իրա փայ Աստուածն այստեղ է:

Ե Կ Ե Ղ Ե Տ Ի:

Երբ որ մէկ գիւղ ես մտնում, ամեն բանիցն առաջ ի՞նչ ես տեսնում: — Եկեղեցին: Եկեղեցին ամեն տներից բարձր է շինած այնպէս, որ նրա զանգակատունը շատ հեռուից կարող ես տեսնել: Եկեղեցին միւս տներից մեծ է և նրանցից հեռու է շինած, նա միւս տների նման չէ: Այլ մէկ տուն չէ մտնում գիւղի բոլոր ժողովուրդը, բայց եկեղեցուն ամեն մարդ անդուն է՝ մեծըն էլ, փոքրն էլ, հարուստն էլ, աղքատն էլ, հիւանդն էլ և առողջն էլ: Ամենքը հաւատար են Աստուծու առաջը:

Քեզ երեխայ ժամանակ եկեղեցուն են մկրտել եկեղեցունը կրպակեն քեզ, երբ որ մեծանաս: Երբ որ մեռնես՝ նմանապէս եկեղեցին կրտսնեն քեզ և եկեղեցուն մտ կրթաղեն: Եկեղեցուն մտն են լինում թաղանձ նմանապէս բոհայրը, մայրը և պապերը: Ես

Ուրեմն եկեղեցին և հասարակ տները միեւնոյն չեն և շատարակ տանը դու կարող ես բարեկամ էլ տեսնալ, թշնամի էլ: Բայց եկեղեցունը, Աստուծու տանը, թըշնամիներդ էլ հանում են իրանց սրտից ոխը և ատելութիւնը, մոռանում են չարութիւնը և բարեկամանում են քեզ:

ՀԱՆՍՏԵՐՄԱՌԹԻՆ  
 Կռայապաշտների թագաւորը կանչեց իրա մօտ մէկ քրիստոնեայ եպիսկոպոս և հրամայեց նրան, որ թողնէ իր հաւատը և կուռք պաշտէ: Եպիսկոպոսը խոնարհօթեանով պատասխան տուեց նրան, թէ « թագաւոր, ես չեմ կարող կատարել ձեր հրամանը:» Բարկացաւ թագաւորը և գոռաց նրա վրայ, թէ « Ի՞նչպէս կրհամարձակուիս ինձ ընդդիմանալ, դու չես իմանում, որ քո կեանքն իմ ձեռին է, ես այս րոպէին սպանել կրտամ:» քեզ:

«Գիտեմ, պատասխան տուեց եպիսկոպոսը, որ այդ բանը կարող էք անել: Բայց խնայե՛ք ինձ: Ես չեմ կրտամ լիարարտ և յետոյ վճռեցէք գործը: Ասե՛ք, թէ քո հաւատարիմ ծառաներից մէկն ընկնի թշնամու ձեռք և նրան հարկադրեն, որ քեզ թշնամութեան անկէ: Բայց քո ծառան իրա հաւատարմութիւնը ընդդիմէ և թողնէ նա՛մ ինքնը: Այդ բանի համար հանեն նրա շորերը և մերկացրած գոլորտ անեն ծաղրելով: Երբ որ այն ծառայ քեզ մօտ գայ, ի՞նչպէս կրհամարձակուի նրան, չէ՞ որ կրտաս նրան լաւ շորեր ու թշնամութիւն էլ կրպատեն:»


— «Իհարկէ պատասխան տուեց թագաւորը, այդպէս կրլինի: Բայց այս գործի հետ ի՞նչ կայ ունի սասանդ:»

Այն ժամանակը եպիսկոպոսը հանդարտ կերպով պատգ նրան, թէ « թագաւոր, դու կարող ես իմ այս աշխարհի շորերը հանել: Կեանքս խել, բայց իմ թագաւորը կրտայ ինձ այն աշխարհումն աւելի լաւ շորեր ունչ ապիտոսալու: Ե այս աշխարհի շորերս քեզ կրլինի թող, և թէ կուրիս խել ինձանից, ես ուրախ եմ կրլինեմ:»

Թագաւորը զղջաց ու ասաց եպիսկոպոսին, թէ  
«գնա, պաշտէ քո Աստուածը, ես չեմ զիպչում այս  
աշխարհի շորերիդ. ազատ ես:»

ԱՌԱՅ.

Աստուած կանչողը մաղբուն չի մնալ:



ՄԱՐԴՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ:

Մէկ հայր իրա որդիներանցը պատմեց այս առա-  
կը. թէ «մէկ թագաւոր ուղարկել էր իրա թագաւորու-  
թեանը պատկանած կղզին կառավարելու համար մէկ  
կուսակալ: Այս կուսակալը շատ տարի կառավարելուց  
յետոյ, պէտք է գնար իրա թագաւորի մօտ հաշիւ տա-  
լու: Այն բարեկամները, որոնց վըայ սա աւելի յոյս ու-  
նէր, տեղիցն էլ չըշարժուեցան, չըզնացին նրան դոնեա  
մինչև նաւը ճանապարհ զցելու: Միւս բարեկամները, ո-  
րոնք սրան միշտ ասում էին, թէ ամեն տեղ պատրաստ  
են նրա հետ գնալու, ճանապարհ զցեցին մինչև նաւը:  
բայց այն բարեկամները, որոնց վըայ շատ քիչ յոյս ու-  
նէր, գնացին նրա հետ մինչև թագաւորի պալատը և  
այնտեղ խօսում էին նրա կողմը և բարեխօսութիւն էին  
անում թագաւորի առաջ նրա համար:

Որդիքը չըհասկացան այն առակի զօրութիւնը:  
Հայրը յետոյ մեկնեց նրանց, թէ այս աշխարհումը  
մարդս երեք տեսակ բարեկամներ ունէ և նրանցը ճա-  
նաչում է միայն այն ժամանակը, երբ որ այս աշխարհից  
գնում է միւս աշխարհ, Աստուծուն հաշիւ տալու: Մար-

դու առաջին բարեկամը փողն է և կայքը. այս բարեկամները մարդու հետ չեն գնում բոլորովին: Միւս բարեկամները ազգականներն են և ծանօթները, որոնք որ ճանապարհ են գցում մարդուն մինչև գերեզմանատունը: Երրորդ տեսակ բարեկամները մարդու բարի գործերն են, որ գնում են նրա հետ ու Երկնաւոր թագաւորի առաջ բարեխօսութիւն են անում մարդու համար: »

---

ԱՌԱՅ.

Այստեղ խտիր (ճիւղօք) տուր, այնտեղ գորգ (խալիչա) կը աւամ:



ՃՇՄԱՐԻՏ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ:

Մէկ գիւղի քահանայ երկար ժամանակ քահանայութիւն էր անում և իր եկեղեցու եկամտից ժողովել էր հարիւր մանէթ: Նա ուզում էր այն փողերով նոր սկիհ աւնել, որովհետեւ իրանց եկեղեցու սկիհը բոլորովին հնացել էր և էլ յարմար չէր քրիստոսի սուրբ արիւնի և մարմնի մէջը պահելու: Քահանան շուտով ճանապարհ ընկաւ դէպի քաղսք և քաղաքումը սկիհի խանութի հարցումիորձ անելիս, մէկ տան բակիցը ձայներ լսեց ու կամեցաւ իմանալ, թէ ինչի՞ համար են գոռում, գոչում: Մտաւ տուն, տեսաւ որ պօլիցիական աստիճանաւորը կանգնած մուրճը (չաքուճը) ձեռին ծախում է սեղանի վրայ դարձած մէկ խեղճ մարդու պղնձները, ամանները, շորերը և տան

զանազան ուրիշ հարկաւոր քաները: Եւ ի՞նչ մարդը  
 կանգնած էր գուան տալեր և շարժ նայում էր այն  
 քաների ծախելուն: Քահանան գնաց այն մարդը և աս-  
 քեւ քաղցր ձայնով տասց նրան, թէ «ինչէ՞ ես ծախում  
 քո տան կարգն ու սարգը:»

— Այ թէ ես եմ ծախում, տէր հայր, պատասխան  
 տու եղ խեղճը, այլ պոխցիան, որովհետեւ տանտերս գան-  
 գատ էր գնացել ինձ վրայ: Այս երկու տարի է, ինչ  
 որ հիւանդ պառկած էի և չէի կարողանում փող աշ-  
 խատել, պարտքի տակն ընկայ և այդ պատճառով ծա-  
 խում եմ իմ տան սարգն ու կարգը, պարտքերիս վճա-  
 րելու համար: Քայց ի՞նչ պէտք է անեմ յետոյ միայն  
 Աստուած գիտէ:»

Քահանան ասաց այն րուպէին պոխցիականին, թէ  
 «համբերեցէք, ի՞նչ քան է պարտական այս մարդը»

— Հարիւր ու հինգ մանէթ աւ երեսուն ու հինգ կո-  
 տէկ: Քահանան հանեց գրպանիցը ակի հի հարիւր ման-  
 թը և իրա փողիցն էլ աւելացրուց պակաս շուտուեց  
 այն խեղճ մարդու պարտատիրոջը: Եւ ի՞նչ ցոյց տուց

— Եւ ի՞նչ մարդը վեր առաւ իրա տան սարգն ու կարգը  
 և արտասուք թափելով շնորհակալութիւն արաւ Քա-  
 հանային: Եւ ի՞նչ արեց շարասանը խոսուց մամ  
 մամ: Յետոյ առաւ Քահանան իրանց գիւղը և գլխավեց  
 իրա ժողովրդին այս անցքը վերջն էլ աւելացրուց թէ  
 «մաս չունէ, ես առաջուն պէս հին ապիհն մեկտր  
 պահեմ արքու թիւնը: Ես կարծում եմ, որ արտառուակի  
 ծնած մեր Աստուծուն պէտք հաճելի կը լինին մեր աշ-  
 րած բարեգործութիւնը, քան թէ նրա մարմնի և ար-

ըրևնի պահելու համար նոր ոսկէ սկիհի առնելը։»

ԱՌՍԵ.

Մարդ այնպիսի բան պիտի անէ՞, որ մէկ անուռն  
պստեղ թողնէ, մէկն էլ այնտեղ տանէ:



## ԵՐԵՒԱՅԱԿԱՆ ԵՐԳԵՐ:

1

Լուսացաւ, լուսացաւ,  
Լուսն է բարին,  
Ծիտն է ծառին,  
Հաւն է թառին:

Մոյլ մարդկանց քունն է տարի:  
Աշխատաւոր, վեր կաց բանիդ:  
Երկնքի դռները բաց էր,  
Ոսկէ աթուռն դրած էր,  
Քրիստոս վերէն նրստած էր,  
Լուսաւորիչն կանգնած էր,  
Ոսկէ գրիչն բռնած էր,  
Մեծ ու պրտիկ գրում էր,  
Մեղաւորներն լալում էին,  
Արդարներն խաղում էին:

2

Արգակ, արեգակ, դուս արի,  
Հէրն ու մերդ եկիլ է,  
Օսկէ քիթներիլ է,

Պատի ծակը դրիւ է,  
Մուկն էկիւ է աարիւ է,  
Կատուն էղնէն վազիւ է,  
Գոմշի վուտը կոտրիւ է,  
Աղամանը վեթիւ է:

---

### 3

Էգուց կիրակի է,  
Կոկոմ քաղելու է.  
Կոկոմ քաղեմ, դէդին տամ.  
Դէդէն մէ ինձ գառը տայ.  
Գառը տանեմ Աստուծոն տամ.  
Աստուած ինձ մէկ ախպէր տայ:  
Ախպէր, ախպէր, ես քու շուն,  
Գօտկի ծերին արբեշում,  
Արբեշում չըլի, կազ ըլի,  
Սուփրի ծերին սազ ըլի:

---

### 4

- Ինչո՞ւ կուլաս դուն, գառնիկ:  
«Իխտ ծեծ կերայ ես, մարիկ»:
- Ո՞վ ծեծեց քեզ, գառնիկ:  
«Մէկ ծեր կախարդ մը կընիկ»:
- Ընտո՞ր ծեծեց քեզ, գառնիկ:  
«Ծառին տակը, իս, մարիկ»:
- Ինչո՞վ ծեծեց քեզ, գառնիկ:  
«Մէկ պասթօնով մը մարիկ»:

— Որ տեղի վարկեց քեզ, գառնիկ:

«Ուրընկերուս, իմ մարիկ»:

— Ինչպէս լացիր դուն, գառնիկ:

«Մէ, մէ, մէ, մէ, իմ մարիկ»:

5

Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր,

Հողով դեռ արի, գլխով ակոր:

Մեծ ծով էր պատել նորա աշխարհը,

Ոսկի ասացին գիտունք այն դարը:

Ունէր նա երկու մատաղհաս աղջիկ,

Մինը խիստ տրգեղ, միւսը գեղեցիկ:

Մի օր տրգեղը ասաց միւսին,

«Երթամք ծովի ակի, քուրիկ միասին»:

Սիրունը գնաց առաջից արտում, թ

Տրգեղը ետնից ոխ պահած արտում:

Հագիւ թէ ծովի ակին էր հասած,

Իր սիրուն քրորջ դուրեց նա ցած:

Կանչեց կիսամեռ սիրունը ջրից:

«Քուրիկ իմ, քուրիկ, փրկէ՛ ինձ մահից:

Ես ունիմ տանը գեղեցիկ մանեակ,

Ա՛ռ, էն քեզ լինի, պարգևէ՛ ինձ կեանք» . . .

— Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,

Ինձնից փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ:—

«Քուրիկ, թէ այդ էլ քեզ չէ բաւական,

Կուտամ քեզ ոսկի պրսակ պատուական»:

— Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,

ինձնից փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ :  
« Բուրիկ մի՛ թողնիլ դու ինձ անտէրունչ,  
Բեզ սիրուն փեսաս կուտամ անորաունջ :  
Տըզեղի սիրտը դարձել էր ժեռ քար,  
Բրոջ խնդիրքը թողեց անկատար :  
Ձկնորսը ծովը ձրզեց մեծ ուռկան,  
Բռնեց մարմինը սիրուն աղջկան,  
Չքոհցր հանեց, ցրեց ասի մօտ,  
Շատ ծաղիկ ցանեց վերան ու շատ խոտ :  
Մի աշուղ անցաւ, անսաւ աղջկան,  
Լացեց ու առաւ զրեց ուսի վրան :  
Տարաւ իրա սուն այդ անգին գիւտը,  
Ձորացրուց նորա դիմ մարմնու հիւթը :  
Գեղեցիկ տաւիղ շինեց ոսկերից,  
Քաղցրաձայն լարեր հիւտեց մագերից :  
Երբ որ ամեն բան պատրաստեց կարգին,  
Գնաց արքունիք տաւիղը ձեռքին :  
Երբ մտաւ դահլիճ շքեղ վարդարած,  
Տեսաւ տրպեղին փեսի մօտ կանդնած :  
Բացեց բերանը լարերին խփեց,  
Հիւրերի առջև քաղցրաձայն երգեց :  
« Անչէ, իմ տաւիղ, հնչէ համարձակ,  
« Հարազատ քոյրս խըլեց իմ փեսան :  
« Զարազատ քոյրս լարեց ինձ ծով ու  
Միւս օր դահլիճ խարոյկ վառեցին,  
Մահապարտ քրոջ մէջը գրորեցին :  
Հորը սրբալաց, աղջիկը կանչեց :  
« Ես քեզ անկապ համար Աստուած ինձ պատժեց :»

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵՆԻՑ ՔԱՂՈՒՍԾ:

## ՀԱՅԿ:

Մենք, հայրերս սրանից 4000 տարի առաջ մէկ նախահայր, մեծ պապ ունէինք, որի անունն էր Հայկ: Իա շատ քաջ մարդ էր ու ճշմարիտ Աստուած էր պաշտում և որովհետև այն ժամանակուան թագաւոր Բէլն ուզում էր իրան ճշմարիտ Աստուծու տեղ պաշտել տալ, սրա համար էլ մեր պապ Հայկը ժողովեց իր որդքերանցն ու թոռներին ու եկեալ Արարատ սարի մօտ բնակուեցաւ: Թագաւորն իմանալով, որ Հայկն իրան Աստուծու տեղ չէ ուզում պաշտել, քարկնցաւ, մեծ զօրք ժողովեց ու եկեալ Հայկին հնազանդեցնելու: Բայց Հայկն իր որդքերանցովն ու թոռներովն դուրս գնաց նրա դէմ պատերազմելու: Կռուի ժամանակը Հայկը զրցեց նետը, թագաւորի կուրծքի պինձէ տախտակը, վահանը, ծակուեց ու նետը խրուեց սրտը: Մտաւ իսկուհին մեռաւ այն ու թեղ թագաւոր Բէլը և նրա զօրքն էլ տեսնելով իրանց ափրօջ մեռնելը՝ վախաւ, դնաց իրանց երկիրը: Հայկն այդ պատերազմի դաշտում մէկ քաղաք շինեց, անունը պրեց Հայք և մտած թագաւորի մարմինը մէկ բարձր տեղ թաղեց, որ ամենքն էլ տեսնեն և միտք բերեն Հայկի քաջութիւնը: Մեր աշխարհը Հայկի անունով Հայաստան ասուեցաւ և մենք

էլ, նրա թռռներս ասվում ենք՝ հայ: Հայկը մէկ թռռն  
 ունէր անունը Շարայ, որ սաստիկ շատակեր մարդ էր և  
 այս պատճառով էլ Շարան իրա անով տեղով գնաց  
 Հայաստանի պտղաւէտ երկրումը բնակուեց: Նրա կա-  
 ցած երկրի անունն իրա անունով Շիրակ ասուեցաւ: Շի-  
 րակին հիմի Շորագեալ ենք ասում: Մինչև այժմ էլ  
 սովորութիւն կայ, որ Հայաստանումը շատակեր մարդ-  
 կանցը ասում են, թէ յետէ քո փորը Շարայի փորն է,  
 մեր ամբարները Շերակայ կամ Շորագեալի ամբարնե-  
 րը չեն: »

ԱՐԱՅ ԳԵՂԵՑԻԿ:

Ասորեացեանի թագուհի Շամիրամը լսելով, որ մեր  
 թագաւոր Արան շատ գեղեցիկ մարդ էր, մարդ ուղար-  
 ճեց բարեխօսելու, որ իրան ուզէ: Բայց Արան չըկամե-  
 ցաւ: Շամիրամը բարկացաւ ու մտքումը դրեց ուժով  
 Արային իր մարդ շինել: զօրքով լեկաւ Հայաստան, որ  
 Արայի հետ կռուի, յաղթէ ու նրան բռնէ: Թագուն էլ  
 հրամայեց իր զօրքին, որ պատերազմի ժամանակն աշ-  
 խատէն Արային չըսպանել ու կենդանի բերեն իրա մօտ:  
 Բայց կռուի ժամանակն Արան այնպէս բարկացած կա-  
 տաղած վրայ վազեց իր թշնամուն, որ Շամիրամի զին-  
 ւորները չըճանաչելով ապանեցին Արային: Շամիրամը  
 հրամայեց, որ մեռածների մէջը գանեն Արայի մարմի-  
 նը: Բերել տուեց մարմինը և վրէժն սուգ արաւ ու յու-  
 սա հատած յետ գնաց Հայաստանիցը: Շամիրամը Հայաս-  
 տանումը Անայ ծովի մօտ մէկ բարձր տեղ բերդ ու-

քաղաք շինեց, մեծ մեծ պալատներով ու պարտէզնե-  
րով և այնտեղ բնակվում էր ամառը: Քաղաքի անու-  
նունը կոչուեցաւ Շամիրամակերտ, որ մինչև այժմ էլ կայ  
և Շամիրամակերտի փոխարէն, վան քաղաք է ասվում:

Վ Ա Հ Ա Գ Ն:

Մեր Տիգրան Թագաւորի որդեբերանց մէկի անու-  
նը վահագն էր: Վահագն այնքան զարմանալի քաջու-  
թիւններ էր անում, որ այն ժամանակուան կռապաշտ  
հայերը վահագնին, քաջութեան համար, Աստուած  
համարեցին ու վրաստանումն էլ վրացիքը նրա անու-  
նով արձաններ շինեցին ու պաշտեցին: Ժողովուրդը  
պատում էր, թէ վահագն վիշապների հետ կռուել է  
ու յաղթել է ու էլ շատ երևելի քաջութիւններ է ա-  
րել: Հայաստանումը հին ժամանակուան երգիչները վա-  
հագնի վրայ շատ երգեր շինեցին ու երգելով ման էին  
գալիս ու երգերի մէջ ասում էին, իբրև թէ վահա-  
գըն կրակի միջեցն է ծնուել, նրա մագերը կրակի պէս  
է փայլում ու աչքերն արեգակի նման:

Ա Բ Գ Ա Ր:

Արգարը հայոց Թագաւոր էր Արշակունեաց ազ-  
գից: Սրա ժամանակները Հրէաստանումը մեր Փրկիչ Յի-  
սուս Քրիստոսը քարոզում էր և հրաշքներ էր անում:  
Արգարը Քրիստոսի հրաշքները լսելով, նամակ ուղար-  
կեց Երուսաղէմ Քրիստոսին, որի մէջ գրել էր, թէ զես

լսեցի, որ Գու կոյրերին աչք ես տալիս, կաղերին՝ ոտը, ամեն տեսակ հիւանդներին լաւացնում ես ու էլի շատ երևելի հրաշքներ ես անում, այս պատճառով ես Քեզ ճանաչում եմ Աստուած ու Աստուծու որդի: Խնդրում եմ Քեզ, որ գաս ինձ առողջացնես, որովհետեւ ես եօթը տարի է, որ հիւանդ եմ: Բացի այդ լսեցի, որ հրէաները Քեզ ուզում են շարչարել, արի՛ ինձ մօտ, ես մէկ փոքր ու գեղեցիկ քաղաք ունիմ, Եդեսիայ անունով. սա երկուսիս էլ բաւական է:

Քրիստոսն Եդեսիա գնալ չըկամեցաւ ու Աբգարի ուղարկած նամակին պատասխան գրեց, թէ « Ես ինքս չեմ կարող գալ, բայց երբ որ երկինքը համբառնամ, իմ համբարձումից յետոյ քեզ մօտ կուղարկեմ իմ աշակերտներից մէկին, քեզ առողջացնելու »: Քրիստոսն այս նամակի հետ ուղարկեց Աբգարի համար կտաւի վրայ հանուած իր պատկերը, դաստառակը:

Քրիստոսի համբարձումից յետոյ, Նրա հրամանով Թադէոս առաքեալը, որ Քրիստոսի աշակերտներից մէկն էր, եկաւ Աբգարին քարոզեց, բժշկեց ու մկրտեց՝ թէ թագաւորին, թէ սլաւատականներին ու թէ քաղաքի միւս բնակիչներին: Կուռքերը կտորտեցին ու ամենքն սկսեցին քրիստոնէական սուրբ հաւատը դաւանել: Թադէոս առաքեալը թագաւորի հրամանով ման էր դալիս Հայաստանի ամեն կողմերն ու մկրտում էր ժողովուրդին ու զօրքին:

Աբգար թագաւորը հռովմայեցոց կայսերը նամակ գրեց ու խնդրում էր, որ նա Քրիստոսի շարչարող հրէաներին պատժէ: Բացի այդ նա Ասորեստանի և Պար-

Թե ազգի թագաւորներին էլ նամակներ գրեց և հը-  
րաւիրում էր նրանցը քրիստոնէութիւնն ընդունելու.  
բայց դեռ նրանց պատասխանը չըտտացած վախճանուեց:  
Այսպէս հայոց թագաւոր Արզարն այն ժամանակուան  
թագաւորներից առաջինն էր, որ քրիստոնէական հա-  
ւատն ընդունեց և այս պատճառով էլ կոչվում է սա  
Անդրանիկ քրիստոնեայ թագաւոր:

ԱՐՏԱՇԷՍ ԵՐԿՐՈՐԴ:

Արտաշէս երկրորդի ժամանակն Ալանաց թագա-  
ւորը կովկասի բնակիչների հետ միասին հայերի դէմ  
կռիւ բաց արեց: Արտաշէսը հայ զօրքով դուրս գը-  
նաց նրա դէմ ու ջարդեց նրանցը: Թշնամին անց կա-  
ցաւ կռււր գետն ու միւս ափումը վէր եկաւ. հայերն  
էլ նրանց գէմուդէմը, ջրի այս կողմը: Ալանաց թագա-  
ւորի որդուն հայերը գերի էին տարել, այս պատճա-  
ռով պանացիքը շատ խնդրեցին Արտաշէսին, որ գե-  
րուն յետ տայ, բայց Արտաշէսը չէր համաձայնում:  
Այն ժամանակ ալանաց թագաւորի աղջիկ Սաթինիկն  
եկաւ գետի ափն ու Արտաշէսին շատ խնջօք խօսքե-  
րով համոզեց, որ նա իր գերի եղբօրը բաց թողնէ:  
Արտաշէսն այնքան հաւանեց Սաթինիկին, որ շուտով  
սիրահարուեց նրան և պսակուեց էլ: Արտաշէսի Սա-  
թինիկի հետ պսակուելու վրայ այն ժամանակուան մեր  
երգիչները գեղեցիկ խաղ շինեցին ու միշտ երգում էին,  
թէ «Արտաշէս թագաւորն իր գեղեցիկ սև ձիու վրայ  
նստեց ու արծուի պէս կտրեց գետն, անցկացաւ ու

այնտեղ ականաց արջկան ձիու վրայ նստեցնելով, ջրի այս կողմը դուրս բերեց ու հարսանիքի ժամանակը թագաւորը շատ ոսկի բաժանեց ու թագուհին էլ՝ շատ մարգարիտ բաշխեց ժողովրդինս:


Քառասուն ու մէկ տարի թագաւորութիւն անելուց յետոյ Արտաշէսը մեռաւ ու մեծ հաղէսով թագուեց: Նրա դագաղն ոսկուցն էր, անկողինը և շորերը ոսկով էր գործած, գլխի թագը և գէնքը ոսկով զարդարուած, նրա դէմուդէմն էր շարուած. դագաղի չորս կողմն իր որդիքն ու ազգականներն էին պատել ու նրանց յետեւիցը բոլոր թագաւորական նախարարներն էին շարուել իրանց զօրքով: Զօրքն այնպէս էր շարուած ինչպէս պատերազմ գնալիս: Հանդէսի առաջը գնում էին երաժիշտները, յետոյ սև հագնուած սգաւոր կանայք ու նրանց յետեւիցը անթիւ ժողովուրդն էր գնում: Այսպիսի փառաւոր հանդէսով թաղեցին Արտաշէսին ու նրա գերեզմանի վրայ սիրեկաններից և ազգականներից շատերն իրանց ձեռքով սպանեցին իրանց գլուխը:

ԱՐՏԱՎԱԶԳԻ ԵՐԿՐՈՐԳ:

Արտաշէսից յետոյ հայոց թագաւոր նստեց նրա որդի Արտաւազգը: Հայոց երգիչները սրա վրայ էլ պատմում են այս գրոյցը: “Երբ որ Արտաշէսի գերեզմանի վրայ նրա սիրուցը շատերը իրանցը սպանեցին, այն ժամանակն Արտաւազգը, հօր վրայ գանգատուելով, ասաց, թէ դու գնալուդ ժամանակը բոլոր աշխարհը հեռո՞ տարար ու ես աւերակների վրայ ի՞նչպէս թագաւորութիւն ա-

ներմ: Արտաշէսը մեռած ժամանակը սրան անիծեց ու  
ասաց, թէ “երբ որ դու որսի գնաս, քեզ քաջերը (ղեկե-  
րը) բռնեն ու Մասիս սարը տանեն, այնտեղ բռնուած  
մնաս ու էլ լոյս չըտեսնես: Այս պատմութիւնն երգիչնե-  
րը հիմնում էին այն բանի վրայ, որ Արտաւազըր մէկ  
անգամ, երբ Մասիս սարի վրայ որս էր անում, ցնոր-  
ուեց, ու ձին այս կողմն այն կողմը քշելով մէկ խորը  
փոսի մէջ ընկաւ ու կորաւ:

Հին ժամանակուան պառաւաններն էլ պատմում էին,  
թէ Արտաւազըր մէկ այրի մէջ շղթայով կապած է ու  
երկու շուն շղթան լիզելով ուզում են կտրել, որ Ար-  
տաւազըր դուրս գայ ու աշխարհին վերջը տայ. բայց  
դարբինները, իրանց զնդանի վրայ երկաթ ձեծելով,  
Արտաւազըրի շղթաները նորից պնդացնում են:



### ՏՐԴԱՏ ԹԱԳԱՒՈՐԸ ԵՒ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉԸ:

Հայոց խոսրով թագաւորը մէկ անգամ որսի էր  
գնացել: Որսի ժամանակն Անակ անունով մէկը, պար-  
սից թագաւորից գրաւուած լինելով, խփեց թագաւո-  
րին, սպանեց ու փախաւ: Հայերն Անակի յետեւիցը հա-  
սան, իրան էլ սպանեցին ու նրա տունն ու տեղն էլ  
քարուքանդ արին ու որդքերանցն էլ կոտորեցին. ողջ  
մնաց միայն նրա փոքր որդի Գրիգորը, որին իր ծծմայր  
Սոփիոն կարողացաւ թազուն փախցնել Կեսարիայ: Խոս-  
րովն մահից յետոյ Հայաստանի մէջ շատ խառնակու-  
թիւններ եղան, այս պատճառով էլ մեր թագաւորի  
որդի Տրդատին հայ նախարարներից մէկը տարաւ Հռովմ

ու այնտեղ կայսեր դրանը մեծացնում էր: Տրդատն այստեղ իր երխաասարդութեան ժամանակը շատ քաջութիւններ արեց և ճշմարիտ, որ ինքը շատ ուժով արդամարդ էր: Մէկ անգամ գոթաց թագաւորը մեծ զօրքով Հռովմի վրայ կռիւ եկաւ ու Հռովմայեցւոց կայսերն ապսպրեց, թէ մեր զօրքի միմեանց հետ կռուելու փոխանակ, արի՛, մենք երկուսս կռուենք և ով որ յաղթէ, նա լինի տիրող: Կայսրն ինքը չէր կարող կրուուիլ գոթաց թագաւորի հետ և իրա տեղ, իր մեծամեծների խորհրդով, Տրդատին հրամայեց կռուիլ: Տրդատը կայսեր շորեր հագած, ձին քշեց ու գնաց սկսեց կրուուիլ գոթաց թագաւորի հետ. յաղթեց նրան, կապեց ու կայսեր առաջը բերեց: Այս քաջութեան համար կայսրը Տրդատին թագաւորական զգեստ հագցրուց, թագ դրեց գլխին ու շատ զօրքով Հայաստան ուղարկեց, որ իր երկրի վրայ թագաւորութիւն անէ:

Անակի որդի Գրիգորն երբ որ մեծացաւ, իմացաւ, որ իր հայրը հայոց թագաւորի սպանողն է եղել, ուզեց իր հօր յանցանքն իրանից վեր առնել. այս պատճառով գնաց Հռովմ ու Տրդատին ծառայում էր: Տրդատը, Հայաստան գալիս, Գրիգորին էլ հիար բերեց ու երբ որ եկան Յրիզա անունով գիւղը, այստեղ Տրդատը կռուքին երկրպագութիւն տուեց ու Գրիգորին էլ հրամայեց միւլնոյնը կատարել. բայց Գրիգորը Քրիստոնեայ էր ու այս պատճառով չըհամաձայնեց թագաւորի հրամանը կատարելու: Տրդատն առաջ խրատներով ու քաղցրութենով, յետոյ վախեցնելով ու սպառնալիքներով աշխատեց Գրիգորին թողնել տալ քրիս-


տանկութիւնը, բայց բոլորն իզուր անց կացաւ: Այն ժամանակ թագաւորը անուանելի տանջանքներ տուեց Գրիգորին, բայց սուրբ Գրիգորն աղօթք անելով, Աստուծու վրայ յոյս դնելով, զիմացաւ այդ չարչարանքներին ու ամենեւին չըկամեցաւ կուռքերին երկրպագութիւն տալ:

Այս ժամանակ թագաւորն իմացաւ, որ սուրբ Գրիգորն իր հօր սպանողի որդին է. այդ պատճառով աւելի բարկացած հրամայեց, որ սուրբ Գրիգորին տանեն զցեն խոր վերապի, փոսի մէջ, որ մահապարտներին համար էր շինած ու մէջն օձերով ու կարիճներով լիքն էր: Ամենքը կարծում էին ՚ի հարկէ, որ այս վերապումը նա կըմեռնի, բայց սուրբ Գրիգորն այս տեղ մօտ տասն ու հինգ տարի մնաց կենդանի: Մէկ քրիստոնեայ կին Աստուծու հրամանով, ամեն օր թագուն հաց էր բերում, վերապումը զցում ու նրան կերակրում էր:

Սուրբ Գրիգորին վերապը զցելուց տասն ու հինգ տարի էր անց կացել, որ Տրդատը Հռիփսիմեանք անունով սուր կոյսերին քրիստոնէութեան համար նահատակել տուեց ու մէկ քանի օրից յետոյ ինքը որս գրնալու ժամանակը ցնորուեց ու սաստիկ հիւանդացաւ: Տրդատի հետ էլ շատ իշխաններ ցնորուեցան: Թագաւորի քոյրը զիշերը մէկ քանի անգամ երազումը տեսաւ, որ հրեշտակն իրան ասում էր, թէ միմիայն Գրիգորը կարող է բժշկել ձեզ, հանեցէք նրան վերապից: Ոչով չէր հաւատում, որ սուրբ Գրիգորն այնքան տարի օձերի մէջ կենդանի մնացած լինէր. բայց երբ որ զը-

նացին ու ձայն տուին, տեսան որ կենդանի է: Իսկոյն հանեցին սուրբ Գրիգորին վերապից, լաւ շորեր հագցրին ու մեծ պատուով Վաղարշապատ քաղաքը բերին: Երբ որ քաղաքին մտկացան, Թագաւորն ու բոլոր հիւանդ իշխանները նրա առաջ եկան ու սուրբ Գրիգորն, Աստուծուց խնդրելով, նրանց ցաւերը հանդարտացրուց: Յետոյ լսելով սուրբ կոյսերի նահատակելը, զնաց, ժողովեց նրանց մարմինները. բերեց, Թաղեց ու նրանց գերեզմանների վրայ երեք հատ եկեղեցի շինեց: Այս շինութիւններին ինքը Տրդատ Թագաւոր էլ օգնում էր: Պատմում են, որ Թագաւորը եօթն օրուան ճանապարհ զընաց ու Մասիս սարիցն ութը հատ մեծ մեծ քարեր ուսին դրած բերեց այն եկեղեցու շինութեան համար: Սուրբ Գրիգորը Թագաւորի և նախարարների դարձ գալը տեսնելով, աղօթք արեց ու բժշկեց ամենքին, մըկրտեց նրանցն ու սկսեց կռքատունները կործանելով, ամեն տեղ էլ քրիստոնէութիւն տարածել:


Տրդատն իր վերջին տարիքը ճգնաւորի կեանք վարեց ու սուրբերի կարգումը դասուեց ու սուրբ Գրիգորն էլ, հայոց ազգի Քրիստոնէութեան լուսովը պայծառացնելու համար, Ղուսաւորիչ կոչուեցաւ:



### ՀԱՅՈՅ ՏԱՌԵՐԻ ԳՏՆԵՆԸ:

Վաւարապուհ անունով հայոց Թագաւորի ժամանակը հայոց կաթողիկոս Սահակն էր: Սահակը սուրբ մարդ էր և շատ աշխատում էր Հայաստանը պայծառա-

ցնելու համար: Այդ ժամանակները դեռ հայոց տառեր  
չը կար, հայերն ասորոց ու յունաց տառերով էին գրում  
մեր թագաւորական դիւանատներում: Սահակ կաթո-  
ղիկոսն ուզեց, որ այս բանին մէկ ճար անէ, այդ պատ-  
ճառով բոլոր եպիսկոպոսներին ժողովեց ու սուրբ Մես-  
րոպ վարդապետի հետ միասին խորհուրդ արին այս  
մասին ու վճռեցին, որ Մեսրոպը դնայ Միջագետք եր-  
կիրը, Դանիէլ անունով եպիսկոպոսի մօտ, որովհետև  
ասում էին, թէ սա հայոց հին տառերի ձևն ունէր:  
Քայց Մեսրոպը, Դանիէլի մօտ եղած ժամանակը, տե-  
սաւ, որ այն տառերը բոլորովին յարմար չեն մեր լե-  
զուի համար, և այդ բանիցն էլ յոյսը կորեց: Սուրբ Մես-  
րոպն Աստուծու օգնութեանը դիմեց ու աղօթքի ժա-  
մանակը տեսիլք տեսաւ, որի մէջ մէկ աներևոյթ ձևը  
հայոց տառերի ձևը ցոյց տուեց նրան: Չարթեց թէ  
չէ, իսկոյն այն տառերը թղթի վրայ գրեց: Վռամշա-  
պուհի, մեր հայոց թագաւորի, հրամանով Մեսրոպը  
Հայաստանումն ամեն տեղ ուսումնարաններ բաց արեց  
ու հայոց տառերով կարդալ սովորցրեց ու վերջը շատ  
հայ շնորհալի երեխաներին ուղարկեց Հայաստանից  
Հռովմ ու Աթէնք, այն ժամանակուան երևելի քաղաք-  
ները, բարձր գիտութիւններ սովորելու ու ճշմարիտ, որ  
այդ ուղարկած հայերը վերջը Հայաստանի համար պար-  
ծանք դառան իրանց շնորհալի աշխատութիւններով:  
Սուրբ Մեսրոպը վերջը վրաց ու աղուանից համար էլ  
տառեր գտաւ:



ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ:


Մեր Արշակունեաց Թագաւորութեան վերջանալուց յետոյ Հայաստանը պարսից ձեռն ընկաւ: Պարսից Յազկերտ Թագաւորը կամենում էր բոլոր իր հպատակ ազգերին կռապաշտ շինել: Այս մտքով հայոց զլիաւոր իշխաններին ու նախարարներին կանչեց իրա մօտ ու հրամայեց, որ քրիստոնէութիւնն ուրանան: Հայոց իշխաններն ՚ի հարկէ այդ բանին ընդդիմացան և այս պատճառով էլ նրանցից մէկ քանիսը նահատակուեցան, միւսները մութը բերդերի մէջ վերջացրին իրանց կեանքը: Հայ իշխանները, տեսնելով եկեղեցին ու ազգը մեծ վատնդի մէջ, երեսանց համաձայնեցան կատարել Յազկերտի հրամանը: Բայց հայ իշխաններից մէկը, Վասակ Սիւնեաց իշխանը, որ իր որդիքը գրաւ էր դրել պարսից Թագաւորի մօտ, սրտանց ուրացաւ հայոց հաւատը և պարսիկներին էլ խոտաացաւ, թէ հայերին զոռով կռապաշտ կը շինէ: Երբ հայ իշխանները պատուով յետ էին գալիս Հայաստան, նրանց հետն էլ եկան մեր երկիրը շատ քուրմեր ու զօրք, որ հայերի հաւատը փոխեն, բայց իշխանները Հայաստան մտան թէ չէ, միացան հայերի հետ ու պարսից քուրմերին ու զօրքը ջարդեցին: Բայց միայն սրանով չը վերջացաւ բանը: Վասակ Սիւնին, պարսից զօրքի հրամանատարը, յետ եկաւ ու Հայաստանը սկսեց քարուքանդ անել: Մեր ազգին ու հաւատին հաւատարիմ իշխանները հաւաքուեցան իրանց զօրքովը և ուզեցին կամ մեռնիլ հաւատի ու ազգութեան համար և կամ ազատել Հայաստանը Վասակի չարութիւններից ու պարսից բարբարոսութենից:

Քաջ վարդան Մամիկոնեան իշխանը հայոց զօրքի հրամանատար դառաւ ու 66,000 զօրք ժողովելով, բերեց Աւարայրի դաշտը, Տղմուտ գետի ափերումը: Ղևոնդ երեցն առաջին գիշերը շատ սրտաշարժ ու ոգևորող ճառասաց զօրքին ու միւս օրը հանդիսաւոր պատարագից յետոյ ամենքը հաղորդուեցան ու պատրաստուեցան պատերազմի համար: Հոգեգալուստի օրը ջարդը սկսուեց: Պարսից զօրքը չորս անգամ մեր զօրքից աւելի էր ու բացի սրանից նրանք հետները շատ փղեր ունէին, որոնք մարդքերանցից աւելի սաստիկ էին պատերազմում: Բայց մեր փղերիկ զօրքը շատ մեծ քաջութենով դէմ գնաց թշնամուն: Այն օրն անպատճառ հայերը կը յաղթէին պարսից բայց կռուի թունդ ժամանակը վարդան Մամիկոնեանը, վասակի անհաւատարմութեան վրայ բարկացած, այնպիսի քաջութենով առաջ վազեց ու սկսեց ջարդել պարսից, որ մինչև անգամ ինքն էլ հայոց հաւատի ու ազգութեան համար սպանուեց: Զօրքն, իմանալով վարդանի մահը, թէպէտ շարունակեց պատերազմը, բայց մէկ օրինաւոր հրամանատար չունենալով, չըկարողացաւ օգուտ քաղել այս կռուից ու այն օրուան պատերազմը անորոշ մնաց, ոչ հայերն եղան յաղթող, ոչ էլ պարսիկները: Մթնեց թէ չէ, հայոց մնացած զօրքն այս կողմն այն կողմը ցրվուեց ու իրանց բերդերուսը ժողովուեց: Այն օրը հայերից 1036 հոգի մեռաւ, որոնք հայոց ազգի համար պարճանք դառան: Վարդան Մամիկոնեանի հետ միասին նահատակուեցան այն օրը շատ ուրիշ քաջ իշխաններ մեր հայոց ազգից. Խորեն Խորխոռունին, Արտակ Պալու-

նին, Տաճատ Գնթուենին, Հմայեակ Դիմաքսեանը, Ներսէս Քաջբերունին, Վահան Գնունին, Արսէն Ընծայեցին, Գարեգին Սրուանձտեանը և շատ ուրիշները: Հայոց ազգը դրանց իրա համար պարծանք է համարում և մեր եկեղեցին էլ միշտ տօնում է այդ պատերազմումը մեռնողներին, ինչպէս սուրբերին և հաւատի համար եղած նահատակներին ու սրանցը բոլորին էլ Վարդան Մամիկոնեանցի անունով Վարդանանց քաջնահատակներին պատուաւոր անունն է տալիս:

Իսկ Վասակ Սիւնեցի խարդախ և ուրացող իշխանն իր արդար հատուցումը ստացաւ էլի այն պարսիկներից, որոնց համար ուրացաւ իր ազգը և սուրբ հաւատը: Դա պարսից Թադաւորից պատժուեց ու բերդումը փտելով անարգ մահով մեռաւ ու հայոց ազգի նզովքի տակն ընկաւ: Այսպէս է միշտ ուրացողների վիճակը:

Պարսիկներն երկար ժամանակ էլի հայոցը նեղութիւններ էին տալիս ու հայոց մնացած երեւելի մարկանցը և գլխաւորապէս քաջ հոգեւորականներին գերի տարան ու նրանցն էլ Պարսկաստանումը նահատակեցին: Այդ նահատակների մէջ երեւելի էր սուրբ Ղեւոնդ երէցը, որի անունով դրանք էլ Ղևոնդեաննահատակներ անուանուեցան ու մեր ազգը, դրանց երախտիքն էլ ճանաչելով, Վարդանանց պէս տօնում է:



ԱՇՈՏ ՈՂՈՐՄԱԾ:

Բազրատունեաց ազգի Աշոտ երրորդ անունով Թադաւորը բոլոր Թշնամիներին Հայաստանից դուրս ա-

րաւ և աշխատում էր մեր երկիրը խաղաղութեան մէջը  
պահել. օտար ազգերն այնպէս վախենում էին սրանից,  
որ զանազան պարզեւներ ուղարկելով ցոյց տուին նրան  
իրանց սէրը: Մեր նախարարներն էլ, Աշոտին սիրելով,  
ուզեցան թագաւոր օծել սալ այդ հանդէսի համար  
էլ հրաւիրեցին ազուանից ֆիլիպոս թագաւորին ու  
նրանց կաթողիկոսին: Անի մայրաքաղաքի մէջը ժողով-  
ուեցան 40 հայ եպիսկոպոսներ, բոլոր իշխաններն ու Ա-  
շոտին մեծ փառաւոր հանդէսով թագաւոր օծեցին:  
Աշոտն ամեն կերպով աշխատում էր, որ ժողովուրդը  
խեղճութենից դուրս գայ ու թշնամիներից ապահովաց-  
նելու համար շատ բերդեր շինեց: Անի մայրաքաղաքն էլ  
պարսպով պատեց ու մէջը նոր բերդ շինեց: Այս ժա-  
մանակները մեր Անի մայրաքաղաքը շատ ծաղկեց ու  
մեծացաւ, այնպէս որ ասում են թէ մէջը մէկ միլիօն բնա-  
կիչ է եղել և հազար ու մէկ եկեղեցի: Աշոտ թագա-  
ւորն իր գանձն աղքատներին բաժանեց և այն պատի-  
ճանի ողորմած էր, որ առանց աղքատների հաց չէր ու-  
տում: Ամեն օր քաղաքի մէջ եղած կոյրերին ու կա-  
ղերին հաց էր տալիս ու ամենքի կարիքը հոգում էր:  
Շատ քաղաքներումն աղքատանոցներ շինել տուեց և  
այդ Աստուածահաճոյ շինութիւնների համար ռոճիկ  
կտրեց ու ինքը միշտ սյցելու թիւն էր գնում նրանց և եր-  
բեմն էլ մինչև անգամ ինքն իր աղքատներին ծառայում:  
Այսպիսի ազնիւ գործի համար մեր ազգն էլ դրան արժա-  
նաւոր պատուանունն տուեց, Ուղ ը մ ա ծ անուանելով:

ԼԵՒՈՆ ԵՐԿՐՈՐԻ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԱԳԱԻՈՐԸ:

Երբ որ անթիւ թշնամիների ձեռով Հայաստանը քարուքանդ եղաւ ու մէկ կողմից մեր Բագրատունեաց թագաւորութեան ցեղը վերջացաւ, միւս կողմից հայերն անտէր մնալով սկսեցին ցրվուել ու օտար երկիրներ գնալ, որ գոնէ իրանց կեանքը ազատեն: Հայերի մէկ մեծ մասն էլ գնաց Ցաւրոսի լեռների կողմը, Կիլիկեայ ասած երկրումը բնակուեց և այնտեղ նոր թագաւորութիւն կազմեցին, որ Ռուբեն առաջին թագաւորի անունով, Ռուբենեանց թագաւորութիւն կոչուեց: Ռուբենեանց ցեղի թագաւորներից երեւի է մանաւանդ Ղևոն Բ. անունով թագաւորը: Սրա առաջին գործն էր իր երկրից թշնամիներին դուրս անել ու շատ երկիրներնին էլ տիրելով, հարեան երկիրների վրայ այնպիսի ահ ու դող գցեց, որ ամենքն սկսեցին վախենալ նրանից ու պատուել նրան: Այս ժամանակ Եւրոպայի քրիստոնեայ թագաւորները մեծ զօրքով գալիս էին Երուսաղէմ, Քրիստոսի սուրբ գերեզմանը թուրքերի ձեռիցն ազատելու մեր Ղևոն թագաւորն էլ դրանցն ամեն կերպ օգնութիւն էր հասցնում, թէ զօրքով և թէ նրանց զօրքի համար ամեն հարկաւոր բաներն ուղարկելով: Սրա երախտիքը չըմոռանալու համար շոտվմի պապն իր եպիսկոպոսի ձեռով թագաւորական թագ ուղարկեց մեր Ղևոնի համար: Բայց հայ եպիսկոպոսները, իշխաններն ու զօրքը հաւաքուեցան Սիս անունով մայրաքաղաքումը և այնտեղ մեծ եկեղեցու մէջ հայոց կաթողիկոսը մեծ հանդէսով Ղևոնին թագաւոր օծեց: Ղևոն արժանի էր այն պատուին: Նա ինչպէս որ քաջ զօրավար էր ու անթիւ

պատերազմներուն միշտ յաղթում էր թշնամիներին. նմանապէս ինչպէս մարդ՝ շատ բարեպաշտ ու ողորմած թագաւոր էր: Մէկ կողմից իր երկրունք բերգեր էր շինում, միւս կողմից խեղճերի ու թշուառների համար ազքատանոցներ: Ամենի հետ քաղցրութենով էր վարվում և արդար ու ողորմած դատաստան անում: Մեր հայերը դրան շատ սիրում էին: Աւոնք, մեռնելիս տղայ ժառանգ չունենալով, իր թագաւորութիւնը յանձնեց իր տասնումից տարեկան Զապել (Իգաբելայ) անունով աղջկան: Բայց հայերը նոր էլ թշնամիների խաղաղք դառան ու մէկ քանի ժամանակ շարունակուելուց յետոյ, մեր Ռուբենեանց թագաւորութիւնն էլ վերջացաւ ու հայերն անտէր ու անտիրական ցրվուեցան աշխարհի ամեն կողմերը:

ՀԱՅՈՑ ԱՅԺՄԵՆ ՎԻՅԱԿ:

Մեր թագաւորութիւնների վերջանալուց յետոյ շատ ցաւալի դրութեան մէջն էր Հայաստանը: Այն վայրենի ազգերը, որ Ասիայի խորը տեղերիցն եկան ու տակըն ու վրայ արին Եւրոպան, բոլորն էլ համարեա թէ Հայաստանի վրայ անց կացան, որովհետեւ մեր երկիրը Ասիայից Եւրոպայ անցկենալու դուռն է: Ով եկաւ, քանդեց ու աւերակ դարձրուց մեր մեծ մեծ քաղաքները. ով եկաւ, արիւնով ներկեց մեր գաշտերը ու հազարաւոր գերիներ տարաւ, ոչնչացրուց ու մէկ ժամանակուան տասը, քսան միլիոնաւոր ժողովուրդը քիչ մնաց, որ բոլորովին անհետանար աշխարհի երեսից: Պէտք է զարմանալ, որ գոնեա մենք հիմի մնացել ենք կենդանի:

Հայերի տեղն ուրիշ ազգ լինէր, այնքան նեղութիւններն կրելուց յետոյ, այժմ վաղուց կորած կրկինէր: Բայց հայերը կենդանի են, որովհետեւ չընայելով իրանց դառը վիճակին ու հաւատի համար կրած նեղութիւններին, էլի հաստատ մնացին իրանց սուրբ հաւատին ու լեզուին: Հայերը ստիպուած էին իրանց կեանքը գոնեա ազատելու համար տուելը, տեղը թողնել ու գնալ ուրիշ երկիրներ, որ իրանց հաւատի հայածողներից ազատ մնային: Այսպէս հայերն այժմ տարածուած են աշխարհի ամեն կողմերը, բայց զխաւորապէս երեք մեծ տէրութիւնների ձեռի տակն են:

Հայերի այժմեան թիւը համուռ է մօտ  $4\frac{1}{2}$  միլիոնի, որոնցից մօտ  $2\frac{1}{2}$  միլիոնը գտնուում է այժմ Օսմանեան թագաւորութեան ձեռի տակը: Այս վերջին տարիներումը Սուլթանը սիրեց հայերին ու դրանցը շատ իրաւունքներ տուեց: Ազգային գործերը և նմանապէս դատաստանն իրանց ձեռով անելու իրաւունքն այն տեղե հայերին յանձնեց: Յոյս կայ, որ Օսմանցի հայերն աշխատեն իրանց մէջ լուսաւորութիւն տարածելու ու երբ որ լուսաւորութիւն և գիտութիւն կրտսանան, ՚ի հարկ է իրանք էլ խեղճ ու աղքատ չեն լինիլ:

Հայերի միւս մեծ մասը, որ մօտ  $1\frac{1}{2}$  միլիոնի է համուռ, Ռուսաց մեծ կայսերութեան ձեռի տակն է: Մեր Ռուսաց թագաւորն իրա բոլոր հպատակների հետ հաւասար սիրում է մեզ ու այն ամեն իրաւունքները տրուած ունէ, ինչ որ վայելում է իր ազգը:

Հայերի երրորդ մասն էլ, որ մէկ քանի հարիւր հազար հոգի կրկնի, պարսից թագաւորութեան ձեռի

տալն է: Բայց որովհետև տէրութիւնն էլ դեռ չէ լուսաւորուած ու այդ ազգն էլ խեղճ ազգ է, այդ պատճառով այն տեղի հայերն էլ յետ են մնացած Ռուսաստանի ու Օսմանեան հայերից:

Բաց ՚ի այդ երեք տէրութիւններից, Եւրոպայի, Ասիայի, Ափրիկայի և մինչև անգամ Ամերիայի զանազան մեծ քաղաքներու մը կան բաւական հայեր, որոնք վաճառականութենով են պարսպում:

Մեր ազգն իր իշխանութիւնը կորցնելուց յետոյ, էջփածնու մը նստող կաթողիկոսին ճանաչում է իրրև հոգևոր գլուխ:



# ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐ:

## 1

**Միժեռնակ, ծիժեռնակ,**  
 Դու գարնան սիրուն թրռչնակ .  
 Դէպի ուր ինձ ասա,  
 Թրռչում ես այդպէս արագ:

**Ա՛խ, թրռիր, ծիժեռնակ,**  
 Ծընած անդրս Աշտարակ .  
 Անդ շինիր քո բունը,  
 Հայրենի կտուրի տակ:

**Դու պատմէ՛ թէ ինչպէս**  
 Աստ անտէր ու խեղճ եմ ես .  
 Միշտ լալով, ողբալով,  
 Կեանքս մաշուել, եղել կէս:

**Ինձ համար ցերեկը**  
 Մութ է շրջում արեգը,  
 Գիշերը թաց աչքիս  
 Քունը մօտ չի գալիս:

**Անդ հեռու ալևոր,**  
 Հայր ունիմ սրգաւոր,  
 Որ միակ իւր որդուն,  
 Սպասում է օր է օր:

**Երբ տեսնես դու նորա՝**  
 Ինձնից շատ բարև արա՛,  
 Ասա՛ թող նրատի լայ,  
 Իւր անբաղդ որդու վրայ:

Ասիր որ չի բացուած,  
Թառամեցայ միացած,  
Ես ծաղիկ գեղեցիկ՝  
Հայրենի հողից զրկուած:

Դե՛հ՝ սիրուն ծիծեռնակ,  
Հեռացիր, թռիր արագ  
Դեպ ՚ի հայոց երկիրը,  
Ծնած տեղս — Աշտարակ:

2

Մայրենի՛ լեզու, մայրենի բարբառ,  
Ասորժ, ընտանի իմ հողու համար՝

Առաջին դու խօսք, ականջիս հասած,  
Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօդուած.

Մանկական լեզուիս թոթովանք տրկար,  
Հնչումես իմ մէջ դու միշտ անդադար:

Գեղեցիկ լեզու, հրաշալի լեզու,  
Այդ ինչպէս քաղցրը հնչումես ինձ դու.  
Կամիմ աւելի քաջ ծանօթանալ

Քո ծոխ գանձերին, հողուով հայանալ,  
Ասես թէ ահա դանչում էին ինձ,  
Պապիր ու հայրեր խոր գերեզմանից:

Հրնչի՛ր դու, հրնչի՛ր այժմ և յաւիտեան,  
Մայրենի լեզու, բարբառ սիրական.

Արի՛, բարձրացիր հնու թեան փոշուց,  
Դու իմ հայ լեզու, մոռացուած վաղուց.

Ըզգեցի՛ր նոր կեանք սուրբ գրուածներով,  
Որ ամենայն սիրտ վառուի քո սիրով:

Ամեն տեղ փչում է Աստուծոյ շունչը,  
Սուրբ է այն միւս, այլ ձև ու ոճը,

Բայց թէ աղօթել, գոհանալ պէտք էր,  
Իմ սրբտիս սէրը յայտնել արժան էր,

Իմ երանական մտածութիւնքը—  
Ապա կրիստիմ իմ մօրըս խօսքը:



# ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻՑ:

Գ Ի Ր Ք Ծ Ն Ն Դ Ո Յ:

Կլուխ Ա. 1—29:

Իսկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր: Եւ երկիր էր աներևոյթ և անպատրաստ, և խաւար էր ՚ի վերայ անշնորոց և հողի Աստուծոյ չըջէր ՚ի վերայ ջրոց: Եւ ասաց Աստուած. եղիցի լոյս, և եղև լոյս: Եւ ետես Աստուած զլոյսն զի բարի է և մեկնեաց Աստուած ՚ի մէջ լուսոյն և ՚ի մէջ խաւարի: Եւ կոչեաց Աստուած զլոյսն տիւ, և զխաւարն կոչեաց գիշեր, և եղև երեկոյ և եղև վաղորդեան՝ օր մի: Եւ ասաց Աստուած. եղիցի հաստատութիւն ՚ի մէջ ջուրցդ, և եղիցի մեկնիլ ՚ի մէջ ջուրցդ և ջրոց, և եղև այնպէս: Եւ արար Աստուած զհաստատութիւնն, և անջրպետեաց Աստուած ՚ի մէջ ջրոյն, որ էր ՚ի ներքոյ հաստատութեանն, և ՚ի մէջ ջրոյն, որ ՚ի վերայ հաստատութեանն: Եւ կոչեաց Աստուած զհաստատութիւն երկին, և ետես Աստուած զի բարի է, և եղև երեկոյ և եղև վաղորդեայն, օր երկրորդ: Եւ ասաց Աստուած. ժողովեցին ջուրքդ, որք ՚ի ներքոյ երկնից ՚ի ժողով մի. և երևեցի ցամաքն, և եղև այնպէս, և ժողովեցան ջուրքն, որք ՚ի ներքոյ երկնից ՚ի ժողովս իւրեանց, և երևեցաւ ցամաքն: Եւ կոչեաց Աստուած զցամաքն երկիր և զժողովս ջուրքն կոչեաց ծովս և ետես Աստուած զի բարի է:

Եւ ասաց Աստուած. բղխեսցէ երկիր զբանջար խոտոյ,  
սերմանել սերմն ըստ ազգի և ըստ նմանութեան. ծառ  
պտղաբեր՝ առնել պտուղ ըստ ազգի իւրում. որոյ սեր-  
մնն իւր ՚ի նմին ըստ ազգի ՚ի նմանութիւնն ՚ի վերայ երկ-  
րի և եղև այնպէս: Եւ եհան երկիր զբանջար խոտոյ,  
սերմանել սերմն ըստ ազգի և ըստ նմանութեան, որ է  
՚ի վերայ ամենայն երկրի. և փայտ պտղաբեր՝ առնել  
պտուղ, որոյ սերմն իւր ՚ի նմին ազգի ՚ի վերայ երկրի,  
և ետես զի բարի է: Եւ եղև երեկոյ. և եղև վաղորդեայն,  
որ երրորդ: Եւ ասաց Աստուած. եղիցին լուսաւորք ՚ի  
հաստատութեան երկնից ՚ի լուսաւորութիւնն ՚ի վերայ  
երկրի. և մեկնել ՚ի մէջ տունջեան և ՚ի մէջ գիշերոյ,  
և եղիցին ՚ի նշանս, եւ ՚ի ժամանակս, եւ յաւուրս,  
և ՚ի տարիս: Եւ եղիցին ՚ի լուսաւորութիւնն ՚ի հաս-  
տատութեան երկնից ծագել յերկիր եւ եղև այն-  
պէս: Եւ արար Աստուած զերկուս լուսաւորսն զմեծա-  
մեծս, զգլխաւորն մեծ յիշխանութիւն տունջեան, լու-  
սաւորն փոքր՝ յիշխանութիւն գիշերոյ և զաստեղս: Եւ  
եղ զնոսա Աստուած ՚ի հաստատութեան երկնից, լու-  
սատու լինիլ յերկիր: Եւ իշխել տունջեան և գիշերոյ,  
և մեկնիլ ՚ի մէջ լուսոյն և ՚ի մէջ խաւարին, և ետես  
Աստուած զի բարի է: Եւ եղև երեկոյ և եղև վաղորդ-  
եայն, որ չորրորդ: Եւ ասաց Աստուած. հանցեն ջուրք  
զեռունս շնչոց կենդանեաց, և թռչունս թռևաւորս ՚ի  
վերայ երկրի ըստ հաստատութեան երկնից և եղև այն-  
պէս: Եւ արար Աստուած կէտս մեծամեծս, և զամե-  
նայն շունչ զեռնոց կենդանեաց, զոր հանն ջուրք ըստ  
ազգի իւրեանց և զամենայն թռչունս թռևաւորս ըստ  
ազգի, և ետես Աստուած զի բարի են: Եւ օրհնեաց զնո-

սա Աստուած, և ասէ. աճեցէք, և բազմացարուք, և լցէք զջուրսդ որք 'ի ծովս, և թռչունքդ բազմացին 'ի վերայ երկրի: Եւ եղև երեկոյ, և եղև վաղորդեայն օր Հինգերորդ: Եւ ասաց Աստուած. Հանցէ երկիր շունչ կենդանի ըստ ազգի չորքոտանի, և սողունս, և զազանս երկրի ըստ ազգի, և եղև այնպէս: Եւ արար Աստուած զգազանս երկրի ըստ ազգի, և զանասունս ըստ ազգի, և զամենայն սողունս ըստ ազգի իւրեանց և ետես Աստուած զի բարի եհ: Եւ ասաց Աստուած. արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան, և իշխեսցէ ձկանց ծովու և թռչնոց երկնից և անասնոց, և ամենայն երկրի, և ամենայն սողնոց, որք սողին 'ի վերայ երկրի: Եւ արար Աստուած զմարդն 'ի պատկեր իւր ըստ պատկերի Աստուծոյ արար զնա, արու և էգ արար զնոսա: Եւ օրհնեաց զնոսա Աստուած՝ և ասէ. աճեցէք և բազմացարուք՝ և լցէք զերկիր, և տիրեցէք զմա, և իշխեսցէք ձկանց ծովու, և թռչնոց երկնից և ամենայն անասնոց, և ամենայն երկրի և ամենայն սողնոց, որք սողին 'ի վերայ երկրի:

Գ Ի Ր Ք Ծ Ն Ն Դ Ո Յ:

ԳԼ. Բ. 1—4, 7—10 և 15—25:

Եւ կատարեցան երկինք և երկիր և ամենայն զարդ նոցա: Եւ կատարեաց Աստուած յաւուրն վեցերորդի զգործս իւր՝ զոր արար: Եւ օրհնեաց Աստուած զօրն եօթներորդ, և սրբեաց զնա, զի 'ի նմա Հանգեաւ յամենայն դործոց իւրոց՝ զոր սկսաւ առնել Աստուած: Եւ

ստեղծ Տէր Աստուած զմարդն հող յերկրէ, և փչեաց  
յերեսս նորա շունչ կենդանի, և եղև մարդն հողի կեն-  
դանի: Եւ տնկեաց Աստուած զգրախտն յեղեմ ընդ ա-  
րևելս, և եղ անդ զմարդն, զոր ստեղծ: Եւ բուսոյց ևս  
Տէր Աստուած յերկրէ զամենայն ծառ գեղեցիկ 'ի տե-  
սանել և քաղցր 'ի կերակուր . և զծառն կենաց 'ի մէջ  
դրախտին, և զծառն գիտելոյ գիտութիւն բարւոյ և  
չարի: Եւ էառ Տէր Աստուած զմարդն, զոր արար, և եղ  
զնա 'ի դրախտին փափկութեան, զործել զնա և պա-  
հել: Եւ պատուիրեաց Տէր Աստուած Ադամայ և ասէ.  
յամենայն ծառոց որք են 'ի դրախտիդ ուտելով կերի-  
ցէք: Բայց 'ի ծառոյն գիտութեան բարւոյ և չարի մի՛  
ուտիցէք, զի յորում աւուր ուտիցէք 'ի նմանէ՝ մահու  
մեռանիցիք: Եւ ասաց Տէր Աստուած, ոչ է բարւոք մար-  
դոյդ միայն լինել, արասցո՛ւք զմա օգնական ըստ զմա:  
Եւ ստեղծ ևս Տէր Աստուած զամենայն գազանս վայրի,  
և զամենայն թռչունս երկնից, և էա՞ծ զնոսս առ Ա-  
դամ, տեսանել զինչ կոչեացէ զնոսս, և ամենայն շնչոց  
կենդանւոյ, զինչ և անուանեաց Ադամ, այն անուն է  
նորա: Եւ կոչեաց Ադամ անուանս ամենայն անասնոց,  
և ամենայն թռչնոց երկնից, և ամենայն գազանաց վայ-  
րի, բայց Ադամայ ոչ գտաւ օգնական նման նմա: Եւ  
էարկ Տէր Աստուած թմրութիւն 'ի վերայ Ադամայ, և  
ննջեաց, և էառ մի 'ի կողից նորա և ելից ընդ այնր  
մարմին: Եւ շինեաց Տէր Աստուած զկոյն զոր էառ Ա-  
դամայ 'ի կին, և էա՞ծ զնա առ Ադամ, և ասէ Ադամ.  
այս այժմիկ ոսկր յոսկերաց իմոց, և մարմին 'ի մարմ-  
նոյ իմմէ, սա կոչեացի կին, զի յառնէ իւրմէ առաւ: Աս-

սըն այնորիկ թողցէ այր զՏայր իւր և զմայր իւր, և երթիցէ զՏեա կնոջ իւրոյ: Եւ եղիցին երկուքն ՚ի մարմին մի. և էին երկոքեան մերկ՝ Ադամ և կինն իւր, և ոչ ամաչէին:

Գ Ի Ր Ք Ծ Ն Ն Բ Ո Ց:

Գլուխ Գ. 1—24.

Եւ օձն էր իմաստնազոյն քան զամենայն զազանքս որ ՚ի վերայ երկրի, զոր արար Տէր Աստուած, և ասէ օձն ցկին. զի է զի ասաց Աստուած, թէ յամենայն ծառոց որք իցեն ՚ի ներքս ՚ի դրախտի այդք՝ մի՛ ուտիցէք: Եւ ասէ կինն ցօձն. ՚ի պտղոյ ծառոց՝ դրախտիդ կերիցուք: Բայց ՚ի պտղոյ, որ է ՚ի մէջ դրախտին, ասաց Աստուած, մի՛ ուտիցէք ՚ի նմանէ, և մի հուպ լինիցիք՝ զի մի՛ մեռանիցիք: Եւ ասէ օձն ցկինն. ոչ եթէ մահու հու մեռանիցիք: Զի գիտէր Աստուած, թէ յորում աւուր ուտիցէք ՚ի նմանէ, բանայցեն աչք ձեր, և լինիցիք իբրև զԱստուածս, ճանաչել զբարի և զչար: Եւ ետես կինն, զի բարի էր ծառն ՚ի կերակուր, և հաճոցաւ զհայելոյ, և գեղեցիկ ՚ի տեսանել, և էառ ՚ի պտղոյ նորա, և եկեր, և ետ առն իւրում ընդ իւր և կերին: Եւ բացան աչք երկոցունց, և դիտացին զի մերկք էին, և կարեցին տերևս թղենուոյ և արարին իւրեանց սիւս՝ ծանելիս: Եւ լուան զձայն զգնալոյ Տեառն Աստուծոյ՝ ՚ի դրախտի անդ ընդ երեկս և թազեան Ադամ և կինն իւր յերեսաց Տեառն Աստուծոյ՝ ՚ի մէջ ծառոց դրախտին: Եւ կոչեաց Տէր Աստուած զԱդամ, ասէ ցնա. ո՞ր ես:

Եւ ասէ լուայ զձայն քո 'ի դրախտի աստ և երկնայ,  
քանզի մերկ էի և թազեայ: Եւ ասէ. ո՞ր պատմեաց թէ  
մերկ ես, բայց թէ 'ի ծառոյն, յորմէ պատուիրեցի  
քեզ անտի և եթ չուտել, կերեր արդեօք 'ի նմանէ:  
Եւ ասէ Ադամ. կինս զոր ետուր ընդ իս՝ սա ետ ինձ 'ի  
ծառոց անտի և կերի: Եւ ասէ Տէր Աստուած ցկինն,  
զի՞նչ գործեցեր զայդ, և ասէ կինն, օձն խաբեաց զիս  
և կերի: Եւ ասէ Տէր Աստուած ցօձն, փոխանակ զի ա-  
րարեր դու զայն, անիծեալ լիջիր դու յամենայն ա-  
նամոց և յամենայն դազանաց երկրի, 'ի վերայ լանջաց  
և որսվայնի քոյ գնասցիս, և հող կերիցես զամենայն  
առուրս կենաց քոց: Եւ եդից թշնամութիւն 'ի մէջ  
քոյ և 'ի մէջ կնոջդ, և 'ի մէջ զաւակի քոյ և 'ի մէջ  
զաւակի դորս, նա սպասեացէ քում գլխոյ, և դու սպա-  
սեացես նորա դարչապարի: Եւ ցկինն ասէ. բազմացու-  
ցանելով բազմացողից զտրտութիւնս քո և զՏե-  
ծութիւնս, տրտութեամբ ծնցիս որդիս, և առ այր քո  
դարձ քո, և նա տիրեացէ քեզ: Եւ ցԱդամ ասէ. փո-  
խանակ զի լուար ձայնի կնոջդ քոյ և կերեր 'ի ծառոյ  
անտի, յորմէ պատուիրեցի քեզ անտի միայն չուտել,  
և կերեր 'ի նմանէ, անիծեալ լիցի երկիր 'ի գործս քոյ,  
տրտութեամբ կերիցես զնա զամենայն առուրս կենաց:  
Փուշ և տատասկ բուսուացէ՝ քեզ, և կերիցես զբան-  
ջար վայրի: Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո  
մինչև դարձցիս յերկիր ուստի առար, զի հող էիր և  
'ի հող դարձցիս: Եւ կոչեաց Ադամ զանուն կնոջ իւ-  
րոյ կեանս, զինաս է մայր ամենայն կենդանեաց: Եւ արար  
Աստուած Արամայ և կնոջ նորա հանդերձս մաշկեղենս,

և զգեցոյց զնոսա: Եւ ասէ Տէր Աստուած, ահա Ադամ  
 եղև իբրև մի 'ի մէնջ' զխտել զբարի և զչար, և արդ՝  
 դուցէ ձգիցէ զձեռն և առնուցու 'ի ծառոյն կենաց,  
 ուտիցէ և կեցցէ յաւիտեան: Եւ եհան արձակեաց զնա  
 Տէր Աստուած 'ի դրախտէն անտի փափկութեան՝ գոր-  
 ծել զերկիր՝ ուստի առաւ: Եւ եհան զԱդամ և բնա-  
 կեցոյց յանդիման դրախտին փափկութեան և հրամա-  
 յեաց քրօթից և բոցեղէն սրոյ շուրջանակաւ պահել  
 զձանապարհս ծառոյն կենաց:

Գ Ի Ր Ք Ծ Ն Ն Գ Ո Ց:

Գլուխ ԻԲ. 1—15:

Եւ եղև յետ բանիցս այսոցիկ, փորձեաց Աստու-  
 ած զԱբրահամ՝ և ասէ ցնա. Աբրահամ, Աբրահամ,  
 և նա ասէ. ահա աւսիկ եմ: Եւ ասէ ցնա. առ դու գոր-  
 դիդ քո սիրելի, զոր սիրեցեր, զիսահակ, և գնա դու  
 յերկիր բարձր և հանցես զդա անդ յողջակէզ 'ի վերայ  
 միոյ լեռանց՝ յորոց ասացից քեզ: Եւ յարեաւ Աբրա-  
 համ ընդ առաւօտն, համետեաց զէջ իւր, և էառ  
 ընդ իւր երկու ծառայս, զիսահակ զորդի իւր, և պա-  
 տառեաց փայտ յողջակէզ՝ յարեաւ և գնաց, և եկն 'ի  
 տեղին, զոր ասաց նմա Աստուած: Եւ յաւուրսն երրոր-  
 դի համբարձ Աբրահամ զլաչս իւր և ետես զտեղին 'ի  
 հեռաստանէ: Եւ ասէ Աբրահամ ցպատանիս իւր. նրս-  
 տարուք դուք այդր հանդերձ իշով, և ես և պատանե-  
 եակս երթիցուք մինչև ցանդր, և երկիրպագցուք և  
 դարձցուք առ ձեզ: Եւ էառ Աբրահամ զփայտ ողջա-

կիզին, և եղ 'ի վերայ խաճակայ որդւոյ իւրոյ, և էառ 'ի ձեռն զհուրն և զսուր, և գնացին երկոքեան 'ի միասին: Եւ ասէ իսահակ ցԱբրահամ, ցՏայր իւր. Տայր և նա ասէ. զի՞ է որդեակ. և նա ասէ. ահա հուր և ահա փայտ, ո՞ր է ոչխար յողջակէզ: Եւ նա ասէ. Աստուած տեսցէ իւր ոչխար յողջակէզ որդեակ, գնացին երկոքեան 'ի միասին: Եկին 'ի տեղին, զոր ասաց նմա Աստուած, անդ շինեաց սեղան Աբրահամ, և եղ 'ի վերայ զփայտն, և կապեաց զիսահակ զորդի իւր, և եղ զնա 'ի սեղանն 'ի վերայ փայտին: Եւ ձգեաց Աբրահամ զձեռնն առնուլ զսուրն և զենուլ զորդի իւր: Եւ կոչեաց զնա հրեշտակ Տեառն յերկնից և ասէ. Աբրահամ, Աբրահամ, և նա ասէ. ահաւասիկ եմ:

Եւ ասէ. մի' միւր զձեռն քո 'ի պատանեակդ, և մի' ինչ առներ դմա, զի այժմ գիտացի թէ երկիւզած ես դու Աստուծոյ, և ոչ ինայեցեր յորդիդ քո սիրելի վասն իմ: Համբարձ Աբրահամ զաչս իւր և ետես, և ահա խոյ մի կախեալ կայր զճառոյն Սաբեկայ զեղջերաց, և գնաց Աբրահամ և էառ զիտյն և էհան զնա յողջակէզ փոխանակ իսահակայ որդւոյ իւրոյ: Եւ կոչեաց Աբրահամ զանուն տեղւոյն այնորիկ Տէր ետես զի ասիցեն ցայսօր 'ի լերին յայնմիկ Տէր երևեցաւ:

Գ ԵՐ Յ Ա Ռ Ա Կ Ա Ց:

Գլուխ Գ. 1—35:

Որդեակ՝ զօրէնս իմ մի' մոռանար, և զբան իմ պահեսցէ սիրա քո: Զի ընդ երկայնութիւն կենաց և

ամբ կենդանութեան, և խաղաղութիւն յաւելցին քեզ: Ողորմութիւն և հաւատք 'ի քէն մի պահասեցին, արկ զնոսա ընդ պարանոց քոյ և զրեան զնոսա յընդարձակութիւն սրտի քոյ: Եւ գտցես շնորհս, և խորհեաց զբարիս առաջի Տեառն և մարդկանս: Եւր յուսացեալ 'ի Տէր յամենայն սրտէ քումմէ, և յիմաստութիւն քո մի' հը պարտանայր, յամենայն ճանապարհս քո ծանիր զնա, զի ուղիղ արասցէ շաւիղս քո, և ոտն քոյ մի' դայթաւ կղեցի: Մի' լինիր իմաստուն յաչս անձին քոյ՝ այլ երկիր 'ի Տեառնէ, և խոտորեաց յամենայն չարութենէ: Ապա բժշկութիւն եղիցի մարմնոյ քում և դարման ոսկերաց քոց: Պատուեա' զՏէր 'ի քոյոց արդար վաստակոց, և հան նմա պտուղ 'ի քոց արդարութեան արմտեաց: Զի լցցին շտեմարանք քո լիութեամբ ցորենոյ և հնձանք գինեաւ քով առաւել ևս բղխեցին: Որդեակ' մի' լքանիր 'ի խրատու Տեառն և մի' լուծանիր յանդիմանեալ 'ի նմանէ: Զի զոր սիրէ Տէր՝ խրատէ, տանջէ զամենայն որդի, զոր ընդունի: Երանեալ է այր՝ որ եզիտ զիմաստութիւն և մահկանացու՝ որ ետես զհանձար: Զի լաւ է զվաճառն զայն դտանել, քան զգանձս ոսկւոյ և արծաթոյ: Պատուականագոյն է քան զականրս պատուականս և ոչինչ է չար, հակառակ կայցէ նմա, յայտնի է ամենեցուն, որք մերձին առ նա, և ամենայն ինչ՝ որ պատուական է. չարժէ գնա: Զի երկայն աւուրք և ամբ կենաց 'ի յաջմէ իւրմէ և յահեկէ իւրմէ փառք և մեծութիւն. 'ի բերանոյ նորա բղխի արդարութիւն. զորէնս և զողորմութիւն 'ի լեզուի իւրում կրէ: Ճանապահսք նորա, ճանապահսք բարեաց, շաւիղք նորա խաղաղութեամբ:

Փայտ կենաց է ամենեցուն, որք պատասպարին 'ի նա, և որք յենուն 'ի նա, իբրև 'ի Տէր հաստատութեամբ: Աստուած իմաստութեամբ հիմունս էարկ երկրի, պատրաստեաց զերկինս խորհրդով: Եւ հանձարով իւրով զանդունդս պատառեաց, և ամաք հոսեցին զանձրև: Որդեակ՝ մի՛ լքանիր, պահեա զխորհուրդս իմ և զիմաստութիւն: Զի կեցցէ անձն քո, և շնորհք իցեն 'ի վերայ պարանոցի քում, եղիցի բժշկութիւն մարմնոյ քում և դարման ոսկերաց քոց: Զի գնասցես յուսով խաղաղութեան յամենայն ճանապարհս քո և ոտն քո ոչ գայթակղեսցի: Զի եթէ նստիցիս՝ աներկիւղ իցես. և եթէ ննջիցես՝ քաղցր 'ի քուն լիցիս: Եւ ոչ երկիցես 'ի զարհուրանաց 'ի վերայ հասելոց ամբարշտաց և յարշաւանաց 'ի վերայ եկելոց: Զի Տէր եղիցի 'ի վերայ ամենայն ճանապարհաց քոց և հաստատեսցէ զոտն քո, զի մի սասանեսցի: Մի՛ յապաղեր բարի առնել կարօտելոյն, յորտամ ձեռնհաս իցես օգնելնմա: Մի՛ ասիցես, թէ երթ' և եկեսջիր և վաղիւ տաց. զի կարող ևս իցես բարի առնել, քանզի ոչ գիտես, զինչ վաղիւն ծնանիցի քեզ: Մի՛ նիւթեր բարեկամի քում չարիս, որ յեցեալ և յուսացեալ իցէ 'ի քեզ: Մի՛ թշնամանասէր լինիր մարդոյ 'ի տարապարտուց, զի մի՛ չար ինչ գործիցէ քեզ. մի՛ ստանար նախատինս յարանց չարաց և մի՛ նախանձիր ընդ ճանապարհս նոցա: Քանզի պիղծ է առաջի Տեառն ամենայն անօրէն և ընդ արդարս ոչ հաղորդին: Անէծք Տեառն 'ի տունս ամբարշտաց, յարկք արդարոց օրհնին: Տէր ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց: Զփառս իմաստունք ժառանգեսցեն, իսկ ամբարիշտք բարձրացուցին զտնարդանս:

Իր օրինակով Գ Ի Բ Գ Ա Ռ Ա Կ Ա Ց:

Գլուխ Ժ. 1—32:

Որդի իմաստուն ուրախ առնէ զՏայր, որդի անմիտ տրտմութիւն է մօր: Ոչինչ օգնեցեն զանձք անօրինաց, այլ արդարութիւն փրկէ ՚ի մահուանէ: Ոչ սովամահ առնէ ճէր զանձն արդարոյ, բայց զկեանս ամբարշտաց կործանեցէ: Աղքատութիւն զայր խոնարհեցուցանէ, ձեռք ժրաց մեծացուցանեն: Ար ջանայ ստութեամբ, նա արածէ զՏողմն՝ նոյն իսկ ինքն հետեւի հաւուց թռուցիլոց: Ար ժողովէ ներ հնձում, որդի իմաստուն է, այլ որ ննջէ յամարայնի՝ որդի պատկառանաց: Արդի խրատեալ իմաստուն եղեցի և անմիտն ՚ի ծառայութիւն վարեցի, ապրեցաւ ՚ի խորշակէ որդի իմաստուն, խորշակահարկնի յամարայնի որդի անօրէն: Օրհնութիւն ճիտն ՚ի զլուխ արգարոց, զբերսնս ամբարշտաց ծածկեցէ սուգ տալաժամ: Յիշատակ արդարոց հանդերձ գոգութեամբ, և անուն ամբարշտաց շիջցի: Իմաստունն սրտիւ ընկալցի զպատուիրանս և ցօփն շրթամբք զայթակղելով կործանեցի: Ար գնայ միամտութեամբ՝ գնայ յուսով, իսկ որ թիւրէ զճանապարհս իւր՝ յայտնի եղեցի: Ար ակնարկէ ակամբ նենդութեան, ժողովէ արանց զտրտմութիւն: Իսկ որ յոնդիմանէ համարձակութեամբ, առնէ զխաղաղութիւն: Աղբիւր կենաց յՍտուծոյ բերան արգարոյ, զբերան ամբարշտի ծածկեաց կորուստ: Ատելութիւն զրգռէ զհակառակութիւն և զամենեւսին որք ոչն հակառակին, ծածկէ սէր: Ար ՚ի շրթանց իւրոց բղխէ զիմաստութիւն, իբրև գաւազա-

նաւ հարկանէ զայր անմիտ: Իմաստունք ծածկեն զիմաստութիւն, բերան յանդուզն մերձ է ի բեկումն: Ստացուած մեծատանց քաղաք ամուր, և բեկումն ամբարշտաց՝ աղբատութիւն: Գործք արդարոց կեանս առնեն, և պտուղք ամբարշտաց՝ մեղք: Զճանապարհս կենաց պահէ Տէր, խրատ առանց յանդիմանութեան մուլար է: Ծածկեն զթշնամութիւն շրթունք արդարք, իսկ որք ՚ի վեր հանեն զբանբասանս, անդդամք են: Շատախօս լինելով ոչ զերծցիս ՚ի մեղաց, եթէ խնայես ՚ի շրթութունս քո, իմաստուն լինիս: Արծաթ ընտիր է լիզու իմաստնոյ, սիրտ ամբարշտի նուաղեցի: Շրթունք արդարոց ճանաչեն զբարձունս, իսկ անզգամք ՚ի կարօտութեան սատակեցի: Օրհնութիւն Տեառն ՚ի զլուխս արդարոց և նոյն մեծացուցանէ, և ոչ ևս յաւելանայ տրամութիւն ՚ի սիրտ նորա: Ծիծաղելով գործէ անզգամն զչարիս, իսկ իմաստութիւն առն նիւթէ զհանձար: Ի կորստեան շրջի ամբարիշտն, ցանկութիւն արդարոց ընդունելի է: Ի յանցանել մրկի՝ եղծանի ամբարիշտն, և արդարոյն խոյս տուեալ՝ կեցցէ յաւիտեան: Որպէս ազոխ ատամանց փնասակար է և ծուխ աչաց, նոյնպէս և անօրէնութիւն, որոց նովաւ վարիս Երկիւղ Տեառն յաւելու զաւուրս, ամք ամբարշտաց նուազեցին: Յերկարի արդարոց ուրախութիւն, յոյս ամբարշտաց կորիցէ: Սմրութիւն արդարոց երկիւղ Տեառն, և խորտակումն այնոցիկ, որք գործիցեն զչարիս: Արդարն յաւիտեան ոչ սասանեսցի և ամբարիշտք մի՛ բնակեցին յերկրի: Բերան արդարոյ բզխէ զիմաստութիւն, լեզու անիրաւ ի սատակեցի: Շուրթունք արանց արդարոց կաթեն շնորհս, բերան ամբարշտաց կործանի:

ՍՐԲՈՅ ԱՒԵՏԱՐԱՆԻՍ ՅԻՍՈՒՄԻ ԲՐԻՍՏՈՒԹ

որ ըստ մատթէոսի:

Գլուխ. Գ. 1—17:

Յաւուրսն յայնտիկ դայ Յովհաննէս մկրտիչ քարոզել յանապատին Հրէաստանի: Եւ ասել. ապաշխարեցէք զի մերձեալ է արքայութիւն երկնից: Չի սա՛ է, վասն որոյ ասացաւ ՚ի ձեռն Եսայեայ մարգարէի, որ ասէ. ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զճանապարհս ճեառն, և ուղիղ արարէք զչաւիղս նորա: Եւ ինքն Յովհաննէս ունէր զհանդերձս ՚ի ստեոյ ուղտու, և դօտի մաշկեղէն ընդ մէջ իւր, և կերակուր նորա էր մարախ և մեղր վայրենի: Յայնժամ ելանէին առ նա ամենայն Երուսաղէմացիք. և ամենայն Հրէաստան, և ամենայն կողմն Յորդանանու: Եւ մկրտէին ՚ի նմանէ ՚ի Յորդանան, և խոստովան լինէին զմեղս իւրեանց: Եւ տեսեալ զբազումս ՚ի սաղակիցւոցն և ՚ի փարիսեցւոց եկեալս ՚ի մկրտութիւն նորա, ասէ ցնոսա. ճնուողք իժից՝ ո՞ եցոյց ձեզ փախչել ՚ի բարկութենէն՝ որ դալոցն է: Արարէք այսուհետեւ պտուղ արժանի ապաշխարութեան: Եւ մի համարիցիք ասել յանձինս՝ թէ ունիմք մէք հայր զԱբրահամ. ասեմ ձեզ. զի կարող է Աստուած ՚ի քարանցս յայսցանէ յարուցանել սրղիս Աբրահամու: Զի ահաւասիկ տապար առ արմին ծառոց զնի. ամենայն ծառ, որ ոչ առնէ զպտուղ բարի, հատանի և ՚ի հուրարկանի: Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխարութիւն, բայց որ զինի իմ գայ՝ հզօրագոյն է քան զիս. և ես չեմ բա-

ւական բառնոյլ զկօշիկս նորա, նա մկրտեսցէ՝ զձեզ 'ի  
Հոգին Սուրբ և 'ի հօր: Արոյ հեծանոցն 'ի ձեռին իւ-  
րում, և սրբեսցէ զկալ իւր, և ժողովեսցէ զցորեանն  
'ի շտեմարանս իւր, և զլարդն այրեսցէ անշէջ հրով:  
Յայնժամ գայ Յիսուս 'ի Գալիլիէ 'ի Յորդանան առ Յով-  
հաննէս մկրտիլ 'ի նմանէ: Եւ Յովհաննէս արգելու զնա՝  
և ասէ. ինձ պիտոյ է 'ի քէն մկրտիլ՝ և դու առ իս  
գաս: Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա, [Թոյլ տուր  
այժմ, զի այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդա-  
րութիւն, և սպա [Թոյլ ետ նմա: Եւ իբրև մկրտեցաւ  
Յիսուս, ել վաղվաղակի 'ի ջրոյ անտի, և ահա բացան  
նմա երկինք, և ետես զՀոգին Աստուծոյ, զի իջանէր  
իբրև զաղաւնի, և գայր 'ի վերայ նորա: Եւ ահա ձայն  
յերկնից՝ որ ասէր. դա՛ է. Արդի իմ սիրելի, ընդ որ հա-  
ճեսցայ:

ՍՐԲՈՅ ԱԻԵՏԱՐԱՆԻՍ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

որ ըստ մարկոսի:

ԳԼ. ԺԴ. 1—25:

Եւ էր զատիկ և բաղարջակեր, յետ երկուց ա-  
ւուրց խնդրէին քահանայապետքն, և դպիրք՝ եթէ զի-  
մրդ զնա նենգութեամբ կալեալ սպանանիցեն: Բայց  
ասէին թէ մի՛ 'ի տօնիս աստ, զի մի՛ խռովութիւն լինի-  
ցի 'ի ժողովրդեանն: Եւ մինչէր 'ի Բեթանեայ՝ 'ի տան  
Սիմօնի բորտի բաղմեալ, եկն կին մի, որ ունէր շէշ  
իւղոյ նարդեան ազնիւ մեծագոյն, և բեկեալ զշէշն,  
եհեղ 'ի վերայ գլխոյ նորա: Եւ աշակերտքն զչարէին

և ասէին: ընդէր եղև կորուսա իւղոյդ այդորիկ: Մարթ  
էր զայդ իւղ վաճառել աւելի քան զերեք հարիւր դա-  
հեկանի, և տալ աղքատաց, և զայրանային նմա յոյժ:  
Եւ Յիսուս ասէ ցնոսա. թոյլ տուք զմա, զի՛ աշխատ  
առնէք: զի գործ մի բարի գործեաց դա յիս: Յամենայն  
ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք և յորժամ կամիք՝  
կարող էք առնել նոցա բարիս. այլ զիս ոչ յամենայն  
ժամ ընդ ձեզ ունիք: Դա զոր ունէր, արար. յառա-  
ջագոյն խնկեաց զմարմին իմ՝ ի նշան պատանաց: Ամէն  
ասեմ ձեզ. ուր և քարոզեսցի աւետարանս այս ընդ  
ամենայն աշխարհ, և զոր արար դա՛ խօսեսցի յիշա-  
տակի դորա: Եւ Յուդա Իսկարիօտացի մի յերկոտասա-  
նից անտի, զնաց առ քահանայապետսն զի մտանեսցէ  
զնա նոցա:

Նորա իբրև լուան՝ խնդացին և խոստացան տալ  
նմա արծաթ, և խնդրէր թէ զիմորդ պարագով մատ-  
նեսցէ զնա: Եւ յառաջնում՝ առուր բաղարջակերացն,  
յորում զպասէքն զենուին, ասեն ցնա աշակերտքն: Ուր  
կամիս՝ երթիցուք՝ պատրաստեսցուք՝ զի կերիցես զզա-  
տիկն: Եւ առաքէ երկուս յաշակերտաց անտի՝ և ասէ  
ցնոսա, երթայք ՚ի քաղաք, և իբրև մտանիցէք ՚ի քաղա-  
քն, պատահեսցի ձեզ այր մի, որ սափոր ջրոյ յունն ու-  
նիցի, երթայք զհետ նորա: Եւ յոր տուն մտանիցէ, ա-  
սասջիք ցտանուտէրն. վարդապետն ասէ՝ ուր են իջե-  
ւանքն իմ, ուր աշակերտօքս ուտիցեմ զզատիկն: Եւ  
նա ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ զարդարեալ. անդ  
պատրաստեսջիք մեզ: Եւ զնացին պատրաստել աշա-  
կերտքն նորա. եկին ՚ի քաղաքն և գտին որպէս ասացն

նոցա, և պատրաստեցին զլատիկն: Եւ իբրև երեկոյ և զև  
ղև, գայ երկոտասանիւքն հանդերձ: Եւ իբրև բաղմեցան,  
և դեռ ուտէին, ասէ, Յիսուս. ամէն ասեմ ձեզ, զի մի  
ոմն 'ի ձէնջ մատնելոց է զիս, որ ուտէ իսկ ընդ իս: Եւ  
նոքա սկսան տրամիլ և ասել մի ըստ միոջէ. միթէ ես  
իցեմ և միւսն միթէ ես իցեմ: Եւ պատասխանի ետ  
և ասէ ցնոսա. մի յերկոտասանից այտի, որ միեաց ընդ  
իս 'ի սկաւառակդ: Այլ որդի մարդոյ երթայ՝ որպէս  
զրեալ է վասն նորա, բայց վայ իցէ մարդոյն այնմիկ՝  
յոյր ձեռն որդի մարդոյ մնանեցի, լաւ էր նմա՝ թէ  
չէր ծնեալ մարդն այն: Եւ մինչդեռ ուտէին՝ առեալ  
Յիսուսի հաց, օրհնեաց և երեկ՝ և ետ նոցա և ասէ, ա-  
ռէք, այդ է մարմին իմ: Եւ առեալ բաժակ՝ զօհացաւ  
և ետ նոցա, և արբին 'ի նմանէ ամենեքեան: Եւ ասէ  
ցնոսա. այս է արիւն իմ նորոյ ուխտի, որ փոխանակ  
բազմաց հեղանի:

ՍՐԲՈՅ ԱԻԵՏԱՐԱՆԻՍ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

որ ըստ մատթէոսի:

Գլ. ԻԷ. 1—66

Իբրև այդ եղև՝ խորհուրդ արարին ամենայն քա-  
հանայապետք և ծերք ժողովրդեանն վասն Յիսուսի  
սպանանել զնա: Կապեցին զնա, և առին զնացին և ե-  
տուն 'ի ձեռն Պոնապացոյ Պիղատոսի դատաւորի: Յայն-  
ժամ տեսեալ Յուդայի որ մատնեաց զնա՝ թէ պարտա-  
ւորեցաւ՝ զղջացաւ, և դարձոյց զարժաթն առ քահա-  
նայապետն և ծերս ժողովրդեան: Եւ ասէ՝ մեղայ զի

մատնեցի զարինն արդար, և նորա ասին, մեզ չէ փոյթ,  
դու գիտես: Եւ ընկից զարծաթն 'ի տաճարն' և զնաց  
և չողաւ խեղդեցաւ: Իսկ քահանայապետիցն առեալ  
զարծաթն՝ ասնն, ոչ է արժան ընդունիլ զայդ 'ի կոր-  
բանն, քանզի գինք արեան են: Խորհուրդ առեալ գը-  
նեցին այնու զազարակն բրտի 'ի գերեզման օտարաց: Վա-  
սրն այնորիկ կոչեցաւ ազարակն այն՝ ազարակ արեան՝  
մինչև ցայսօր: Յայնժամ լցաւ՝ որ ասացաւ 'ի ձեռն Ե-  
րեմիայի մարգարէին՝ առին զերեսուն արծաթին զգինս  
վաճառելոյն, զոր առին յորդոցն Իսրայելի. եւ ետուն  
զնա յազարակն բրտի, որպէս հրամայեաց ինձ Տէր: Եւ  
Յիսուս եկաց առաջի դատաւորին, եհարց ցնա դատա-  
ւորն՝ և ասէ. դ՞ու ես թագաւորն չիւէից, և Յիսուս ասէ.  
դու ասես: Եւ 'ի չարախօսիլն նորա 'ի քահանայապետիցն  
և 'ի ծերոց, ոչինչ ետ պատասխանի: Յայնժամ ասէ ցնա  
Պիղատոս. ոչ լսես՝ որչափ դոքա հակառակ քո վը-  
կայեն: Եւ ոչ ետ նմա պատասխանի՝ և ոչ բան մի  
մինչև զարմանալ դատաւորին յոյժ: Բայց ըստ տօնի  
սոյնոր էր դատաւորն արձակել Ժողովորեանն կապեալ  
մի, զոր կամէին: Ունէին յայնժամ կապեալ մի նշանա-  
ւոր՝ որում անունն էր Յեսու Բարաբբայ: Իբրև Ժողո-  
վեցան ասէ ցնոսա Պիղատոս. զո՞ կամիք յերկուց աստի  
զի արձակեցից ձեզ՝ զՅեսու Բարաբբայ, եթէ զՅիսուս  
զանուանեալն Բրիստոս: Քանզի գիտէր թէ առ նախան-  
ձու մատնեցին զնա: Եւ մինչդեռ նստէր յատենին, ա-  
ռաքեաց առ նա կինն իւր՝ և ասէ. չկայ ինչ քո և ար-  
դարոյն այնորիկ, զի բազում անցք անցին ընդ իս այսօր

յանուրջս վասն նորա: Իսկ քահանայապետքն և ծերք  
հաւանեցուցին զժողովուրդսն՝ զի խնդրեցին զԲարաբ-  
բայն և զՅիսուս կորուսցեն: Պատասխանի ետ դատա-  
ւորն՝ և աօէ ցնոսա զ՞ կամիք, զի արձակեցից ձեզ  
յերկոց այտի, և նոքա ասեն՝ զԲարաբբայ: Ասէ ցնոսա  
Պիղատոս իսկ զի՞ արարից զՅիսուս զանուանեալն Գր-  
րիստոս: Ասեն ամենքեան խաչեսցի, և նա աօէ զի՞նչ  
չար արար, և նոքա առաւել ևս աղաղակէին և ասէին  
խաչեսցի: Եւ տեսեալ Պիղատոսի՝ թէ ոչինչ օգնէ, այլ  
ասաւել խռովութիւն լինի, առեալ ջուր՝ լուաց զձե-  
ռքս առաջի ժողովրդեանն՝ և աօէ քաւեալ եմ ես յա-  
րենէ արդարոյդ պղծիկ, դուք գիտաջիք: Պատաս-  
խանի ետ ամենայն ժողովուրդն՝ և աօէ արիւն դորա  
'ի վերայ մեր և 'ի վերայ որդւոց մերոց: Յայնժամ ար-  
ձակեաց նոցա զԲարաբբայն, և զՅիսուս զան հարեալ  
ետ 'ի ձեռս, զի խաչեսցի: Յայնժամ զինուորք դատաւո-  
րին առին զՅիսուս յապարանս, և ժողովեցին 'ի վերայ  
նորա զամենայն զգուճչն: Մերկացուցին զնա և արկին  
զնովաւ քղամիդ կարմիր: Եւ բոլորեալ պսակ 'ի փշոց՝  
եղին 'ի գլուխ նորա, և եղեզն յաջոյ ձեռին նորա, 'ի  
ծունր իջեալ առաջի նորա՝ կտտակէին և ասէին. ողջ  
լնր, Թագաւոր չրէից: Եւ թքեալ 'ի նա՝ առնուին զե-  
ղեզն՝ և ձեծէին զգլուխ նորա: Եւ յորժամ ձողեցին  
զնա՝ մերկացուցին 'ի նմանէ զքաղամիդն՝ և աղուցին  
նմա զկեր հանդերձն և տարան զնա 'ի խաչ հասնել: Եւ  
ելեալ արտաքս՝ դտին զայր մի կիւրենացի անուն Սի-  
մոն, զնա կարան պահակ՝ զի բարձրէ զխաչն նորա: Եւ  
եկեալ 'ի տեղին անուանեալ Գողգոթայ, որ է տեղի կա-

ուսմելոյ: Ետուհն նմա զինի ընդ լեղի խառնեալ և իբրև  
 ճաշակեաց՝ ոչ կամէր ըմպել: Եւ հանեալ զնա՝ ի խաչ-  
 բաժանեցին զհանդերձս նորա վիճակաւ, զի լցցի բանն  
 որ ասացաւ ՚ի մարդարէէն: Բաժանեցին զհանդերձս իմ-  
 յիւրեանս՝ և ՚ի վերայ պատմուածանի իմոյ վիճակս ար-  
 կանեցին, եւ նստեալ պահէին զնա:

Եւ եղին ՚ի վերայ զլից նորա՝ գրեալ զՔրիստոս նորա, թէ  
 այս է Յիսուս թաղաւորն հրէից: Յայնժամ հանին ընդ  
 նմա ՚ի խաչ երկուս աւաղակս, մի յաջմէ նորա և մի յա-  
 հեկէ: Եւ որք անցանէինն, հայհոյեցին զնա, շարժեցին  
 զգլուխս իւրեանց, եւ ասէին. վահ որ քակեիր զաւ-  
 ճարն և զերիս աւազըս շինելից զնա, ապրեցո՛ւ զքեզ:  
 Եթէ որդի ես Աստուծոյ՝ էջ ՚ի խաչէդ: Նոյնպէս և քա-  
 հանայապետքն ձաղկին հանդերձ զպրօքն և ծերօք՝ և  
 ասէին զայլ ապրեցոյց, շինքն ոչ կարէ ապրեցուցա-  
 նել. եթէ թաղաւոր է իորայելի՛ն իջցէ այժմ՝ ՚ի խաչէդ՝ և  
 հաւատասցուք զմա: Եթէ յուսացաւ Աստուած, փրկեացէ  
 այժմ զդա՛: Եթէ կամի զդա, քանզի ասաց. եթէ Աստուծոյ  
 որդի եմ: Չնոյն և աւաղակքն՝ որք խաչեալ էին ընդ նմա,  
 նախատեցին զնա: Եւ ՚ի վեց ժամէ աւուրին խաւար եղև  
 ՚ի վերայ ամենայն երկրի, մինչև ցինս ժամ: Եւ զինն  
 ժաման Գոչեաց Յիսուս ՚ի ձայն մեծ՝ և ասէ. էլի է լի  
 լամաստաբարժանի. այսինքն է, Աստուած իմ, Աստուած  
 իմ, ընդէր թողէր զիս: Ամանք յայնցանէ, որք անդն  
 կային՝ իբրև լուան, ասին. զլեղիայ կարդայ: Եւ վաղ-  
 վաղակի ընթացաւ մի ոմն ՚ի նոցանէ՝ էառ սպունդ լի  
 քացախով՝ և յարեալ յիղեգան՝ ետ ըմպել նմա: Եւ  
 կէսքն ասէին. Թող՝ անցուք եթէ զայ Եղիայ փրկել

զրա: Եւ Յիսուս դարձեալ սղաղակեաց 'ի ձայն մեծ և արձակեաց զհոգին: Եւ ահա վարադոյր տաճարին ցե-  
լաւ յերկուս' 'ի վերուստ մինչև 'ի վայր, երկիր շարժե-  
ցաւ և վէմք պատանեցան. եւ գերեզմանք բացան և բա-  
զում մարմինք ննջեցերոց որոց յարեան: Եւ ելեալ 'ի գե-  
րեզմանացն՝ յետ յարութեանն նորա, մտին 'ի քաղաքն  
սուրբ, և երևեցան բազմաց: Իսկ հարիւրապետն՝ և  
որք ընդ նմա պահէին զՅիսուս՝ իբրև տեսին զշարժումն  
և զերեւալսն՝ երկեան յոյժ՝ և սսնն. արդարև Աստու-  
ծոյ որդի էր աս: Էին անդ կանայք բազումք, կային 'ի  
հեռաստանէ և հայէին, որք եկին զկնի Յիսուսի ի Գա-  
լիլիէ պաշտել զնա: Յորս էր Մարիամ Մագդաղենացի  
և Մարիամ Զակոբայ և Յոսեպ մայր և մայրն որդւոցն Զե-  
բեդեայ: Եւ իբրև երեկոյ եղև, եկն այր մի մեծատուն  
Յարիմաթեայ՝ որում անունն էր Յոսէփ, որ աշակեր-  
տեցաւ իսկ Յիսուսի: Սա մատուցեալ առ Ռիզատոս,  
խնդրեաց զմարմինն Յիսուսի յայժամ Ռիզատոս հը-  
րամայեաց տալ զմարմինն: Եւ առեալ զմարմինն Յոսէփ՝  
պատեաց սուրբ կտաւօք. եւ եղ 'ի նոր գերեզմանի՝ զոր  
փորեաց 'ի վիմի և թաւալեցուցեալ կափարիչ զբան գե-  
րեզմանին վէմ մի մեծ՝ և զնաց: Անդ էր Մարիամ  
Մագդաղենացի և միւս Մարիամն, նստէին հանդէպ գե-  
րեզմանին: Եւ 'ի վաղև անգր՝ որ էր յետ ուրբաթուն,  
ժողովեցան քահանայապետքն և փարիսեցիք առ Ռի-  
զատոս. եւ ասէն. Տէր յիշեցաք, զի մոլորեցուցիչն այն  
ասէր, մինչ կենդանի էր. թէ յետ երկց առուրց յառ-  
նեմ: Արդ հրամայեա զգուշանալ գերեզմանին մինչև  
ցերիս առուրս, դուցի: Եկեալ աշակերտքն գիշերի գո-

ղանայցեն զնա՝ և ասիցեն ժողովուրդեանն՝ թէ յարեալ  
'ի մեռելոց, և լինիցի յետին մոլորութիւնն չար քան  
զառաջինն: Ասէ ցնոսա Պիղատոս. ունիք զգորականս,  
երթայք զգուշացարուք՝ որպէս և գիտէք: Եւ նորա եր-  
թեալ զգուշացան գերեզմանին և կնքեցին զվէմն հան-  
դերձ զօրականօքն:

ՍՐԲՈՅ ԱԻԵՏԱՐԱՆԻՍ ՅԻՍՈՒՄԻ ԲՐԻՍՏՈՍԻ

որ ըստ մատթէոսի:

Ղ. ԻԸ. 1—20:

Եւ յերեկոյի շաբաթուն, յորում լուսանայր մի-  
աշաբաթին, եկն Մարիամ՝ Մագդաղենացի և միւս Մա-  
րիամն տեսանել զգերեզմանն: Եւ ահա շարժումն մեծ  
եղև, զի հրեշտակ Տիառն իջեալ յերկնից՝ մատուցեալ  
'ի բաց թաւալեցոյց զվէմն՝ 'ի դրանց անտի, և նստէր 'ի  
վերայ նորա: Եւ էր տեսիլ նորա իբրև զփայլակն և  
հանդերձ նորա սպիտակ իբրև զձիւն: Եւ յահէ անտի  
նորա խռովեցան պահապանքն և եղեն իբրև զմեռեա-  
լըս: Պատասխանի ետ հրեշտակն և ասէ ցկանայսն. մի  
երկնչիք դուք, գիտեմ զի զբիտուս զխաչելեալն խնդրէք:  
Չէ աստ, քանզի յարեալ, որպէս տացն, եկայք և տեսէք  
զտեղին՝ ուր կայր: Եւ վաղվաղակի երթայք ասացէք ա-  
շակիրտացն նորա. թէ յարեալ՝ և ահա յառաջանայ  
քան զձեզ՝ 'ի Քալիլեայ, անդ տեսանիցէք զնա, ահա ա-  
սացի ձեզ: Եւ ելեալ վաղվաղակի՝ 'ի գերեզմանէ անտի  
ահիւ և խնդութեամբ բազմաւ, ընթանային պատմել

աշակերտացն: Եւ ահա պատահեցաւ նոցա Յիսուս եւ  
ասէ՛ աղջ էք, եւ նոքա մատուցեալ կալան զոսս նորս  
եւ երկրպագին նմա: Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս. մի՛  
երկնչիք, երթայք ասացէք եղբարցն իմոց՝ զի երթիցնն  
ի Ղալիլեայ եւ անդ տեսցին զիս: Իբրև նոքա զնացին,  
ահա ոմանք ՚ի զօրականացն եկին ՚ի քաղաքն եւ պատմե-  
ցին քահանայապետիցն զամենայն, որ ինչ եղևն: Եւ  
նոքա ժողովեալ հանդերձ ձերօքն, խորհուրդ առեալ՝  
արծաթ յոյժ ետուն զօրականացն. եւ ասեն, ասասջիք եթէ  
աշակերտքն նորս եկեալ զիշերի, գողացան զնա՝ մինչ մեք ի  
քուն էաք: Եւ եթէ լուր լիցի այդ առ դատաւորն, մեք հա-  
ձեսցուք զնա՝ եւ զձեզ անհոգս արասցուք: Եւ նոցա առ-  
եալ զարծաթն՝ արարին որպէս ուսանն եւ ել համբաւս  
այս ի շրէից մինչև ցայսօր: Իսկ մատասան աշակերտ-  
քն զնացին ի Ղալիլեայ, ի լեառն, ուր ժամադիր եղև  
նոցա Յիսուս: Իբրև տեսին զնա՝ երկրպագին նմա, եւ  
ոմանք երկուացան: Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ  
ընդ նոսա եւ ասէ, տուաւ ինձ ա՛մենայն իշխանութիւն  
յերկինս եւ յերկրի, որպէս առաքեաց զիս հայր եւ ես  
առաքեմ զձեզ: Գնացէք այսուհետեւ աշակերտեցէք  
զամենայն հեթանոսս, Սկսուեցէք զնոսա յանուն Հօր, եւ  
Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Ուսուցէք նոցա պահել զա-  
մենայն՝ զոր ինչ պատուիրեցի ձեզ, եւ ահաուասիկ ես  
ընդ ձեզ եմ զամենայն առ ուրս, մինչև ի կատարած  
աշխարհի:

